



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.....	2
ՅԱՆՈՒՆ ՀԱԻՍՏԻ, ՅԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ՝ ՅԱՌԱ՛Ձ	2
ՀԱՐՅԱԶՐՈՅՑ.....	4
ՍԱՐԳԻՍ ԾԱՀԻՆԵԱՆ. «ՇՈԿԸ ԲԱԻԱՐԱ՞Ր՝ ԼՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ»	4
ԿԻՊՐԱՀԱՅ	9
«ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԾՆՈՐՀԱՆԴԷՍԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ՎԱՀՐԱՄ ԻԻԹԻՒՃԵԱՆ» ՍՐԱՀԻՆ ՄԷՁ.....	9
ԿԻՊՐՈՍԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԸ ԳՈՎԱԲԱՆԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԵՏ ԱՌԿԱՅ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ....	14
ՅԵՏ ՄԱՀՈՒ ԶՐՈՅՑ ՄԻԼՎԱ ԹԱՇՃԵԱՆԻ ՀԵՏ	15
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	17
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ	17
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ	17
ԱՆՀԻՄՆ ՊԱՏՐԱՆՔՆԵՐ.....	22
ԹՐԱՍՓԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ.....	24
ԱՐՏԱՑՈԼՈՂ ԵՂԵԼՈՅԹՆԵՐՈՒ ՀԵՏՔԵՐՈՎ.....	26
ԱԼԵԿՈՇԵԱԼ ԲՈՎԵՐԷՆ ԱՆԴԻՆ.	26
«ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՍՓԻՒՌՔԻՆ, ԹԷ՞ ՍՓԻՒՌՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ».....	26
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ	29
ՏԵՍԱԿԷՏ	31
ՅԻՇԵ՛ՆՔ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԸ ՈՒ ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿԸ	31
ԵՐԿԸՆՏՐԱՆՔՆԵՐԷՆ ԵՒ ՕՏԱՐԱՄՈԼՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ.....	31
ՀՐԱԺԱՐԵ՛ԼՈՒ ԺԱՍԸ.....	31
ՍԵՐՈՒՆԴ.....	35
ՀԱՅՈՒՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ.....	37
ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՅԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՕՐԷՆՔԻՆ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ.....	41
ԱՆՆԵՐԵԼԻ ԵՒ ՆՈՅՆՔԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ԿԸ ԳՏՆԵՄ ԳՈՐԾՈՂ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՆՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.....	43
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	46
ՓՈՒՆՁ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ	46
ԱՐՈՒԵՍԸ ԱՂԷՏԻ ԸՆԹԱՅՔԻՆ	52
ՏԻԳՐԱՆԻՆ ԱՌԻՆՔՆՈՂ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.....	53



(Վաստակատր կրթական մշակ, ներհուն մտատրական ԱԶԱՏՈՒՂԻ ԳԱԼԱՅՃԵԱՆ ՄԻՄՈՆԵԱՆԻ նամակը իր որդւոյն, անոր մահուան չորրորդ տարեկիցին առթիւ: Ա.Խ.)... 53

ՄՐՏԻ ԽՕՍՔ56

ԵՐԿՈՒ ԱՐՁԱՆԻՎՆԵՐՈՒ ՏՈՒՆԴԱՐՁԸ61

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ 63

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 66

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅԱՆՈՒՆ ՀԱԻԱՏԻ, ՅԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ՝ ՅԱՌԱ՛Ձ



Փետրուար ամսուան մէջ, հայ ժողովուրդը նորոգ գիտակցութեամբ եւ խոնարհումով կը նշէ Վարդանանց յիշատակը եւ անգամ մը եւս կը հաղորդուի անոնց անմեռ, յաւերժախօս պատգամով ու ոգիով: Քաջ Վարդանը, իր զինակիցներուն հետ միասին, հայ ժողովուրդին հետ բարախող այն զարկերակն է, որ չի մեռնիր երբեք, մինչեւ այն ատեն որ կ'ապրի հայութիւնը՝ իր լեզուով ու մշակոյթով, իր ինքնութեան գիտակցութեամբ ու արժանապատուութեամբ: Իր անկախութեան տենդ ու տենչով, իր պատմութեամբ ու տեսլականով: Իր ազգային ոգիով:

Վարդանանց պատերազմը, ըստ էութեան, պարսկական բռնապետութեան դէմ ուղղուած ազգային-ազատագրական ապստամբութիւն էր, որուն նպատակն էր՝ երկրի քաղաքական



անկախութեան եւ ընդամենը՝ երկու տասնամեակ առաջ կործանուած հայկական թագաւորութեան վերականգնումը, ժողովուրդի ազգային ինքնութեան ու քրիստոնէական կրօնքի պաշտպանութիւնը:

Աւելի քան 1570 տարի մեզ կը բաժնեն՝ Տոմոս գետի ափին տեղի ունեցած եւ ընդամենը միայն մէկ օր տեւած Աւարայրի ճակատամարտէն: Բայց հեռաւոր անցեալին մէջ պատահած այդ հերոսամարտը խոր հետք է թողած հայութեան պատմական յիշողութեան եւ ազգային գիտակցութեան մէջ: Ան դարձած է խորհրդանիշ՝ ապրելու, գոյատեւելու աննկուն ոգիի, հայրենասիրութեան մեծ խոյանքի, ազգային պատիւի պաշտպանութեան: Դարեր շարունակ, ան ոգեշնչեր է ազատաբաղձ հայ քաջորդիներու յաջորդական սերունդները, ամբողջ հայ ժողովուրդը, որ մանուկ հասակէն, դպրոցական առաջին տարիներէն, մանկապարտէզի գրասեղաններէն սորված է արտասանել՝ «Հայ եմ ես, հայ եմ ես, քաջ Վարդանի թոռն եմ ես, սարսափեցէք իմ դէմքէս...»:

Այդ ոգին թեւածեր է Աւարայրէն Մասուն ու Զէյթուն, Մուսա լեռ ու Հաճրն եւ ազգային-ազատագրական հերոսական սիրագործութիւններ է արձանագրեր հայոց պատմութեան էջերուն մէջ:

Այդ ոգին է որ ներշնչեր ու ոգեշնչեր է Անդրանիկներն, Նժդեհներն ու Մոնթեները, Մարդարապատի եւ Արցախի հերոսները, որոնց կրծքին տակ հայուն նոյն ազատաստենչ եւ աննկուն ոգին էր որ կը բոցավառէր՝ «Մեր արիւթեան մէջ վախկոտութիւն չխառնենք»:

Այդ ոգիով հայը պայքարեր է վառ պահելու Մեսրոպեան սրբազան ջախը իրերայաջորդ սերունդներուն մէջ՝ որդուց-որդի, նոյնիսկ յետ Եղեռնեան սփիւռքի կամ սփիւռքներու օտար, լայրձուն հողին վրայ: Հոն ուր գացեր է հայը՝ կառուցեր է դպրոց ու եկեղեցի, հիմներ է ակումբ ու մամուլ, իսկ էր է հայ գիրքը «կատաղօրէն, հացի պէս», անով հաղորդուելու հայ բառ ու բանին կենաց, անցեալէն դէպի ապագայ:

Այդ ոգիով է հայ մայրը հայոց այբուբենը դրոշմեր Տէր Զօրի շէկ աւագներուն վրայ իր կմախսացած ձեռքերով եւ զայն յանձներ է մատղաշ հոգիներուն որպէս հայոց փրկութեան լաստ ու թալիսման, հայոց լինելութեան երաշխիք:

Փոխուեր են բոնապետներն ու բոնապետիկները, Յազկերտն ու Յազկերտները, բայց նոյնն է մնացեր Վարդանի ու Աւարայրի ոգին կրող արի արանց խիզախ ու արժանապատիւ կեցուածքը: «Այս հաւատքէն մեզ ոչ ոք չի կարող խախտել. ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ սուրբ եւ ո՛չ հուրը, ո՛չ ջուրը եւ ո՛չ ալ որեւէ այլ դառն հարուած...»:

Նոյն այդ ոգին փայլատակեց 2020 թուականի 44-օրեայ ահեղ պատերազմին, երբ հայ զինուորը քաջաբար ելաւ առանձինն չորս պետութիւններու դէմ եւ իր կեանքին գնով պաշտպանեց հող հայրենին, բարձր պահեով ազգային մեր արժանապատուութիւնը:

Մի բուռ մնացած մեր հայրենիքը թշնամի պետութիւններով է շրջապատուած, որոնք ամէն ինչ կ'ընեն, ներկայիս եւս, զայն ոչնչացնելու համար, զայն թրքացնելու համար, իրենց գործակից ունենալով աշխարհաքաղաքական ոյժի տարբեր կեդրոններ: Վերջիններուն



համար, Հայաստանի անկախ եւ ինքնուրոյն գոյութիւնը ձեռնտու չէ երբեք: Համաշխարհայնացման ոյժերը գիշեր ու տիւ կը պայքարին որ հայ ազգէն, հայոց հայրենիքէն ջնջեն ազգային լեզուն, մեր հարուստ պատմութիւնը, մեր պատմական անցեալը, մեր սրբութիւններն ու խորհրդանիշները, ազգային եկեղեցին ու ազգային մշակոյթը, ազգային ինքնութեան բոլոր բաղադրաստարերը...

Մեծն Կոմիտաս վարդապետը ճշմարտացիօրէն կ'արձանագրէ. «Ազգի խնդիրը զուտ ապրելու մէջ չէ, այլ որպէս ԱԶԳ ապրելու»:

Պիտի յանձնուի՞ն արդեօք ՀԱՅԵՐԸ համաշխարհային քաղաքականութեան կեդրոններուն մշակած հայակործան ծրագիրներուն, որոնց մէջ տեղ չունին ազգային ամուր ինքնութիւններն ու մշակոյթները, ոչ ալ արդարութեան եւ ազատութեան համար հայութեան մղած բազմադարեան պայքարը: Անոնց օրակարգը ոյժի ցուցադրութիւնն ու ամրապնդումն է, ոյժի գերիշխանութիւնը բոլոր ոլորտներուն մէջ ալ: Մէկ խօսքով՝ ՈՅԾԻ ՄՊԱՌՆԱԼԻՔՆ ՈՒ ԲՌՆԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ, անոնց միջոցով՝ ցեղասպանութեան եւ հայրենագրկումի իրականացումը ամէնէն անողոք մեթոտներով:

Իսկ Վարդանանք եւ մեր բազմահազարամեայ փորձը կը յուշեն որ մեր ՊԱՅՔԱՐԸ յանուն մեր ազգային ինքնութեան, ազգային արժանապատուութեան եւ լինելութեան, յանուն հայրենիքի փրկութեան, յանուն հզօր պետականութեան կայացման դուլ ու դադար չունի եւ պէտք չէ ունենայ մեր ներքին ուժականութեամբ, մեր միասնականութեամբ եւ աննկուն ոգիով ամրապինդ:

Մենք պիտի յաղթենք ազգովին: Արդարութիւնը կրնայ հիւանդանալ, բայց ան երբեք պիտի չպարտուի մեր թաքուն թէ բացայայտ թշնամիներու թէ սուտ բարեկամներու ձեռամբ:

Քանզի՝ «Դարերը կ'անցնին, բայց Վարդանը քաջ, բայց Վարդանը սուրբ կ'երթայ միշտ յառաջ»:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԳՈՅՑ

ՍԱՐԳԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ. «ՇՈՎՐ ԲԱԻԱՐԱՐ՝ ԼՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ»



Յունուարի24ին, վարչապետ Փաշինեանի՝ 2 ուեյցարահայութեան հետ հանդիպման տես ազրութեան հրապարակումից յետոյ մեր հարցերի պատասխանները փորձեցինք գտնել Շուեյցարիայի հայկական եւ հայամէտ կազմակերպութիւնների խորհրդի նախագահ Սարգիս Շահինեանից: Ստորեւ՝ մեր զրոյցը:

– Պարոն Շահինեան, տեղեակ ենք, որ հանդի



**պման ժամը քանիցս փոխուել է: Ներկաները
յատո՞ւկ հրաւիրեալներ էին:**

-Նախնականը պիտի ժամը 18-ին կայանար, յետոյ ժամը փոխուեց՝ 16-ին դարձաւ, յետոյ՝ ժամը 11-ին եղաւ: Չեմ կարող ըսել, որ ժամի փոփոխութիւնը եղաւ մասնաւոր, որ աւելի քիչ մարդ գար: Ինքը Դավոսից առաւօտ շուտ մեկնեց Ցիւրիխ, ճանապարհը 2,5-3 ժամ է, յետոյ վերադարձաւ Երեւան: Չեմ կրնար բացառել, որ Նիկոլ Փաշինեանի՝ Դավոսից աւելի շուտ Ցիւրիխ մեկնելը, ուր որ շուեյցարահայ անհատների հետ երկու ժամանոց հանդիպումը եղաւ, պայմանաւորուած էր քաղաքական հանգամանքներով: Աւելի կանուխ Երեւան մեկնելը կը նշանակէ, որ մեր կողմէ ակնկալած հանդիպումները տեղի չունեցան: Ո՛չ Ալիեւի, ո՛չ էլ Շուեյցարիայի արտգործնախարար Ինեսսիօ Կասսիսի հետ: Հանդիպումները հրապարակուեցան վարչապետի էջին վրայ, ամենակարեւորը՝ ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղարի հետ հանդիպումն էր, ապա թէ ոչ, ճիշտն ասած, որեւէ գլխաւոր հանդիպում չտեսանք: Չեմ կարողանում հասկանալ, թէ ՀՀ կարեւորագոյն դէմքը, եթէ կարեւոր հանդիպումներ պիտի չունենար, ինչո՞ւ Դավոս եկաւ: Կրնամ երեւակայել, որ նպատակը որոշ պատգամ տալն էր, որ հայերէն ասած՝ «գոքանչին հետ խօսիլ, որ հարսը լսի» կը կոչուի: Այսինքն՝ ինքը բացայայտ գործածեց շուեյցարահայութեան հարթակը:

Չի կարելի ըսել, թէ ներկաները սփիւռքի ներկայացուցիչներ էին, այլ անձինք էին պատուաւոր, որ կը ներկայացնէին իրենց անձնական կամ հիմնադրամը, կամ կազմակերպութիւնը, սակայն ներկայացուցչութիւնը տկար էր: Չեմ կրնար նոյնիսկ ըսել, թէ հրաւիրուածները որոնք էին, գիտեմ, որ հրաւիրուածներ կային, այդ թում նաեւ ես, եւ պատրաստ էի թէ՛ ժամը 18-ին, թէ՛ 16-ին երթալու, բայց ժամը 11-ին նախնական ուրիշ պայմանաւորութիւններ ունէի, չկրցայ մասնակցիլ: Այն, ինչ վարչապետը հրապարակեց, տակաւին հարցականի տակ է, թէ ինչո՞ւ հրապարակեց: Ոչ որ մինչեւ այսօր, որ հոս է եկել (նաեւ ՀՀ նախագահը), նոյնիսկ ինքը, որ 2019-ին շուեյցարահայութեանը հանդիպել է, որեւէ ծպտուն չի հրապարակել, թէ ինչ է խօսուել: Եղել է մի քանի նախադասութեամբ տեղեկատուութիւն՝ վարչապետը հանդիպեցաւ շուեյցարահայ համայնքի հետ: Շատ ընդհանուր, առհասարակ չհրապարակելով խօսակցութեան մանրամասները:

**Վերջին շրջանում գերմանահայութեան, չեխահայութեան հետ վարչապետի հանդիպումներ
ի տեսագրութիւնները հրապարակուել են, նաեւ Հանրային հեռուստատեսութիւնն է դրանք եթ
եր տուել: Քանի ակնարկեցիք, որ նախկինում չէր հրապարակուել, կարելի է հասկանալ, որ
նախկինում եղել է չհրապարակման պայման:**

-Ես ներկայ չէի: Այն, ինչ ասում եմ 100-էն 100 ստուգուած չէ, բայց ներկայ 2 հաւաստի աղբիւրների միջոցով կարող եմ ասել, որ նախնական պայմանաւորութիւն կար, որ այն, ինչ պիտի խօսուէր, պիտի մնար այդ սրահին մէջ:

–Կարո՞ղ էք նրանց անունները տալ:

-Ոչ: Օպերատոր կար, մի քանի անկիւններից էր նկարահանուած: Օպերատորը չէր կրնար գաղտնի ընել, սակայն կրնար նկարահանել, եւ դա մնար վարչապետի անձնական արխիւում՝ որպէս փաստ: Մինչ վարչապետի հրապարակումը, շուեյցարահայերից որեւէ մէկը չէր հրապարակել: Որեւէ մէկն իրաւունք չունէր իր հեռախօսով դա նկարահանելու: Միւս կողմից էլ, նկարները տեսայ, ուրեմն քարացած օրէնք չէր: Հանդիպումը նախատեսուած 2,5 ժամի փոխարէն 2 ժամ տեւեց: Կեէս ժամ վարչապետն ուշացաւ: Վարչապետի հրապարակածը 1 ժամուայ ամփոփում էր:



–
Չգիտենք՝ հանդիպման սկզբում, թե՞ վերջում է խօսել ցեղասպանութեան մասին, սակայն ուրեւէ մէկը չի՞ արձագանգել վարչապետի ասածին:

-Ոչ: Որեւէ մէկը երեսը կամ համարձակութիւնը չունեցաւ Հայոց ցեղասպանութեան հարցականի տակ դնելուն հակազդելու:

–
Այնտեղ ներկայ շուեյցարահայերը արեւելահայերէնին լաւ տիրապետու՞մ են. Միգուցէ չեն հասկացել, թէ ինչի մասին է խօսքը:

-Արեւմտահայերէն իմացող որեւէ անձ չէր կրնար վարչապետի ասածը չհասկնալ, կամ տարբեր ձեւով հասկնալ: Ուղղակի մարդիկ չուզեցին բացել ի բաց հակազդել: Այնպէս չէ, որ հանդիպմանը որեւէ հակառակ տեսակէտ չի հնչել, բայց այս խնդրի շուրջ բոլորը լռեցին:

–
Այդտեղ ներկայ անհատները շուեյցարահայութեան տարբեր ձեռնարկներին թե՛ ֆինանսապէս, թե՛ բարոյապէս միշտ սատար են եղել՝ Փերինչեքի ժխտողականութեան արշաւին հակազդելու ժամանակ ու դրանից յետոյ: Նաեւ Արցախի հարցում են սատարել, այդպէս չէ՞:

– Բացարձակ մեծամասնութիւնը պատմական արդարադատութեան ի նպաստ է գործել: Բոլորը շատ յստակ, ամբողջովին սատարել են ամենակարեւոր պահերուն: Մակայն հիմա ինչ տեղի ունենում է, չեմ կարողանում տեղը բերել: Այս անձանց բացարձակ մեծամասնութիւնը արցախեան 2 -րդ պատերազմից յետոյ նաեւ արդարութիւն պահանջող դերի մէջ է եղել: Միշտ՝ թե՛ Բեռնում, թե՛ Մնեւում, թե՛ Ցիւրիխում, թե՛ Լիւցեռնում: Դժուարանում եմ երեւակայել, որ վարչապետի այս տեսակ քարոզչական մօտեցումը կարողացած լինի այս մարդկանց միտքը փոխել:

–
Պարոն Շահինեան, հանդիպման ներկաների մեծ մասը շուեյցարահայեր են, որոնց ծնողներն Արեւմտեան Հայաստանից են՝ Հայոց ցեղասպանութեան վերապրողների ժառանգներ: Եթէ որեւէթուրք կամ այլազգի ժխտող լինէր նրանց դիմաց, կարծիք արտայայտէր, կը հակազդէին, լուր չէին մնայ: Յունուարի24ի հանդիպմանը չխօսեցին, քանի որ դա իրենց համար անսպասելի էր, թե՞ այսպէս համարենք՝ յարգանք էր հայրենիքի ղեկավարի հանդէպ, որից չէին ակնկալում նման բան լսել:

-Ինչ կը վերաբերի ապշած լինելուն, չեմ բացառում: Կրնայ ըլլալ, որ մարդիկ իսկապէս շոկի տակ եղած ըլլան: Այն տեսակ անձեր կային, որ կարող էին մի խումբ թուրք ուտել ուղղակի, եթէ անոնց ձեռքերն ոճիրից արիւնոտ ըլլային: Մէկէն մէկ, երբ ոչ թէ ձեռք հակառակորդը, այլ ձեռք հանրապետութեան վարչապետն է այդ բանն ասում, կրնամ երեւակայել, որ մարդիկ գուցէ չհաւատացին իրենց լսածին: Եթէ հոն ըլլայի, խնդիրը քիչ մը տարբեր պիտի լինէր: Նախեւառաջ՝ ինչպէ՞ս կարելի է հարցականի տակ դնել հաւաքական յիշողութիւնը՝ հաշուի առնելով միմիայն ԽՍՀՄ 1939-1950 թուականները: Նոյնիսկ ամենատգետ անձն էլ գիտի, որ 39-ին ստալինեան բռնաճնշումների, սպանդի ժամանակն էր: Ե՞րբ սպանուեցաւ Եղիշէ Չարենցը՝ 1937-ին, ե՞րբ էր սպանուել Խորէն Մուրադբեկեան կաթողիկոսը, որ այս խնդրով զբաղուեցան: Ապրիլի 24-ի մասին՝ որպէս յիշողութեան օրուայ, առաջին անգամ հոչակած էր Գեորգ 5-երորդը 1921-ին: Ցեղասպանութիւն բառը դեռ չկար, Մեծ Եղեռնի մասին էր խօսքը:

–
Բայց ոճիրը միշտ անուն է ունեցել: Ցեղասպանութիւնը իրաւական բնորոշումն է: Մեծ եղեռն



ն, ջարդ, կոտորած, զուլում: Սփիւռքում շատ տարածուած Աղէտ բնորոշումը, ի յարգանս սփիւռքի,

2010ին գործածեց նաեւ գերմանացի բեմադրիչ Էրիկ Տրիդլերը «Աղէտ՝ մի ցեղասպանութիւն» վերնագրով համանուն փաստագրական ֆիլմում: Հրեաներն էլ ցեղասպանութիւն բառը չեն գործածում՝ Հոլոքոսթ, Ողջակիզում բառերին զուգահեռ կիրառում են Շոա ձեւը:

-Այն ակնարկը, թէ մեր մէջ պէտք է փնտռենք՝ ինչ է եղել, անիմաստութեան կամ տգիտութեան, կամ չհասկացողութեան, կամ հակառակորդի պարտադրած տեսանկիւնն է : Այն, ինչ հոս խոսուեց, հրապարակուեց, թէ սփիւռքում ինքը կարողացավ այդ խնդիրը ներկայացնել՝ իբր առանց անդրադարձի, այն եզրակացութեան գալ, որ նոյնքան դիրքին պիտի լինի անոր մասին խօսիլ հայրենիքում, սա իրապէս երեւակայութիւնից դուրս եւ իրականութեան խեղաթիւրման հետեւանք է: Հենց ՀՀ վարչապետից շատ դժուար պիտի լինէր սա լսել: Բայց այս տեսակ արտայայտութիւնը էթիկական, պատմագիտական, նոյնիսկ գիտական իրողութեան դէմ գնացող բան է, եւ ամենալաւ պատճառն է մեր հակառակորդների համար, որ մէջբերելով այս ասածները՝ փորձեն ազդել եւ համոզել, որ ցեղասպանութեան միջազգային ճանաչման ջանքերն անիմաստ են: Հայերէնը շատ զօրաւոր խօսք ունի՝ «մուխը մարել» կ'ըսեն: Արդէն դժուար վատուող մի բոց, մի կրակ մարում է: Չի կարող սա Փաշինեանի բուն ցանկութիւնը լինել:

Էլի Վիզելն ասում է՝ Ուրացումը ցեղասպանութեան վերջին արարն է: Աշխարհը, մեծ հաշուով, ճանաչում է Հայոց ցեղասպանութիւնը, եւ դա արել է հետագայ աղէտները կանխելու նպատակով: Հիմա ուրացման դուռը բացում է մեր տնից, կասկածը թափառում է սոցցանցային խոսույթում: Ինչպէ՞ս պիտի կանգնեցնենք:

-Ուղղակի մոռանա՞լ 1919-ի դատավարութիւնները, որոնք հենց թուրքերը մէջտեղ բերին, ոչ հայերը, եւ գլխաւոր պատասխանատուները մահուան դատապարտուեցան, որոնք յետոյ Գերմանիայի միջոցով առաջ նախ Մալթա կարողացան հասնիլ եւ յետոյ՝ Բեռլին: Սա մոռանալը կարծես խորհել կու տայ, թէ ում հետ է գործերնիս: Իհարկէ պէտք է շարունակել ինքզինքնիս հարց տալ՝ ի՞նչ տեղի ունեցաւ: Էլի Վիզելի ասածի մասին ուզում եմ յիշեցնել, որ եղած է նաեւ հրեաների, այլ ժողովուրդների հետ, որովհետեւ սա հոգեբուժական իրողութիւն է: Վիզելի ասածը միայն էթիկայի տեսակետից չէ, սա խորը ստուգուած հետազօտման ենթակայի իրողութիւն է: Սա անուն ունի, իրապէս հոգեխախտման ծանր վիճակ է: Մի ժողովուրդ չի կրնար գերծ մնալ սրանից, բայց որ դրանով հենց մեր վարչապետն է վարակուել, չեմ կրնար հասկանալ:

Յիշում եմ ձեր անձնական պատմութիւնը: Ցեղասպանութեան վկայ, վերապրող ձեր հայրը եւ Պոլսում դպրոց յաճախած ձեր մայրը առճակատուել էին, երբ վերջինս դպրոցում իր անցածն էր պնդել, թէ թուրքերին հայերն են սպանել՝ հաւատալով թուրքական դասագրքերում մատուցուածին: Որքան էլ Հայաստանի դպրոցում թերի ենք անցել հայ ժողովրդի պատմութիւն, այդուհանդերձ ունեցել ենք նաեւ վերապրողների բանաւոր փոխանցվող պատմութիւնը, սպրիլի

24-

ին Օիծեռնակաբերդում խոնարհուելու ամենամեայ աւանդոյթը: Կասկածե՞լ այս բոլորին...

-Եթէ վարչապետի ցանկութիւնն այն էր, որ մեր մէջ ատելութիւն ընդհանրապէս չսերմանուի, ինքը կարող էր այս խնդիրը լրիւ այլ անկիւնից բացատրել: Ուզում եմ յիշեցնել, որ նոյնիսկ արցախեան առաջին պատերազմի ամենասուր ժամանակ չընկանք այդ թակարդը: Ինչ որ Իլհամ Ալիեւը փորձեց ինստիտուցիոնալ ձեւով՝ հայերի հանդէպ ատելութիւն սերմանել:



—
Այս յայտարարութիւնը որեւէ ձեւով ազդելո՞ւ է շուէյցարացի քաղաքական գործիչների, պատգամաւորների եւ համայնքային կազմակերպութիւնների աշխատանքի վրայ: Երկար ժամանակ պայքարել էք թուրք ժխտողականութեան դէմ: Շուէյցարիայի արդարադատութիւնն էլ ժխտողին պատժելու հաստատականութիւնից չի հրաժարուել:

-Ինչ կը վերաբերի Հայոց ցեղասպանութեան յաջորդ կանտոնների պալատի կողմից ճանաչման հանգրուանին, ինչի տեսէն խորհրդարանական մեր բարեկամական խումբը ամիսներ ի վեր շատ հմուտ ձեւով աշխատանք է տանում, հաստատ դիրքին չի լինի: Բիարկէ ամէն բան պէտք է անենք, որ որեւէ կասկած տեղ չունենայ, պէտք եղած անձինք խօսին, որ պատգամաւորները ճիշտ կողմնորոշուին եւ ճիշտ որոշում առնեն: Բայց եթէ այս արտայայտութիւնը երկրորդուի՝ հենց ՀՀ վարչապետի, վարչախմբի, իրենց համախոհների կողմից, վստահաբար դա մեր գործը պիտի դժուարացնէ:

—
Արցախի բանաձեւի մասին: Ըստ միջազգային քրէական դատարանի դատախազ Օկամփոյի , Արցախում կատարուածը էթնիկ գտում չէ, ցեղասպանութիւն է: Հայութեանը բնաջնջելու արդրեջանաթուրքական միացեալ ծրագիրը կարծես իրականութիւն դառնալու շեմին էր: Ժնեւի կանտոնի բանաձեւը, Ազգային խորհրդում շուէյցարացի պատգամաւորների դեկտեմբերի 17-ի քուէարկութեան արդիւնքը, յունուարի 21-

ին արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի՝ հայերի Արցախ վերադարձին ի նպաստ քուէարկութիւնը յոյս են տալիս, որ մարտին Շուէյցարիայի օրէնսդրի վերին պալատում քուէարկութեան դրուելիք հայերի՝ Արցախ վերադարձի բանաձեւը մարդասիրական իրաւունքը գերակայ կը համարի: Շուէյցարացիները համոզուած են, որ բնաջնջման նպատակ է եղել, ուստի արցախահայերն իրենց բնօրրանից կամովին դուրս չեն եկել: ՀՀ վարչապետի ձեւակերպումները կարո՞ղ են ազդել քուէարկութեան արդիւնքի վրայ:

-Ինչ վերաբերում է արցախահայութեան հարցին, այն տոկուն հիմքի վրայ է: Կը վստահեցնեն, որ պէտք եղած քայլերը պիտի տարուին, որ քուէարկողները կարողանան համոզուած մնալ իրենց առնելիք ճիշտ որոշման հանդէպ: Վերին եւ ստորին պալատները նոյն ժամանակ են գումարում: Եթէ խնդիրը սահմանափակուած մնայ հայկական տիրոյթում, չեն կարծում, որ հոն սա առնչութիւն կ'ունենայ: Սակայն իմանալով, որ մեր հակառակորդներն ինչպէս պիտի կրնան գործածել այս արտայայտութիւնները, կրնամ երեւակայել, որ կ'աւելանան բացասական քուէները, հակառակ որ շատ նուազ էին այդ տեսակ մօտեցման կողմնակիցները:

—Շուէյցարիայում Ադրբեջանի եւ Թուրքիայի դեսպաններն որեւէ ձեւով արձագանգե՞լ են:

-Ոչ, որովհետեւ խակ է դեռ խնդիրը: Մանաւանդ որ վարչապետի ակնարկած հիմքը, թէ 1939-ին ցեղասպանութեան մասին չի խօսուել, ինչի վրայ ինքը կասկած է ստեղծել, այնքան երկրորդական, երրորդական նշանակութիւն ունեցող է, որ նոյնիսկ մեր հակառակորդն է դժուարանում դրա վրայ իրողութիւն սարքել: Սակայն, եթէ վարչապետն աւելի հեռուն գնայ՝ ցեղասպանութիւն եղե՞լ է, թե՞ ոչ, հոն արդէն խնդիրները կը փոխուին: Հոն է, որ պէտք է վախնանք: Բայց սա նախաբանն էր, որից լաւ հոտ չի գալիս:

Հարցազրոյցը վարեց ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓԵԱՆԸ

«ԱԶԳ»

ԿԻՊՐԱՀԱՅ

«ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ՎԱՀՐԱՍ ԻԹԻԻՃԵԱՆ» ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Շաբաթ 22 Փետրուար, 2025, երեկոյեան ժամը 7:00-ին, կիպրահայ գրասեր հանրութիւնը հաւաքուած էր Կիպրոսի Առաջնորդարանի «Վահրամ Իթիւճեան» սրահին մէջ, ներկայ գտնուելու՝ Երան Գույումճեանի «ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» գիրքի Շնորհանդէսին: Ձեռնարկը կը վայելէր հովանաւորութիւնը Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեանի եւ նախագահութիւնը կիպրահայ Պետ. Ներկ. Տէր եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեաններու: Ներկայ էին յարգարժան ներկայացուցիչներ թեմիս Պատգամաւորական եւ Վարչական ժողովներու, համայնքիս ազգային-կուսակցական, կրթական, մշակութային եւ բարեսիրական կառոյցներու եւ կազմակերպութիւններու: Կիպրահայ գրասեր հանրութիւնը՝ անտեսելով սաստիկ ցուրտը, համախմբուել էր ըմբռնուելու հայ գրական-գեղարուեստական վայելքի պահեր... Բովանդակալից խօսքով հանդէս եկաւ



հրապարակախօս, հրատարակիչ Պրն. Եղիա Գայայեան, որ յատկապէս ըսաւ, թէ թուայնացած հեղեղին մէջ, գիրքը կը հեռանայ մեզմէ կամ մենք կը հեռանանք գիրքէն: Ան աւելցուց, որ բարեբախտաբար այնքան մտայլ չէ կիպրահայ հանրութեան վիճակը, ուր «հաստատուելէս ի վեր, աւելի քան երկու տասնեակ գիրք հրատարակելու պատիւը ունեցայ, յատկապէս գիրքեր գրած, խմբագրած, ստեղծագործած...երեք անձերու՝

Վարուժան Սրբազանի, Վարդան Թաշճեանի եւ Երան Գույումճեանի, որոնք տասնամեակներ շարունակ հաստատուն կերպով կեցած են հայ գիրքի, հայ մամուլի, հայ գրականութեան պատնէշին վրայ:...Այսօր լոյս կը տեսնէ Երան Գույումճեանի հինգերորդ գիրքը, ուր տեղ գտած են իր յուշագրութիւնները, «Փարոս», «Ազատ Ձայն» եւ առցանց «ԱզատԽօսք» թերթերու մէջ լոյս տեսած խմբագրականներ, Խօսքեր կամ Բանախօսութիւններ եւ վերջին տարիներու բանաստեղծութիւններ...»: Յարգելի բանախօսը մեջբերելով «ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» գիրքի Յառաջաբանէն, նշեց. «Երբ կը հասնիս կեանքիդ մայրամուտին, կը փորձես վերաթեւորել անցած ուղիդ՝ իր վերիվայրումներով ու խորխորատներով, անկումներով ու վերելքներով, իղձերով ու երազանքներով, տագնապներով ու տուայտանքներով, իր ամպամած թէ արեւաշող օրերով ու պահերով... եւ անխուսափելիօրէն, տարիներու թանձր մշուշէն կը վերյառնեն դէմքեր ու դէպքեր, որոնք

իրենց անջնջելի հետքը թողած են քու ներաշխարհիդ մէջ՝ զիտակից թէ անգիտակից: Յիշողութեան մասունքներ, որոնք կազմաւորեր են ինքնութիւնդ, դարձեր են խոհի եւ խորհրդածութեան գրգիռ, ապրումի եւ յոյզի թրթիռ, երեւակայութեան թոյլք ու խոյանք, մերթ՝ տագնապայոյց ցաւ ու մորմոք, մերթ ալ բերկրանք ոսկեշող, դարձեր են կեանքիդ անբաժանելի, անքակտելի մասը»: Ան իր իմաստալից խօսքը եզրափակեց ըսելով. «Գիրքը կը շարժի երբ իր տեղէն կը հանենք: Գիրքը շունչ կ'առնէ երբ կը բանանք: Գիրքը կը սկսի շնչել երբ կը թերթենք: Գիրքը կ'ապրի մեր ձեռքերուն մէջ երբ կը կարդանք...Երանի կարենանք միշտ կարդալով գիրքը ապրեցընել»:



Անմիջապէս ետք, ելոյթ ունեցան Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ Երգչախումբի պատանիները եւ ներկաներուն հրամցուցին հայրենասիրական ոգեշունչ երգեր, խմբավարութեամբ Տիկ. Վիքի Գույումճեանի, դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Ալիսիա Ոսկանեանի, արժանանալով բոլորին ջերմ գնահատանքին եւ ընդունելութեան:



Այնուհետեւ, սրտի խօսքով հանդէս եկաւ հեղինակը՝ Տիկ. Երան Գույումճեան, որ յատկապէս ըսաւ. «Գրականութիւնը ընդհանրապէս եւ բանաստեղծութիւնը յատկապէս՝ մարդ էակը կ'ազատագրէ նիւթապաշտութեան, շահամոլութեան գորշ ճահիճէն եւ անոր կը փոխանցէ այն հոգեւոր, բարոյական արժէքները, որոնք բուն իմաստն են մարդկային կեանքին...: Մարդը, արդարեւ, միայն ֆիզիքական գոյութիւն չէ, ռոպոթ կամ արհեստական բանականութիւն չէ, այլ մանաւանդ ՀՈԳԻ Է, ԽԻՂՃ Է, ՍԻՐՏ Է, որոնց արտայայտութիւն կու տայ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, պեղելով մարդկային ներաշխարհը, անոր իղձերն ու երազանքները, յոյզերն ու ապրումները, սէրերն ու կարօտները, խռովքներն ու ցաւերը, տազնապներն ու տուայտանքները...: Բանաստեղծութիւնը, յատկապէս, ամենէն անկեղծ գրոյցն է մարդկային ՀՈԳԻՒՆ հետ: Ան ԱՂՕԹՔ է, բառիս ամենալայն իմաստով»: Ան շարունակեց ըսելով. «Գրելը ինծի համար իմ ներքին կանչիս ու մղումիս արձագանգն է...: Մերթ՝ պոռթկում է ան ամէն տեսակ չարեաց դէմ, մերթ ալ պանծացումն ու փնտռուքն է բարիին, գեղեցիկին որ կայ բնութեան ու տիեզերքին մէջ, մարդկային հոգիին մէջ...Սրտաբաց գրոյց է ան իմ կողքի մարդուն հետ, իմ հայրենակիցին ու ընթերցողին հետ, անկեղծ խոստովանանքի պէս: Եւ դեռ՝ Մեծապանչին հետ ամէնպահեայ ժամադրութիւն է, անոր ոսկեղենիկ բառերուն արբեցումն է, հոգեմտաւոր խրախճանքի ապրում է անփոխարինելի...եւ կաթիլով մը գոնէ՝ հայապահպանման սուրբ գործին իմ ամենէն խոնարհ լումաս ներդնելու անսահման երջանկութիւն...»: Տիկ. Երան Գույումճեան համառօտակի ներկայացուց ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ ժողովածուին երեք մասերը՝ Յուշագրութիւն, Հրապարակագրութիւն եւ Բանաստեղծութիւններ եւ իր խօսքը եզրափակեց, ըսելով.

Եւ այժմ, հարց կու տամ ես ինծի.- «Ի՞նչ մնաց. Կեանքէն ինծի ի՞նչ մնաց», բանաստեղծ Թէքէեանի անմահ բառերով: Եւ անմիջապէս կը պատասխանեմ ճիշդ իրեն պէս եւ խոնարհաբար.- «Ի՛նչ որ տուի ուրիշին, տարօրինակ, ա՛յն միայն».- Իսկ ես տուածովս երջանկացայ, ճախրեցի անհուն երկինքն ի վեր, շնչելու օդը անապական, ըմպելու



արեւալոյսը անյագօրէն եւ սիրավարար եւ միշտ տենչացի այդ երջանկութենէն, այդ բերկրանքէն ձեզի բաժին հանել տո՛ղ առ տո՛ղ, բա՛ն առ բա՛ն...

Եւ, վերջապէս, սիրելիներ, երագանքս, բաղձանքս եւ աղօթքս է որ ՀԱՅ ԳԻՐՆ ու ՀԱՅ ԳԻՐՔԸ մշտապէս շարունակեն իրենց Մեսրոպաւանդ առաքելութիւնը, յոյս ու լոյս, հաւատք ու սէր ճառագեն մեր սիրտերէն ներս, մեր տուներուն մէջ, նորահաս սերունդին մօտ յատկապէս: Անոնք մեր գոյապայքարի, մեր հայ մնալու գլխաւոր զենքերն են: Միշտ պիտի յիշենք որ նոյնիսկ երբ թուղթն ու գրիչը պակսեցան Ցեղասպանութեան դժոխքին մէջ, հայ մայրը հայոց ԱՅԲՈՒԲԵՆԸ դրոշմեց Տէր Զօրի շէկ աւագներուն վրայ որպէս հայուն փրկութեան լաստ, որպէս հայուն լինելութեան եւ ոգեզինման երաշխիք:

Փա՛նք ու պատի՛ւ մեր ՄԵԾԱՍՔԱՆՉԻՆ:

Փա՛նք ու պատի՛ւ ՀԱՅ ԳԻՐ ՈՒ ԳԻՐՔԻՆ:

Փա՛նք ու պատի՛ւ զանոնք սնուցանող ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ, ձեզի՛ բոլորիդ, սիրելիներ: ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ»:

«ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» ժողովածուէն փոխն ի փոխ քերթուածներ արտասանեցին Տիկին Նայիրի Մուրատեան («ԱՐԱՐԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ», «ԱՂԱՊԱՏԱՆՔ ԱՌ ԿԵԱՆՔ», «ՏԱՐԻՆԵՐՈՒՍ ՇՇՈՒՆՉԸ»), Տիկ. Լորա Մկրտիչեան («ՀԱՅՅԵՐԵՆԻՍ» ԵՒ «ՀԱՅԱՍՏԱՆԻՍ»), Տիկ. Մարալ Ատուրեան («ՀԱՅՐԵՆԻ ՍԷՐ», «ՏԱԳՆԱՊ») ԵՒ »ՄՕՐՄ ՀԵՏ»), հոգեյոյզ ապրումներով եւ սրտառուչ հայրենասիրական զգացումներով, արժանանալով ներկաներուն ջերմ զնահատանքին:





Գինեձօնի տպաւորիչ արարողութիւնը կատարեց Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեան, որ այնուհետեւ իր օրհնութեան խօսքով բարձր գնահատեց Երան Գույումճեանի բանաստեղծական աշխարհը յատկապէս, նշելով որ ան՝ ըլլալով բանաստեղծ եւ արձակագիր, արժանի է կոչուելու «ԲԱՌԱԿԵՐՏ ԱՇՈՒՂ»...«Ան աշուղ է խօսքի, գեղեցիկ բառերու, իր մտածումներուն, խոկումներուն եւ ապրումներուն

համար յարմար եւ նորանոր բառերու կերտումով...»: Ան մեր հարստութիւնն է, նշեց Սրբազանը, մեր գաղութին, միութեանց, եկեղեցիին, երգչախումբին, մեր հարստութիւններու, մեր խորհրդանիշներու բանաստեղծ երգիչը, եւ մենք պիտի գիտնանք գնահատել ու մեծարել զինքը:..Ապա՝ Պահպանիչ աղօթքով եզրափակեց այս խորապէս տպաւորիչ Երեկոն:



Ներկաները դեռ երկար յամեցան հիւրասիրութեան սեղաններու շուրջ, ստացուած գիրքերը մակագրել տալով հեղինակին եւ ընկերական զրոյցներու շուրջ, դժուարութեամբ բաժնուելով ստեղծուած տաք, անկեղծ եւ հայեցի մթնոլորտէն:

Ե.Գ.

ԿԻՊՐՈՍԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԸ ԳՈՎԱԲԱՆԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԵՏ ԱՌԿԱՅ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ



Երկուշաբթի Փետրուար 24ին, առաւօտեան ժամը 10ին, Կիպրահայ Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերշ. Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոս Օհանեան, ընկերակցութեամբ Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի, Գերապատիւ Տէր Յովհաննէս Ծայրագոյն Վարդապետ Սաղտըճեանի եւ Երեսփոխանական Ժողովի Ատենապետ Վահան Այնէճեանի, քաղաք ավարական այցելութիւն մը կատարեց Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Ն.Վ. Նիկոս Խրիստոտուլիտիսին:

Կէս ժամ տեւող հանդիպումի մը ընթացքին արծարծուեցան կիպրահայ համայնքը յուզող տարբեր հարցեր:

Նախագահ Նիկոս Խրիստոտուլիտիս ըսաւ թէ ան հպարտ էր Կիպրահայ համայնքին բերած ներդրումին Կիպրոսի Հանրապետութեան, մանաւանդ անոնց պատմութենէն քաղուած դասերուն համար:

«Մենք հպարտ ենք որ անոնք կը սատարեն Կիպրոսի պետութեան եւ մենք հոս ենք ընելու այն ամէնը, ինչ անհրաժեշտ է պահպանելու եւ աւելի եւս ամրացնելու, զարգացնելու Հայկական ժառանգութիւնը: Դուք նաեւ կարեւոր դերակատարութիւն ունիք նոր սերունդին նկատմամբ, որպէսզի Հայկական Համայնքը Կիպրոսի մէջ ունենայ շարունակականութիւն եւ հզօրացում», ըսաւ նախագահը:

Կոմիտաս Արքեպիսկոպոսը յղում ըրաւ այն պատմական դարաւոր կապերուն որոնք միշտ առկայ են եղեր Կիպրացի Յոյներուն եւ Հայութեան միջեւ: Ան կիպրահայութեան անունով երախտագիտութիւն յայտնեց այն պետական ազնիւ աջակցութեան որ կը ցուցաբերուի

հայկական համայնքին, անոր եկեղեցիներուն, դպրոցներուն, հաստատութեանց եւ կազմակերպութիւններուն:

Մրտի խոր կսկիծով յուղարկաւորեցինք ՄԻԼՎԱ ԹԱՇՃԵԱՆԸ՝ թանկագին կողակիցը վաստակաւոր կրթական մշակ, գրող, հրապարակախօս, տաղանդաւոր գեղանկարիչ Վարդան Թաղճեանի՝ 15 Փետրուար 2025-ին, Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցոյ մէջ: Եկեղեցոյ արարողութենէն ետք, հանգուցեալի մարմինը ամփոփուեցաւ Այեռու Տոմթիոսի նոր գերեզմանատան մէջ: Հետեւեալ գրութիւնս կը նուիրեմ իր անթառամ յիշատակին, որպէս փունջ մը ծաղկեփունջ իր շիրիմին:

ՅԵՏ ՄԱՀՈՒ ԶՐՈՅՑ ՄԻԼՎԱ ԹԱՇՃԵԱՆԻ ՀԵՏ



Որքան ծանր է յետ-մահու քանի մը սրտաբուխ խօսքով զրուցել քեզի հետ, երբ ա՛լ չկաս գոնէ այս կեանքին մէջ...Դուն որ կեանքով կ'եռայիր, կեանքով կը խայտայիր...Դժուար է պատկերացնել երկու հակադիր իրականութիւններ՝ Սիլվա եւ անշարժութիւն, Սիլվա եւ լռութիւն...Անհաւատալի, անըմբռնելի, անհամատեղելի: Կեանքի եւ մահուան դառն առեղծուած:

Այս վերջին շաբաթներուն յատկապէս, երբ իմացայ չարանենգ, անողոք հիւանդութիւնը որ կը սպառնար կեանքիդ ու արեւիդ...մտովին միշտ քեզի, քեզի եւ Վարդանին հետ էի կարօտաբաղձ ապրումներովը մեր ապրած երանաւէտ օրերուն:

Կը յիշե՞ս...մեր ծանօթութեան առաջին պահը, Քայրինիոյ գեղածիծաղ մէկ ափին, երբ այնքան երիտասարդ էինք, տակաւին քսանամեայ, կեանքի աւիշող յորդուն, անոր արեւով արբշիռ...Աչքերուդ սեւ փայլը սեւեռեցիր աչքերուս եւ սիրտէ սիրտ ծիածան մը կամարուեցաւ մեր միջեւ...

Այն օրէն անցեր են աւելի քան կէս դար, բայց ամուր բարեկամութիւն մը մեզ կապեց իրարու ժամանակի թաւալքին հետ եւ մնաց անխախտ, նոյնիսկ երբ ամիսներ շարունակ չէինք տեսներ զիրար: Դուն եւ Վարդանը, Սօսին եւ Հայրապետը դարձաք մեր ամենէն մտերիմները...

Այնքան կ'ուզէի վերջին անգամ մը գէթ քեզ տեսնել, բայց իմացայ որ հիւանդութեանդ վերջին ծանր օրերուն, չէիր ուզեր տեսնել նոյնիսկ զաւակներդ եւ սիրասուն թոռներդ, գուցէ անոր համար որ անոնք քեզ յիշեն քու իսկական էութեամբ՝ կենսախինդ, կենսատրոփ, համակ կեանք ու խանդավառութիւն, համակ սեր ու նուիրում, թովոռն ու խնդուն...

Ներքին հպարտութիւնդ չէր ալ արտօներ որ քեզ տեսնէին, քեզ տեսնէինք տկար, անօգնական ու տառապակոծ վիճակի մը մէջ: Այդպէս էիր, այդպէս մնացիր:



Ստոյիկեան իմաստասիրութիւնը կ'արձանագրէ. «Մահը չէ ամէնէն մեծ կորուստը, այլ՝ այն կեանքը զոր չկրցար ապրիլ երբ ողջ էիր»:

Իսկ դուն, սիրելի Միլվա, ապրեցար լիարիւն, լիայորդ ու լիարժէք կեանքով: Չեմ ճանչցած քեզ երբ փոքր էիր, դուն՝ Կիպրոս, ես՝ Լիբանան: Բայց կեանքդ Վարդանին հետ կապելէ ետք, որքա՛ն անմոռաց, յիշատակելի, ամբողջ կեանք մը լեցնող պահեր բաժնած ենք միասին: Քու տանդ ջերմ յարկին տակ, Մելգոնեանի անտառախիտ տարածքին վրայ բացուող ռոմանթիք պատշգամին վրայ, Լառնագայի գողտրիկ տանդ մէջ, բարեկամներու եւ մեր տուներէն ներս, տարբեր ճաշարաններու մէջ, բայց մանաւանդ բնութեան ծոցին, լեռներու զովաշունչ լանջերուն ու յատկապէս Փաֆոսի լուսաճաճանչ ամիւրուն...որոնք դեռ գուցէ պահեն արձագանգը մեր քահ-քահ խնդուքներուն, լիաթոք ծիծաղի հնչիւններուն...Յունական Բարեկենդանի կամ «կաթարի տէֆթերա»ի օրերը, տարեկան ուխտագնացութեան պէս սրբութեամբ պահպանուած սովորութեամբ, իսկական խրախճանքի օրեր էին մեր բարեկամական շրջանակին համար, անթառամ յուշերով եւ ապրումներով անուշցած...

Ապրեցար լիարժէք կեանքով մանաւանդ ձեր ընտանեկան տաքուկ օճախին մէջ, դարձար ամբողջական զօրավիզն ու թանկագին նեցուկը կեանքի ընկերոջդ՝ Վարդանին, որ միշտ ապրեցաւ ազգային-կրթական-գեղարուեստական-մշակութային հեւքով ու վազքով՝ օրը 24 ժամ, առանց բացառութեան: Դպրոց, նկարչութիւն, դասախօսութիւններ, ցուցահանդէսներ, երգչախումբի փորձեր, ժողովներ զիրար հրմշտկեցին շարունակ...Դժուար էր կեանքը, բայց համերաշխ սրտակցութեամբ յաղթահարեցիք ամէն դժուարութիւն եւ եղաք զիրար անսահմանօրէն սիրող երանելի, օրինակելի զոյգ մը: Ապառաժեայ թիկունք էիր Վարդանին, ամուր, անփշրելի կամքով ու սիրով: Նմանապէս, դարձար տիպար, նուիրեալ մայր դուստրերուդ՝ Թալինին եւ Նանօրին, ինչպէս նաեւ՝ ամբողջանուէր սիրով գուրգուրոտ մեծմայր թոռնիկներուդ՝ Քրիսթոֆըրին եւ Էրիքին: Տակաւին կային ռատիօժամի պարտականութիւններդ: Կեանքի քաղցր բեռը տարիր փառքով ու պատիւով, հայուհիի վայել տոկունութեամբ, անխոնջ ոգիով ու անսպառ եռանդով՝ ժպիտդ անպակաս, ճերմակին ճերմակ, սեւին՝ սեւ ըսող անկեղծութեամբ եւ յանդգնութեամբ, երբեմն նոյնիսկ խարազանող, դիպուկ եւ զգաստացնող խօսքով: Այսպէս կերտեցիք ձեր ընտանեկան երջանկութիւնը որ հիմնաքարը դարձաւ նորանոր յաջողութեանց, ի մասնաւորի Վարդանին նկարչական փայլուն, հպարտառիթ ցուցահանդէսներուն աշխարհով մէկ: Վարդանին հետ հաւասարապէս եւ թերեւս անկէ ալ աւելի վայելեցիր արդար բերկրանքը անոնց: Քու կողակիցիդ բառերով՝ «Յաջողութիւնը չէ երջանկութեան բանալին, այլ երջանկութիւնն է յաջողութեան բանալին»: Դուք միասնաբար շո՛ղ առ շո՛ղ եւ ա՛մպ առ ա՛մպ կերտեցիք այդ երջանկութիւնը, ձեր տքնաջան աշխատանքով, անկոտրում կամքով, անշեղ անհատականութեամբ ու սիրով, ինչ որ դուռը լայն բացաւ լուսաւոր յաջողութեանց:

Հանճարեղ պատանի բանաստեղծը՝ Պետրոս Դուրեան պիտի աղաղակէր.-

Էհ՛, մընաք բարով, Աստուած եւ արեւ,

Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ...

Աստղ մ՛ալ եւ կ՛երթամ յաւելուլ երկինք...

Հոգիդ որպէս աստղ պիտի փայլի մեր երկնակամարին վրայ ու մահ պիտի չունենայ: Պիտի փայլի իր թողած բարի հետքերով, քաղցր յուշերով, անսպառ ու աննկուն ոգիի ու կորովի ներշնչումով, երբեմն ալ կեանքի անարդարութեանց դէմ ընդվզող ըմբոստութեամբ: Պիտի ապրիս մեր բոլորին սիրտերուն մէջ:

Այս աշխարհէն անդարձ մեկնումիդ առիթով, իմ խորագգած ցաւակցութիւններս կը յայտնեմ քու սիրելի կողակիցիդ, Վարդանին, որ քեզ անհուն գուրգուրանքով խնամեց մինչեւ վերջին շունչդ, քու դուստրերուդ, թոռներուդ եւ անոնց պարագաներուն, հարազատներուդ, գործակիցներուդ... Աստուած մխիթարութիւն պարգեւէ կորուստիդ ցաւով կսկծահար բոլոր սիրտերուն: Հողը թեթեւ գայ վրադ, լոյսերու մէջ ննջէ հոգիդ: Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Երան Գույումճեան

10/2/2025

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ



Վերջին ամիսներուն աշխարհ ականատես կը դառնայ բախումի մը որ տեղի կ'ունենայ հին աշխարհակարգին ու նոր երեւցող աշխարհակարգին միջեւ: ԱՄՆ եւ դաշնակիցներ կ'առաջնորդեն հին աշխարհակարգը, իսկ Չինաստան, Ռուսիա եւ ՊՐԻՔՍ տնտեսական համախմբումի այլ երկիրներ կը գտնուին նոր աշխարհակարգը հաստատելու ձգտող համակարգին մէջ: Բախումը տեղի կ'ունենայ մեկէ աւելի մակարդակներու վրայ ու քանի մը ձեւերով: Ուրբանիա եւ Միջին Արեւելք կը մնան հիմնական վայրերը այդ բախումին նկատի առնելով որ անոնք կը գտնուին երկու բեւեռներու անդամ երկիրներու սահմաններուն վրայ: Տնտեսական, զինեալ եւ

տեղեկատուական մարզերը հիմնական միջոցներն են այդ բախումին: Միջին Արեւելքի պարագային քարտէսի վերաձեւումի մը հողովոյթը յստակ է: Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի միջեւ կնքուած Սայքս-Փիքօ համաձայնագիրի պարտադրած սահմաններու զծումէն անցած են 98 տարիներ: Ներկայիս ականատես կը դառնանք տագնապի մը Պաղեստինի, Լիբանանի, Սուրիոյ եւ Միջին Արեւելքի շատ մը երկիրներու մէջ: Տագնապին հիմնական պատճառը Իսրայելի վարած պաղեստինցիները խեղդելու եւ անոնց հողը գրաւելու քաղաքականութիւնն է: Իսրայել իրականութեան մէջ ըլլալով Արեւմուտքի



գաղութատիրական համակարգի բերդերէն մէկը, կը վարէ սանձարձակ քաղաքականութիւն ճնշելով շրջանի ժողովուրդները: Ուրիշ պատճառ մըն ալ կայ այս տագնապին՝ Արեւմուտք կը փորձէ իշխանութեան հասցնել իրեն համակիր դեկավարութիւն Սուրիոյ եւ Լիբանանի մէջ ձախողցնելու համար նոր համակարգի ճիգը այդ երկիրները առնելու իր հովանիին տակ: Սուրիոյ պարագային ան օգտուեցաւ Ասատի ազգայնական վարչակարգի քիւրտերու եւ ընդդիմադիր շարժումներու դէմ վարած քաղաքականութենէն: Սուրիական վարչակարգը յոգնեցաւ Արեւմուտքի պարտադրած պատժամիջոցներէն որոնք սկսան 2011 թուականին: Երկրին դրամանիշը արժեզրուեցաւ այնքան որ բանակի զինուորի մը ամսականը հասաւ եօթ ԱՄՆ տոլարի, իսկ սպայի մը ամսականը՝ մօտ 30 ԱՄՆ տոլարի: Թուրքիա օգտուեցաւ այս առիթէն ու արագ շարժումով մը որու մանրամասնութիւնները տակաւին աղօտ են, իշխանութեան հասցուց «Իսլամ եղբայրներ»ու շարժումին համակիր խումբ մը: Ներկայիս Սուրիան որ կը համարուի Միջին Արեւելքի ապահովութեան եւ կայունութեան հիմնական գործօնը մտաւ աննախատեսելի հոլովոյթի մը մէջ: Թուրքիա գինովցած է իր այս յաջողութենէն ու իրեն համակիր «Իսլամ Եղբայրներ» շարժումը սկսած է աշխուժութեան նշաններ ցոյց տալ Եգիպտոսի, Յորդանանի ու Լիպիոյ մէջ: Արաբական աշխարհը կը վճարէ իր թուրքեան գինը: Երբ դուն թոյլ ես մի այլաներ դրացիդ որ կ'ուզէ վերականգնել իր Օսմանեան իշխանութեան օրերու սահմանները գոնէ քաղաքական ազդեցութեամբ:

Մութ ամպերու կուտակում

Ուրեմն Հայաստանի Հանրապետութեան շուրջ մութ ամպերու կուտակումը կը շարունակուի: Մէկ կողմէն Թուրքիա կը զօրանայ, Իրան յետքայլ կ'արձանագրէ կորսնցնելով իր վաղեմի դաշնակից Սուրիան: Ան ներկայիս կը վարէ զգուշաւոր քաղաքականութիւն ու սկսած է պատրաստուիլ դիմագրաւելու որեւէ զինուորական հարուած, որովհետեւ զայն պաշտպանող յառաջացեալ շարժումները կրեցին ծանր հարուած: Պաղեստինի «Համաս»ը եւ «Շիհատ Իսլամի»ն կը շարունակեն պայքարիլ Իսրայէլի դէմ շատ դժուար պայմաններու մէջ: Լիբանանի «Հըզպալլա»ն կրեց ծանր հարուած ու կը բոլորէ ապաքինումի շրջան մը գալիք անորոշ վիճակը դիմագրաւելու համար: Սուրիոյ վարչակարգը տապալեցաւ հասցնելով ամենածանր հարուածը Իրանին: Իրաքի մէջ կառավարութիւնը կը փորձէ զսպել Իրանի համակիր ուժերը: Կը մնան միայն Եմէնի «Հուսիներ»ը որոնք կը տանին պայքարի ծանր բեռը Իսրայէլի ու անոր համակիր Արեւմուտքի ուժերուն դէմ: Ռուսական դաշնութիւնը զբաղած է Ուքրանիոյ մէջ տեղի ունեցող պատերազմով: Արեւմուտքի երկիրներէն ԱՄՆ ընտրեց նախագահ Տոնալտ Թրամփը որու հիմնական քաղաքականութիւնը պիտի ըլլայ վերականգնել ԱՄՆ-ի յետքայլ արձանագրող տնտեսութիւնը ու ան պիտի փակէ սահմանները բոլոր ապօրինի ներգաղթողներու դիմաց: Իսրայէլի պաշտպանութիւնը պիտի մնայ օրակարգի վրայ: Ֆրանսա կը գտնուի տնտեսական դժուար կացութեան առջեւ ու խորհրդարանի վերջին ընտրութիւնը ցոյց տուաւ աջակողմեան ուժերու յառաջխաղացքը ու անոնց քաղաքականութիւնն է զբաղիլ Ֆրանսայի ներքին տնտեսական ու ընկերային տագնապով: Նոյն վիճակին մէջ է Միացեալ թագաւորութիւնը: Կատարեցինք այս նկարագրութիւնը ցոյց տալու համար Միջին Արեւելքի մէջ անկայուն վիճակը որմէ պիտի փորձեն օգտուիլ Թուրքիան ու Իսրայէլը, ամէն մէկը իր շահը յառաջ մղելով: Թուրքիա պիտի փորձէ օգտուիլ



Ռուսիոյ ու Արեւմուտքի ուժերու քաղաքականութեան թուլութենէն հարուածելու համար շրջանի բնիկ, ազգայնական ուժերը: Այդ ուժերն են քիւրտերը եւ հայերը: Քիւրտերու պարագային ան պիտի փորձէ ստանալ ԱՄՆ-ի թոյլտուութիւնը իր սահմանէն 30 քիլոմէթր հեռաւորութեամբ հեռացնելու համար զանոնք: Ան կը վախնայ Սուրիոյ մէջ հաստատուելիք քրտական շրջանէ մը որ շատ հաւանաբար օրինակ պիտի ծառայէ Թուրքիոյ քիւրտերուն: Այս վախն է պատճառը որ ան վերջին օրերուն սկսած է թոյլ տալ բանտարկուած քիւրտ ղեկավար Աբոյի կամ Ապտալա Օճալանի այցելութիւնը իր համակիրներուն կողմէ: Անկէ կը փորձէ ձեռք բերել Թուրքիոյ դէմ գործող «Քրտական Աշխատաւորական Կուսակցութեան» կամ «Փ.Ք.Ք.»-ի գործունէութեան դատապարտումը ու քիւրտ-թուրք շինծու եղբայրութեան վեարակենդանացումը: Օճալան պիտի կատարէ՞ այս քայլը անոր դիմաց ոչինչ ստանալով: Կասկածելի է: ԱՄՆ թոյլ պիտի տա՞ Թուրքիային ճնշելու իր դաշնակից քուրտերը Եփրատ գետի արեւելեան կողմը որոնք զինք պաշտպանող վահաններն են ու անոնք մեծ դեր կատարեցին սուրիական վարչակարգի տապալումին մէջ, կտրելով պետութեան հասնելիք քարիւղէն ու բնական կազէն եկած եկամուտը: Կը մնան հայերը: Հայաստանի հանրապետութեան վրայ թրքական եւ ատրպէյճանական ճնշումները կը սաստկանան: Ռուսիոյ հովանաւորութիւնը վայելող Հ.Ա.Պ.Կ. ապահովական ուխտին մէջ Հայաստանի անդամակցութեան ստեղծումը առաջին քայլն էր զոր առաւ Հայաստանի կառավարութիւնը Արցախի առաջին պատերազմի ընթացքին այս ուխտին կրաւորական դերին պատճառով: Ներկայիս Հայաստան գուրկ է որեւէ պաշտպանութեան ուխտի անդամակցութենէ: Այս կը համարուի մեծ վտանգ Հայաստանի հանրապետութեան նման ներքին պետութեան մը համար որ պէտք ունի շրջանային ուժերու օժանդակութեան դիմանալու համար որեւէ յարձակումի դէմ: Իրանի Իսլամական հանրապետութիւնը կը մնայ միակ սահմանը որմէ կրնայ օգտուիլ Հայաստան որեւէ տագնապի պարագային: Իրանի զբաղած ըլլալը իր սահմաններու պաշտպանութեամբ կրնայ օգտագործուիլ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի կողմէ ամբողջացնելու համար Սիւնիքի միջանցքին գրաւումը, Հայաստանի Հանրապետութիւնը գրկելով միակ ռազմավարականօրէն բարեացական դրացիի մը հետ սահման ունենալէ: Պատմական փաստ է որ սահմաններու վերաձեւումը տեղի կ'ունենայ համաշխարհային տագնապներու պարագային: Լուրջ վտանգ կը սպառնայ Հայաստանի Հանրապետութեան ու առնուած քայլերը զինելու հայկական բանակը զոհացուցիչ չեն Թուրքիոյ եւ Ատրպէյճանի նման հսկայ ներուժ ունեցող պետութիւններու դէմ:

Արեւմտահայութեան Ներուժի Կեդրոնացում

Առիթով մը երբ կ'այցելէի լիբանանցի նշանաւոր քաղաքական գործիչ մը որ կը պատկանէ յառջդիմական ճակատին, այսպէս արտայայտուեցաւ երբ զիս կ'ընդունէր իր գրասենեակին մէջ.«Հայեր ո՞ւր էք դուք: Դուք այս շրջանի հիմնադիր սիւներէն էք: Ձեր բացակայութիւնը զգալի է: Ինչո՞ւ կը բացակայիք շրջանը ձեւաւորող հոլովոյթներէն:» Այդ, մարդը իրաւացի էր: Մենք ոչ միայն բացակայ ենք այդ հոլովոյթներէն այլ կամովին նաեւ բացակայ ենք տարագիր արեւմտահայութեան ներուժը կեդրոնացնող որեւէ հոլովոյթէ: Կարծես կախարդական գաւազան մը կայ ազդուած արտաքին ոյժերէ որ մեզ հեռու կը պահէ տարագիր արեւմտահայութեան ներուժը կեդրոնացնող ու անոր խօսքին կշիռ տուող որեւէ



քայլէ: Այս նիւթը ընտրեցի երբ «Պայքար»ի մէջ կարդացի իրաւացի եւ տեղին կոչ մը արձակուած ականաւոր մտաւորական Դոկտ.Արշաւիր Կեօնճեանի կողմէ: Որքան իրաւացի էր ան: Խօսքերը մէջս արթնցուցին Արեւմտահայութեան Ազգային Բարձրագոյն Խորհուրդի հիմնադիր մարմինի նախագահ Գառնիկ Սարգիսեանի վարած քաղաքականութեան իրաւացիութիւնը: Ան Մէթր Գասպար Տէրտէրեանի քրոջ որդին է: Քաղաքական մեծ գործիչ է ու ան ազդուած է իր քեռիին տարագիր հայութիւնը խորհուրդի մը շուրջ միացնելու գաղափարէն: Շատ ազդուած է նաեւ արեւմտահայութեան քաղաքական անմիաբանութեան վիճակէն: Մեզ թուլացնող գործօնները աւելի շատ են քան միացնող գործօնները: Ուրեմն, դոկտ. Կեօնճեանի գաղափարը կիսող հայկական շատ ուժեր կան: Սարգիսեան այցելեց Լիբանան քանի մը անգամ: Այցելեց մեր երեք յանաւանութիւններու ղեկավարներուն: Մեծամասնութիւնը տուաւ իր դրական պատասխանը մասնակցելու այս կազմուելիք խորհուրդին: Խորհրդակցեցաւ մեր մտաւորականներէն հոյլի մը հետ Լիբանանի, Սուրիոյ, ԱՄՆ-ի, Գանատայի եւ Հայաստանի մէջ: Բոլորը կիսեցին իր գաղափարը՝ հիմնելու տարագիր արեւմտահայութեան ներուժը կեդրոնացնող խորհուրդ մը որուն մէջ պիտի ներկայացուին մեր երեք յարանուանութիւնները, կուսակցութիւնները, մտաւորականները, բոլոր տեսակի միութիւնները, մանաւանդ հայրենակցական միութիւնները որոնք պիտի կազմեն հիմնաքարը մեր պահանջատիրութեան: Օր մը եթէ հասնիք Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն մեր դատը ներկայացնելու համար, մարաշցի, այնթապցի ու խարբերդցի հայերու յետնորդ ըլլալն է որ յառաջ պիտի տանի մեր դատը եւ ոչ թէ կուսակցութեան մը պատկանիլը: Քաղաքական ուժերուն հետ խորհրդակցեցաւ նաեւ Գառնիկ Սարգիսեան: Բոլորին մէջ ալ գտաւ արթուն ազգասէր ուժեր որոնք ընդունեցին մաս կազմել այս խորհուրդին սկիզբը անհատական ձեւով: Սարգիսեանի այցելութիւնը յոյս ներշնչեց խումբ մը հայ ազգասէր, գիտակից երիտասարդներու որոնք մաս կազմեցին իր հիմնած քաղաքական երիտասարդական հարթակին: Անոր մէջ կան բոլոր մարզերէ ու հոսանքներէ տղաք ու աղջիկներ: Մանաւանդ քաղաքական գիտութեան հետեւող ուժեր որոնք պիտի կազմեն ողնայարը այս խորհուրդին: Ըստ այս Խորհուրդի կանոնադրութեան, մեր երեք մտաւորականները մաս պիտի կազմեն այս խորհուրդի Աւագանիին կամ Ծերակոյտին որ ունի խորհրդակցութեան իրաւունք: Ընտրուած կամ նշանակուած 144 անդամները Խորհուրդին պիտի ներկայցնեն մեր ազգի բոլոր առողջ ուժերը՝ Եկեղեցի, կուսակցութիւն, մտաւորականներ, հայրենակցական միութիւններ, բարեսիրական ու այլ միութիւններ: Այս խորհուրդին գործունէութեան պիտի օժանդակէ գործադիր մարմին մը բաժնուած տարբեր յանձնախումբերու՝ արտաքին յարաբերութիւն, սահմանադրութիւն, հայրենակցական միութիւններ, տարբեր գաղութներու ներուժի վերակենդանացում եւ այլն: Այս գործադիր մարմինի աշխատանքին պիտի օժանդակեն երիտասարդ ուժեր իւրաքանչիւրը ըստ իր մասնագիտութեան: Ինչպէս կը տեսնէք Խորհուրդին կառոյցը արդէն պատրաստ է: Հիմնադիր մարմինի անդամները պատրաստ են լսելու իւրքանչիւր հայորդիի խօսքը կամ կարծիքը: Իւրաքանչիւր կարծիք ունի իր արժէքը: Իսկապէս ուրախ եմ ծառայելու այս հիմնադիր մարմինին մէջ: Գործ ունիմ իսկապէս մտաւորական լիցք ու ազգային ջիղ ունեցող հայ մարդոց հետ: Ռամկավար Ազատական Կուսակցութեան դերը շատ մեծ պիտի ըլլայ այս Խորհուրդին մէջ: Ըլլալով մտաւորական գաղափարախօսութիւն ու ազգային ջիղ ունեցող կուսակցութիւն, մեծ պիտի ըլլայ դերը անոր այս շարժումի



յաջողութեան մէջ: Այս շարժումին կը պակսի միայն ուրիշ ազգային ցաւը զգացող մտաւարականներու միացումը իր շարքերուն, իրենց ուրոյն գաղափարով ու տեսլականով: Անոր կը պակսի նաեւ նիւթական օժանդակութիւնը: Դժբախտաբար հայ երեւելիներ կ'օժանդակեն կրթական, բարեսիրական ու մշակութային միութիւններու: Երբ կարգը գայ քաղաքական շարժումին օժանդակութեան, որ հիմնաքարը կը համարուի մեր պահանջատիրութեան, անոնք շատ անգամ կը զլանան իրենց լուսն տալու այդ շարժումի յաջողութեան համար: Ուրեմն, նիւթական օժանդակութիւնը շատ կարեւոր է այս Խորհուրդի կազմաւորումին համար: Անոր կազմութեամբ տարագիր արեւմտահայութիւնը ազդու խօսք պիտի ունենայ կառավարութիւններու եւ միջազգային կազմակերպութիւններու առջեւ: Հայ մարդը պիտի զգայ ոյժի մը գոյութիւնը որ պիտի պաշտպանէ իր իրաւունքը ու պիտի բարելաւէ իր կենցաղը տարագրութեան մէջ: Հայաստանի Հանրապետութիւնն ալ պիտի զգայ որ առանձին չէ իր պայքարին մէջ ու Արեւմտեան Հայաստանի դատէն նահանջելու պէտք չունի: Այլ այդ դատի հետապնդումը պիտի յանձնէ այս Խորհուրդին, որու անդամները ըլլալով յետնորդները տարագրուած ու ջարդուած ազգի մը, լաւ ձեռով պիտի պայքարին այդ Դատին համար: Առաջին անգամ ըլլալով 110 երկար տարիներէ ի վեր հայ մարդը պիտի զգայ որ տեղաշարժ մը պատահեցաւ իր իրաւունքի պաշտպանութեան գործին մէջ: Ցարդ կատարուած բոլոր փորձերը հատուածականացնելու հայոց դատը չտուին պէտք եղած արդիւնքը: Ժամն է որ մեր ազնուական մտաւարականները գործի անցնին ու փրկեն մեր ազգը այս թոյլ վիճակէն: Դոկտ. Կէօնճեան վարձքերնիդ կատար: Մատը դրիք ճիշդ վերքին վրայ ու ճիշդ ժամանակին: Մեր ժողովուրդը յետքայլի ու անօգուտ լոզունգներով տարուելու ժամանակ չունի այլեւս: Մեզի պէտք է տեսլական ունեցող ու աշխատանքի ռազմավարական ճամբայ գծող խորհուրդ մը: Հայաստանի հանրապետութիւնը որ մեր վերջին հողակտորն է կը գտնուի մեծ վտանգի առջեւ ու մեր ժողովուրդը քնացնող ուժերը ով որ ալ ըլլան պէտք է հասկնան որ հայ ժողովուրդը ժամանակ կու տայ, սակայն կ'արթննայ ու իր ճակատագիրը գրելու գործը կ'առնէ իր ձեռքերուն մէջ շնորհիւ իր ազնուական զաւակներուն:

ՎԻԳԷՆ ԹՈՍՈՒՆԵԱՆ

Աղբիւրներ՝ 1. «Պայքար» շաբաթաթերթ:

2. Արեւմտահայութեան Ազգային Գերագոյն Խորհուրդի հիմնադիր մարմինի Ազգային Հայեցակարգի նախագիծ:

3. Արեւմտեան Հայաստանի Ռազմավարական Հետազօտութեանց Կեդրոն, Երեւան:

ԱՆՀԻՄՆ ՊԱՏՐԱՆՔՆԵՐ



Մարգարիտա Կրտիկաշեան, Երեւան, 27 յունուար 2025, ԳԵՂԱՐԴ

Հայաստանը կանգնած է ճակատագրական ընտրութեան առաջ՝ ստիպուած լինելով վերանայել իր անվտանգութեան ու արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւնները: Վերջին զարգացումները, ներառեալ Հայաստանի Հանրապետութեան և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև հունուարի 14-ին ստորագրուած ռազմավարական գործընկերութեան կանոնադրութեան փաստաթուղթը, պարզորոշ ցոյց են տալիս, թէ որքան վտանգաւոր է արտաքին դաշնակիցների վրայ չափազանց մեծ յոյս դնելը՝ առանց ներքին հզօրացման:

Ադրբեջանի՝ Հայաստանի ինքնիշխան տարածքների շարունակական գրաւումը յստակ ցոյց է տալիս, որ մեր երկրի անվտանգութեան ապահովումը կախուած է բացառապէս մեզանից: Ինքնիշխանութիւնը չի կարող փոխանցուել կամ «արտահանձնուել» ուրիշներին: Միջազգային դաշնակիցների աջակցութիւնը, որքան էլ կարեւոր լինի, չի կարող փոխարինել ինքնուրոյն և ուժեղ պաշտպանութեան համակարգին:

Հայաստանի և ԱՄՆ-ի ռազմավարական գործընկերութեան համաձայնագիրը, որը ներկայացում է որպէս առաջընթաց, խորքային ուսումնասիրութեան կարիք ունի: Թէեւ փաստաթուղթը ներառում է պաշտպանութեան արդիականացման և սահմանների պահպանման վերաբերեալ դրոյթներ, նա չունի անվտանգութեան յստակ երաշխիքներ: Նշուած «միջոցառումները», ինչպիսիք են համատեղ յանձնաժողովի ստեղծումն ու



սահմանային վերահսկման խումբը, աւելի շատ խորհրդանշական բնոյթ են կրում և չեն լուծում Հայաստանի անվտանգութեան հիմնախնդիրները:

Բացի այդ, համաձայնագիրը ներառում է Հայաստանի մասնակցութիւնը Իրաքում և Լևանտում Իսլամական Պետութեան (ԻԼԻՊ, ISIS, ԴԱԻՇ) դէմ համաշխարհային դաշնակցութեան և միջուկային խաղաղ էներգիայի զարգացման ծրագրերին: Թէեւ այս նախաձեռնութիւնները կարող են վկայել միջազգային համարկման (ինտեգրման) նոր ուղու մասին, դրանք չեն արտացոլում Հայաստանի պետական ու հայութեան ազգային շահերը և կարող են ՀՀ-ը ներքաշել միջազգային հակամարտութիւնների մէջ, որոնք կապ չունեն մեր առաջնահերթութիւնների հետ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը բազմիցս շեշտել է, որ իր արտաքին քաղաքականութիւնը հիմնուած է «հաւասարակշռուածութեան» սկզբունքի վրայ: Սակայն յայտարարութիւններն այդքան էլ չեն համընկնում իրականութեան հետ: Հայաստանը չի կարող իր անվտանգութիւնն ապահովել հիմնուելով միայն դիւանագիտական յարաբերութիւնների վրայ՝ միաժամանակ խուսափելով արտաքին ուժերի հակասութիւնների հետեւանքներից:

2020 թուականի Արցախեան երկրորդ պատերազմից ստացած դասերը յստակ են: Այն ժամանակ, ինչպէս նաև այժմ, ռազմավարական գործընկերութիւնների պատրանքները հասարակութեանը ներկայացում էին՝ քողարկելով պատերազմին անբարար պատրաստուածութիւնը: Նոյնը կրկնում է այսօր՝ ձեւաւորելով ինքնաբաւութեան և ինքնահանգստութեան վտանգաւոր մթնոլորտ: Արտաքին ուժերի վրայ յենուելը սխալ է, և հենց այդ պատճառով էլ անհրաժեշտ է առաջնահերթութիւն տալ ինքնապաշտպանութեան և անվտանգութեան ներքին կառոյցների ամրապնդմանը:

Ռուսական ուժերի ներկայութիւնը Հայաստանի տարածքում (որը որոշ շրջանակներում մեկնաբանում է որպէս ինքնիշխանութեան սահմանափակում) ունի իր սեփական ռազմավարական նշանակութիւնը: Այդ գորքի հեռացումը (որ ներկայացում է որպէս «ինքնիշխանութեան վերականգնում») առանց փոխարինող և ուժեղ բանակի, միայն մեծացնում է տարածաշրջանային հակամարտութիւնների մէջ մեր խորացման վտանգը:

Մրան զուգահեռ, ԱՄՆ ռազմական ներկայութիւնը Իրանի հետ սահմանի մօտ կարող է հրահրել աշխարհաքաղաքական նոր լարուածութիւն՝ Հայաստանը աւելիով վերածելով ուժային կենտրոնների մրցակցութեան գօտու: Առանց ինքնուրոյն և ամուր պաշտպանութեան, երկիրը կարող է կորցնել իր քաղաքական և ռազմական ինքնուրոյնութիւնը:

Այս իրավիճակում Հայաստանի առաջնահերթութիւնը պէտք է լինի իր ռազմական ներուժի և պետական համակարգի հզօրացումը: Միայն ինքնավստահութիւնն ու ազգային հզօր ներուժը կարող են ապահովել մեր երկրի ինքնիշխանութիւնն ու անվտանգութիւնը: Միջազգային գործընկերութիւնները պէտք է օգտագործուեն որպէս **լրացուցիչ գործօններ**՝ առանց փոխարինելու մեր ինքնուրոյն անվտանգային քաղաքականութեանը:

Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս պետութիւն, չի կարող իրեն թոյլ տալ կրկնել անցեալի սխալները: Ինքնիշխանութեան ու անվտանգութեան ապահովումը պէտք է դառնայ երկրի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականութեան հիմնական առանցքը՝ արտաքին ճնշումներից ու միջազգային օրակարգերից անկախ: Առանց այս հստակութեան՝ ՀՀ-ը անխուսափելիօրէն կը շարունակի բախուել այն նոյն մարտահրաւերներին, որոնք տարիներ շարունակ սպառնացել են մեր գոյատեւմանը:

ԹՐԱՄՓԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ



Տանըլտ Թրամփ նախագահական երդումով ամրագրեց իր յաղթական վերադարձը Սպիտակ տուն, հակառակ 2020 թուականի ընտրութիւններու պարտութենէն ետք իշխանութիւնը բռնագրաւելու փորձի մեղադրանքին, հակառակ գահընկէցութիւնը պահանջող երկու դատավարութիւններու, յանցագործութեան

մեղադրանքի, հակառակ ենթարկուած մահափորձին...: Արտասովոր ճակատագիրը անձնաւորութեան մը, որ իր դէմ ունէր բանտարկուելու բոլոր ազդակները, սակայն, պայքարեցաւ, յաղթահարեց եւ մանաւանդ ԱՄՆու ժողովրդային խաւի մեծամասնութեան սրտին խօսող ընտրարշաւ մը բոլորեց:

Ընտրապայքարի երկրորդ շրջանին վայելեց զօրակցութիւնը աշխարհի ամենէն յաջող ու հարուստ անձնաւորութեան՝ Իլոն Մասքի, որ իր կարգին ճամբայ բացաւ աշխարհի ամենէն հարուստներու սեղմ ակումբի անդամներու զօրակցութեան ԱՄՆու խնդրայարոյց նորընտիր նախագահին:

Նախագահ Պայտրն, նախքան իշխանութիւնը լքելը, խորհրդանշական յայտարարութիւն մը կատարեց, որ կրնայ երկար ժամանակ յիշուիլ՝ պատմութեան էջերուն մէջ ներկայ շրջանը յատկանշող ամենէն նշանակալից խօսքը՝ «Ամերիկայի մէջ օլիգարխիա մը (սակաւապետութիւն) ձեւաւորուելու վրայ է՝ ծայրայեղ հարստութիւն, իշխանութիւն եւ ազդեցութիւն ունեցող անձերէ կազմուած, որ արդէն կը սպառնայ մեր երկրի ժողովրդավարութեան, մեր հիմնական իրաւունքներուն, ազատութիւններուն եւ իւրաքանչիւրին արդար պայմաններու մէջ ապրելու կարելիութեան»: Ակնյայտ է որ խօսքը կ'ուղղուի «X» ընկերային ցանցի, «Space X»ի սեփականատէր, «Թեսլա»ի եւ տիեզերագնաց հրթիռներու նախաձեռնարկ Իլոն Մասքին, «Մէթա»ի սեփականատէր Մարք Չուքերպերկին եւ «Ամազոն»ի հիմնադիր Ճեֆ Պրզոսին, «Մայքրոսոֆթ»ի Պիլ Կէյցին...

Նոյն մտավախութիւնը ունին Եւրոպայի երկիրներու ղեկավարները, առաջին կարգին՝ նախագահ Մաքրոն. ան չինայեց իր քննադատութիւնը ուղղուած Իլոն Մասքին, որ անթաքոյց կերպով միջամուխ եղած էր եւրոպական երկիրներու քաղաքական ներքին կեանքին՝ ընտրապայքարի ընթացքին, որդեգրելով կարգ մը բռնատիրական երկիրներու ղեկավարներու, ինչպէս՝ Էրտողանի, Ալիէի... յարիր վերաբերում:



Թրամփ եւ Մասք ձեռք-ձեռքի տուած՝ Արեւմտեան աշխարհի ժողովրդավարական ասանդութիւնները առանց բարդոյթի քանդելու, ոտնահարելու ընթացքի մէջ են: Այս առումով անհաւատալի են Թրամփի՝ Գանատան, Կրեօնլանտն ու Փանաման ԱՄՆու կցելու մասին յայտարարութիւնները: Նոյնն է պարագան անոր՝ Իսրայէլի ցուցաբերած զօրակցութեան: Ինչպէս անցեալին Երուսաղէմը ճանչցաւ Իսրայէլի մայրաքաղաք, այնպէս ալ Այսրյորդանանը կը կոչէ Հրէաստամարիա (Judée-Samarie) հրէական անուանումով, մէկ խօսքով ժխտելով պաղեստինցիներու պետութիւն ստեղծելու իրաւունքը:

Աշխարհի մեծագոյն տէրութեան կողմէ բարոյական ու արժեհամակարգային կանոններու ոտնահարումը կը մտահոգէ նախ եւ առաջ անոր եւրոպացի դաշնակիցները: Բայց նաեւ Հայաստանը, որ նոր ռազմավարական գործընկերութեան համաձայնագիր մը կնքեց ԱՄՆու պաշտօնաւարտ իշխանութեան հետ: Որքանո՞վ Թրամփ պիտի յարգէ նախկիններու օրօք ստորագրուած համաձայնագիր մը, երբ ան ԱՄՆու համար անմիջական տնտեսական շահ ապահովելու կարողութենէ զուրկ է:

Աշխարհ անհամբեր սպասումի մէջ է Թրամփի անակնկալ որոշումներուն: Հայաստան անցեալին յուսախաբ եղած էր ու մեծ վնասներ կրած յատկապէս 2020ի պատերազմի ընթացքին: Պայտընի վարչակարգի օրօք չենք կրնար ըսել որ Հայաստան բախտաւոր գտնուեցաւ: Արցախի կորուստը, արցախցիներու գաղթը, Ազերպեյճանի կողմէ Հայաստանի ինքնիշխան տարածքի գրաւումը, մշակութային ժառանգութեան քանդումը, Արցախի ղեկավարութեան գերեզմանները չարժանացան Ուաշինկթընի սուր հակազդեցութեան, պատիժներու: Այնպէս որ մեծ յոյսեր պէտք չէ կապել Թրամփի վարչակարգին ալ: Հայաստան ինքզինք բախտաւոր պէտք է սեպէ եթէ ԱՄՆն գէթ հաւասարակշռուած քաղաքականութիւն վարէ: Պաքուի մէջ բանտարկուած հայ գերիներու դատավարութեան սկզբնաւորութեան՝ ԱՄՆու նոր վարչակարգի արձագանգի բացակայութիւնը արդէն առաջին ազդանշանն է Հայաստանի հանդէպ անոր որդեգրելիք քաղաքական ուղեգիծին:

ԺԻՐԱՅԻ ՉՈՒԱՔԵԱՆ

ՆՈՐ ՅԱՌԱՋ

23/1/2025

ԱՐՏԱՑՈՂՈՂ ԵՂԵԼՈՅԹՆԵՐՈՒ ՀԵՏՔԵՐՈՎ

ԱԼԵԿՈՏԵԱԼ ԲՈՎԵՐԷՆ ԱՆԴԻՆ.

«ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՍՓԻՒՌՔԻՆ, ԹԷ՞ ՍՓԻՒՌՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»

Պարոյր Յ. Աղպաշեան



Այսօր, մանաւանդ երբ թեւակոխած ենք նոր տարեշրջան, արդեօք պահ մը կը մտածե՞նք, որ մեր դասական եւ ասանդական հասկացողութիւնները կրնան բնորոշուիլ եւ իմաստաւորուիլ կամ մատնանշուիլ եւ արժեւորուիլ նոյն նշանակութեամբ, բովանդակութեամբ եւ արտայայտչականութեամբ:

Չե՞ որ ամէն ինչ փոխուած է, նոր զարգացումներով ու տարբեր հոլովոյթներով, սահմանումներով ու

բաղադրութիւններով, ստանալով նորակերտ տարազումներով, իմաստակրութեամբ ու դրսեւորումներով ողողուած ամբողջատիրութիւն մը:

Բնական է, մարդկութեան արագընթաց ըմբռումները եւ ընկալումները, աշխարհի սրաքարշ եղելութիւնները եւ, ընդհանրապէս, իւրաքանչիւր քայլի, երեւոյթի ու կացութեան, «արդի ակնոց»ներով դիտելու ու խորաչափելու, կշռելու ու դատելու փորձութիւնները, ինքնին պատրաստած ու կազմաւորած են նորաշէն հարթակներու ու նորակազմ ծրագիրներու բուրգեր, ինչ որ արդէն ենթադրել կու տայ, որ մտայնութիւնները կ'ընթանան բարեփոխեալ հեւքով, մտածողութիւնները կը դեգերին բոլորովին այլ ուղղութիւններով, տեսիլքները կը սուրան բարձրաթիչ տարածքներով, տրամաբանութիւնները կը զգենուն հիմնովին աննախընթաց կառուցողականութիւն:

Այս բարեփոխութիւնները եւ արտայայտութիւնները, ինչպէս նաեւ արդիականութիւններն ու նորարարութիւնները, անշուշտ, մէկ օրէն միւսը չառաջացան, ոչ ալ՝ ընդհուպ կարգաւորուեցան, այլ՝ քայլ պահելով շրջապատի ու միջավայրի թաւալքներուն հետ, որոնք մարդկութիւնը կը մղեն յարմարելու կեանքի պայմաններուն, պատշաճելու ստեղծուած իրադարձութիւններուն, պահպանելու օրուան պահանջներուն այժմեականութիւնները:

Հետեւաբար, կարճատեսութիւն ու միամտութիւն էր չհաւատալ վերոյիշեալ անխուսափելիութիւններուն, որովհետեւ, այլ կերպով եւ եղանակով, կարելի չէր կեանքին ընդառաջ երթալ, մնալով անցեալի խարխափեալ քառանկիւններուն վրայ, դառնալով գերին այս կամ այն կացութեաններուն կամ ալ կառչած մնալ ժամանցուած բարքերուն:

Ասիկա չի նշանակեր լրիւ թօթափուիլ անցեալէն կամ անոր հետ առընչուող սովորոյթներէն ու հաւատամքներէն, այլ ընդհակառակը՝ զիտակցիլ, թէ կեանքի ուղին կաղապարուած չի կրնար մնալ կամ ընթանալ կրկնօրինակային արահետներով, պահանջելով միշտ շարժիլ ու գործել այն կարելիութիւններով, որոնք մարդկութիւնը կը պահեն կենսունակ ու սթափ, պայմանով որ՝ չափաւորականութիւնն ու զսպուածութիւնը երբեք չդառնան խաղբութիւններու, ցուցամոլութիւններու ու փառատենչիկութիւններու կրպակներ:

Հաւանաբար, ոմանք հարց տան կամ մտածեն, թէ ինչո՞ւ այս հանգրուանին, նման մտորում մը կը դառնայ հրատապ կամ անմիջական, երբ աշխարհը կ'եռայ, կը բորբոքի ու կը փրփրի, կը բռնկի ու կը կատրի, իր զանազան թելերով, կողերով եւ ոլորտներով:



Մեծ կարծիքով, պատասխանը շատ յստակ է ու պարզ, որովհետեւ՝ աշխարհը ու մարդկությունը, իրենց հօգուտեամբ ու մեծապետականութեամբ, իրենց դաւադրութեամբ ու կամակատարութեամբ, հակամէտ են, նոր քարտէսներ գծելու, նոր հաշիւներ բանալու, նոր ատերներ գործելու:

Բացայայտ է, որ այս վերիվայրումները, տեղ մը տեսանելի, ուրիշ տեղ մը՝ ոչ, ենթահողեր պատրաստելու գնով ու ճակատներ կառուցանելու դիտաւորութիւններով, կը շարունակեն իրենց մարդադաւ ու ժողովրդասպան ծրագիրները, թունաւորելով եւ ապականելով այն բոլոր տուեալներն ու գործարքները, որոնք յագուրդ կու տան նմաններու անասնակեր ախորժակներուն:

Իսկ այդ վայրենաբարոյութիւնները ինչի՞ կրնային առաջնորդել, եթէ ոչ այն քառսներուն, որոնց մէջ կը տուայտին ու կը տառապին այն հատուածները, որոնք «գոհ»ն են անմարդկայնութեան ու բնաջնջութեան մոլուցքներուն ու կատաղութիւններուն:

Այս մասին երբ կը խորհրդածենք, կ'անդրադառնանք, կը քննարկենք, կը մեկնաբանենք կամ կը վերլուծենք, այն լուսարձակներով, թէ սփիւռքը ո՞ր կը գտնենք, Արցախը՝ ո՞ր, Հայաստանը՝ ո՞ր եւ անոնց տեղն ու դերը ո՞ր հորիզոնականներուն վրայ, իրենց աշխարհագրական, տարածքային, քաղաքական կամ միջպետական առանցքներէն ներս, նշմարելով, որ անոնք կը թառին բոլորովին նոր, տարբեր կամ հակադիր բեւեռներու վրայ:

Եթէ Հայաստանը Խորհրդային Միութեան ընտանիքներուն մաս կը կազմէր, ապա, իր անկախութեան գործընթացին մէջ, իսկ Սփիւռքը՝ աշխարհացրի կարգուսարքով կը գոյատեւէր, համեմատաբար, խաղաղ ու բարգաւաճ կեանքով եւ ապրելակերպով, ներկայիս, կրնա՞յ ըլլալ որ անոնք կը գտնուին բարուք ու հեզասահ պարունակներու մէջ:

Անշուշտ, նման չափանիշերով գտնոնք համադասելը ուղղակի անհեթեթութիւն է, քանի որ՝ ոչ հեռուէն ու ոչ ալ մօտէն, անոնք նոյն դերակատարներն են կամ նոյն պատկանելիութիւններն են:

Հայաստանի անկախութիւնը, որուն իրականացման երազային պաշտամունքը, իւրաքանչիւր հայու համար, սրբութիւն մըն էր, շատ մը կողմերով, ստուերոտ հետեւանքներ ունեցաւ, որոնց պատկերները, ցայսօր զգալի են մէկէ աւելի մարզերու մէջ, երբեմն՝ քննադատելիօրէն, երբեմն ալ՝ ակամօրէն:

Մինչ Սփիւռքը, իր տարաբնոյթ ու խճանկարային դրուածքով, ահաւոր տեղաշարժերու ենթարկուեցաւ, գունափոխուեցաւ, դիմափոխուեցաւ, տարանջատուեցաւ, տարտղնուեցաւ, մէկ կողմէն՝ շրջանային ու միջազգային գօտիներուն մէջ ծագած հանգոյցներէն, միւս կողմէն՝ ներսփիւռքեան ստեղծուած անհարթութիւններէն, անմիաբանութիւններէն եւ անհաշտութիւններէն:

Կարելի է արագ, անաչառ եւ անմիջական ակնարկով մը, փաստել ու հաստատել, թէ ինչո՞ւ հայրենիքի անկախացումը, չտուաւ այն բոցը, որուն այնքան ծարաւը ունէր հայութիւնը, անորմով վերաշնչելու ու վերագարթօնք ապրելու, դառնալու համար անոր առաջնորդող ու ղեկավարող ամրապինդ բերդապարիսպի «պահապան»ներէն մէկը:

Անդին, Սփիւռքը, արդարացիօրէն «խելակորոյս» սիրով փարեցաւ իր «բեկորուած» հայրենիքի զօրակցութեան, առանց սակայն, հաշուակցելու, որ միայն զգացականութեամբ ու վերացականութեամբ, կարելի չէր հայրենիքին ծառայել կամ հայրենասիրական տրամադրութիւններ բաշխելով զբաղիլ:

Այս բոլորէն քաղուած «պտուղ»ները, որքան ալ ումանց համար... համեղ եւ անոյշ, ումանց համար ալ՝ դառն ու լեղի, ինչպէ՞ս կրնային հայութեան զոյգ թելերուն տալ միասնութեան ու միաբանութեան գօտեպնդիչ եւ յուսադրիչ հեռանկարներ, մանաւանդ որ՝ ներհայաստանեան տեղաշարժերը կը շարունակեն մնալ մտահոգիչ, իսկ ներսփիւռքեան կարգավիճակները՝ անսփոփական:



Դժբախտաբար, եթէ լայն ֆոնի վրայ դիտենք Հայաստան-Սփիւռք պարագլուխներու յենակետերը, ապա, անոնց յարաբերութեանց նժարները, ո՞ր կարելի պիտի ըլլայ զետեղել անոնց խարխախներու ամրակայացումները, հուսկ՝ հոն կան քաջալերութիւն աւետող խթաններ:

Ո՞վ չի տեսներ, որ Հայաստանը, հակառակ իր ընդունելի ու գովելի բազմաթիւ շահեկան առաւելութիւններուն (որոնք, տակաւին նուազ բաւարար են Կովկասեան, Եւրոպական, ասիական ծիրերէն ներս), չունի իր ամուր հեղինակութիւնը, իսկ եղած «դրական» նշանները, լոկ խաբկանքի մօտալուտ տեսլադաշտեր են, որոնք յետագային, ո՞րքանով յոյս կրնան ներշնչել, թէ ատոնք ի վիճակի են դառնալու վատահելի ու մնայուն ապաւեններ:

Սփիւռքը եւս, հակառակ իր գոյութեանական ճիգերուն եւ իր ինքնութեան արմատներուն կապուած մնալու առաքելութեանց, հոն ալ, դժուար է գտնել այն ամրակոտ կապերը, որոնք զինք կը պահեն կանգուն ու կենսախիւն, այն հասկացողութեամբ, ինչպէս որ էր նախօրօք, երբ ամեն ինչ աւելի քան բնականոն էր:

Ահաւասիկ համայնապատկեր մը, որ եթէ նախապէս կը հպարտացնէր ու կ'առիւնքներ բոլորը, իրենց հարուստ հարազատութեամբ եւ իրենց հպարտ եւ անտեղիտալի կամքով, այսօրը, չէ այն ինչ որ ապրեցաւ եւ ապրեցուց հայութիւնը ջերմեռանդութեամբ ու հաւատարմագրութեան նշանակետերով:

Գաղտնիք չէ, որ Հայաստանը, Արցախը ու Սփիւռքը կ'ապրին, մեղմ ըսած, տարբեր վիճակներու մէջ եւ իրարու նկատմամբ չունին այն սերն ու գուրգուրանքը, որոնք կային ու կը շնչէին նախանձելի յուսալիութեամբ եւ ոգեւորութեամբ:

Ինչո՞ւ, յանկարծ, այս երեք անբեկանելի եւ անկորնչելի հիմնասիւնները, կարծես փուլ եկան եւ ոչ միայն տկարացան, այլեւ, յականէ-անուանէ զիրար սկսան ստուերել, անտեսել, նոյնիսկ անարգել:

Արցախը, որուն անունով կ'երդնուր ու կ'ուխտէր Հայաստանահայր, զայն նկատելով հայութեանց մեկութեան խորհրդանիշը, գլխիվայր շրջեցաւ ու շիջեցաւ, զայն նկատելով իր գլխուն նստած «պատուհաս» մը, որմէ պէտք է խուսափիլ, թերեւս ալ... ձերբազատուիլ, զայն նմանցնելով... եկուորի եւ օտարի:

Նոյնը եւս կը ճակատագրուի Հայաստանի ու Սփիւռքի միջեւ ծագած ու խորացած անջրպետին, երբ սփիւռքահայութիւնը, իր Տարագրութենէն յետոյ, իր միակ ու գլխաւոր օթեւանը նկատեց Հայաստանը, եւ սակայն, ամբողջ 70 տարի ներգաղթող Արեւմտահայութիւնը յորջորջուեցաւ, հեզնականօրէն, «ախպար», մինչեւ օրս ալ այդ հոգեբանութեամբ զայն ճանչնալով:

Տակաւին պէտք է ըսել եւ յիշեցնել, որ Գ. Հանրապետութեան պետական աւագանիին մէջ, ո՞ր կարելի է գտնել եւ անուանել գործիչ մը որ սփիւռքահայ է եւ իր բարձր կարողութիւնները ու ձեռնհաս օրէնսգիտութիւնները կրնայ ծառայեցնել իր այս անփոխարինելի կտոր մը հայրենիքի բարօրութեան, սակայն, աւա՛ղ, կը զլացուին նման առիթներ ու նախաձեռնութիւններ:

Սուրիահայութիւնը, որ տակաւին վերջերս, ինքզինք դէմ յանդիման գտաւ նոր աղէտի մը, Հայաստանի կողմէ օժանդակութիւնները եւ օգնութիւնները թափ չառին, մինչեւ իսկ պետական պարագլուխ մը, համարձակեցաւ դիտել տալու, թէ իրենք ժամանակ չունին զբաղելու սփիւռքահայ գաղութներով, մինչ լիբանանեան քաղաքացիական պատերազմի օրերուն, Խորհրդային Հայաստանը երեք բեռնատար նաւերով հսկայական նպաստներ առաքեց ու բաշխեց կարիքաւոր լիբանանահայերուն:

Տխուր իրականութիւններ եւ աններելի ճանաչողութիւններ, բայց, մինչեւ ե՞րբ լռել կամ շրջանցել զանոնք, եւ կամ՝ ուրանալ, թէ տիրող այս մթնոլորտը ի գորու է, այս կամ այն չափանիշներով, բայց, անպայման իր կարծի ու կոշտ շղարշներով:



Կը շարունակուի՞ն այս կծու վերաբերմունքները, յատկապէս այն կողմերէն, որոնք ուժի ու դիրքի պատշգամներ են ու կը շահագործեն իրենց գերակայութիւնը ցոյց տալ, մինչդեռ այդ դարձդարձիկ վարմունքներով, կը խոցեն ու կը մթագնեն հայութեան ներկան եւ ապագան: Հայութիւնը, միասնաբար, հաւատարմաբար ու գիտակցաբար եւ, իրաւացիօրէն, կը յանկերգէ.

ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՐՏԱԽ, ՍՓԻՒՌՔ:

Սակայն. ի՞նչ իմաստ ունի այդ կոչը ու կարգախօսը, երբ անոնք կը մնան այդ սահմաններուն մէջ, այնքան ատեն որ՝ ատոնք իրականութեան համապատասխանելու համար, կը կարօտին՝ ԼՈՒՐՋ, ԳՈՐԾՆԱԿԱՆ, ՀԱՄԱԽՈՒՄԲ ու ԿՏՐՈՒԿ միջոցառումներու, առանց խաչաձեւումներու, լարախաչումներու ու ձեւակերպումներու:

Եթէ չկան ատոնք, պիտի չըլլան նաեւ լաւատեսական, զօրակցական եւ ապագայական պայծառ տեսիլքները, Հայաստանը, Արցախը ու Սփիւռքը ձգելով... լուսանցնքներու մէջ:

(Պէյրութ)

19/1/2025

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Գեորգ Պետիկեան



Ամէն տարի, 28 Յունուարին, կը տօնախմբենք մեր ազգային բանակի հիմնադրութեան օրը: Չենք կրնար անտարբեր մնալ: Համազգային ուրախութեամբ եւ հպարտութեամբ կը դիմաւորենք մեր զինեալ ուժերուն ծննդեան տարեդարձը:

Յստակ է, թէ երկրի մը բանակը իւրայատուկ առաքելութիւն մը ունի զինք ստեղծող կամ հիմնող երկրի

ժողովուրդին ու անոր ապրած հողատարածքի պահպանման նկատմամբ:

Ուստի կը կարծեմ, որ հայկական բանակի օրուան յիշատակումը առաջին իսկ հերթին մեր երկրին խաղաղութիւնը գնահատող, եւ անոր սահմանները ապահով պահողները երախտագիտութեամբ յիշելու օրն ու առիթն ալ է:

Որովհետեւ, մեր երկրի բանակը մեր պատինն ալ է:

Ու եթէ բանակի մը հիմնական կորիզը անոր անդամներն են, ուստի կրնանք ըսել, եթէ բանակի մը գլխաւոր հիմքը ընտանիքն է:

Միւս կողմէ սակայն, պէտք է նաեւ աւելցնել, թէ ազգեր, պետութիւններ, ժողովուրդներ ոչ միայն իրենց երկրի խաղաղութեան, այլ նաեւ նոր հողատարածքներ ձեռք ձգելու որդեգրումներէն ու ծրագիրներէն մեկնած, առաջին իսկ հերթին մեծ ուշադրութեան առարկայ դարձուցած են իրենց երկրին բանակին, անոր քանակին եւ որակին, ու հզօրացման աշխատանքներուն: Անոր շարքերուն միշտ կարգապահութիւն սահմանած ու պարտադրած են: Նոր զենքերով եւ մարդուժով զինած են զայն:

Եւ որովհետեւ բանակի մը մեծագոյն արժէքը՝ զինուորին կամ ծառայողին կեանքն է, ուստի ամէն առիթներով մարդիկ, բանաստեղծներ, գուսաններ եւ երգիչներ երգեր ու տաղեր հիւսած են, ոտանաւորներ նուիրած: Իր կարգին երկրին մամուլն ալ յօդուածներով ու պատմուածքներով ջատագոված է իր բանակին յաջողութիւններն ու սխրագործութիւնները: Իսկ նոյն այդ երկրին ղեկավարները, առ ի երախտագիտութիւն՝ միշտ մեծարած են իրենց



բանակի արժանատիները, յատուկ մետալներով կամ յուշարձաններով եւ յուշակոթողներով: Նոյնիսկ երկրի մեծ քաղաքներու գլխաւոր պողոտաներն ու փողոցները իրենց բանակին ծառայող հերոսներու անուններով յիշատակած:

Մփիւոքի տարածքին թէ հայրենի հողերուն վրայ ապրող կամ գոյատեւող հայեր, մեր կեանքի հեքին հետ, միշտ մօտէն կը հետեւինք մեր բանակի լուրերուն ու անոր տագնապներուն:

Մեծ գուրգուրանքի եւ պաշտամունքի առարկան է հայ բանակը: Ոչ մէկ կասկած եւ տարակուսանք:

Ուստի անսակարկ պէտք է անոր զօրակցիլ: Միշտ արդիական դարձնել, զինել ու պահել: Մասնագէտներով օժտել: Աջակցիլ եւ անոր ցաւերուն կարեկցիլ: Անոր կողքին կենալ: Գործնականապէս զօրավիզ կանգիլ: Վստահութիւն եւ հաւատք ներշնչել ու այս ձեւով ամրապնդել նաեւ մեր յոյսերը:

Մեր ժողովուրդը, պատիւ իրեն, միշտ ալ բարձր գնահատած է հայ բանակին ու հայ զինուորին հայրենասիրական ոգին: Տագնապած ու մտահոգուած է անոր հարցերով, սակայն երբեք չէ յուսահատած, այլ՝ ընդհակառակն, միշտ խանդավառուած է անոր յաջողութիւններով:

Որովհետեւ ազգովին կը հաւատանք, որ մեր բանակին մէջ ամբօրէն խարսխուած է հայ ժողովուրդի յաւերժութեան հաւատամքը: Որովհետեւ մեր բանակը նաեւ իր մէջ պահ ունի իր կոչումին յատուկ գիտակից ու սրբազան հայակերտ առաքելութեան նշանակութիւնը:

Հայկական բանակն ու անոր անպարտելի մարտիկներն են որ այսօր խաղաղ երկինք կ'ապահովեն մեր հայրենիքին:

Ի սրտէ բարի մաղթանք մը մեր բանակին ու անոր մեծ ու փոքր բոլոր զինեալ նուիրեալներուն:

Տարեդարձը շնորհաւոր՝ հայկական հզօր եւ քաջարի բանակ ու բանակայիններ:

Մեր բանակը մեր ազգային պատիւն ու յաղթանակն ալ է:

Փառք ու պատիւ մեր մարտունակ բանակին, յաղթանակ կերտող զինուորին եւ իր արիւնը հայրենիքի հողի պաշտպանութեան թափող նահատակ եւ մարտիրոսացած հայուն եւ մեր բանակի մեծ ու փոքր բոլոր զինուորականներուն:

ՏԵՍԱԿԷՏ

ՅԻՇԵ՛ՆՔ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԸ ՈՒ ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿԸ.

ԵՐԿԸՆՏՐԱՆՔՆԵՐԷՆ ԵՒ ՕՏԱՐԱՄՈԼՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

ՀՐԱԺԱՐԵ՛ԼՈՒ ԺԱՄԸ

Պարոյր Յ. Աղպաշեան



Այն փորձանաւոր ակնկալութիւնը, զգուշաւոր լաւատեսութիւնը ու զգաստաւոր կամաւորութիւնը կար, որ 2025ը կրնար հայ ժողովուրդին տալ նոր լիցք, յուսադրող մղում եւ ապահով մեկնարկ, իր կեանքը բարելաւելու, մարտահրաւերները դիմագրաւելու, դժուարութիւնները յաղթահարելու եւ, ընդհանրապէս, լաւագոյն եւ յարմարագոյն ուղիներով ընթանալու, դէպի այն ավերը, որոնք իր գոյութեան եւ յարատեւման կրնան նպաստել ու հիմնաւորել:

Ո՞վ չի գիտեր, թէ հայութիւնը, իր հայաստանեան ու սփիւռքեան թելերով, ի՞նչպիսի բովերէն անցաւ (ու կ'անցնի), ինչո՞ւ կը յամենայ հոն եւ ո՞ւր կը տապալակի իր որոգայթներուն մէջ:

Անշուշտ, այդ բոլորը, իրենց սայթաքումներով եւ անկումներով, վերիվայրումներով ու գահավիժումներով, նորութիւն չեն եղած իր պատմութեան մէջ, սակայն, շնորհիւ իր վճռակամութեան, իրատեսութեան, անտեղիտալիութեան, անյուսահատութեան ու կառչածութեան, իր ուժերուն ներած չափով, կրցած է դիմանալ, կանգուն մնալ ու պատնէշուիլ, հաւատալով որ ժամանակները կը փոխուին եւ ինք կը շարունակէ իր երթը, անվհասօրէն եւ անյուսահատօրէն:

Այդուհանդերձ, ձախողութիւնները, աղէտները, պատուհասները, միշտ ալ անպակաս եղած են, զինք հալածելու ու հետապնդելու, ճնշելու ու ճզմելու, մեկուսացնելու եւ անկիւնաւորելու, ամէն անգամ որ առիթը ստեղծուած է եւ ատիկա ծառայեցնելու նախայարձակներու քստմնելի նպատակներուն ու զագրելի ծրագիրներուն:

Թէեւ իր դիմադրականութիւնն ու տոկունութիւնը զինք պահած են աներեր եւ անյողորդ, սակայն, պատահած են պայմաններ ու պարագաներ, ուր ան արձանագրած է նահանջներ



եւ ընկրկումներ, որոնք, այսպէս թէ այնպէս, ազդած են իր գոյութենականութեան եւ յառաջդիմութեան վրայ:

Արդեօք միայն Հայոց Ցեղասպանութիւնն էր, որ իր նախօրեակի ու վաղորդայնի կացութեամբներով, հայութիւնը տարտղնեց, տարագրեց, տեղահանեց, վայրավոխեց, զայն դարձնելով ցիրուցան հաւաքականութիւն, պանդխտային, գաղթականութեան, օտարականութեան ու տարաշխարհիկութեան տուեալներով, սովորոյթներով եւ ընթացակարգերով:

Հայ ժողովուրդին համար «սեւ»երով պատուած նմոյշներ եւ օրինակներ հանդիացան այս եղելոյթները, որոնք միշտ ալ մնացին անոր «ընկերակցող ախտերը», առանց զանոնք որդեգրելու, բայց, առանց ալ ձերբազատուելու անոնց ցեցերէն, որոնք, միշտ ալ մնացին այն մեխերը, որոնք խրուած էին իր կողին մէջ, առանց զինք սպաննելու, բայց, անպայմանօրէն, խոցոտելով ու վիրաւորելով անոր հոգե-ֆիզիքականութիւնը:

Հեռու պահելով մեզ, այս հանգրուանին, այդ մութ ու մռայլ արահետներուն մէջ դեգերելու փորձութենէն, անհրաժեշտ կը նկատենք շեշտելու, այլեւ յիշեցնելու, թէ հայութիւնը ինչո՞ւ միշտ «գերին» մնաց նման մակընթացութիւններու, տեղատուութիւններու եւ յամրաընթացութիւններու գարշապարերուն:

Մեր ամբողջ պատմութիւնը, իր սքանչելի նուիրագործումներով, պաշտելի մշակոյթներով, սրբատառ նուաճումներով, բացառիկ յղացումներով եւ իւրայատուկ ներդրումներով, բաւարար չէի՞ն, որ ան դառնար միաձոյլ հաւաքականութեան մը անգին կրողը, վերածուէր մնայուն բարձրագոյն վեմի մը ու թառեր այդ հորիզոնականներուն վրայ:

Բայց, հայութիւնը կրնա՞ր մնալ իր ինքնութենէն եւ արմատներէն «պոկուած կաղնի» մը, երբ ինք չէր կրնար շեղիլ այն ուղիներէն, որոնք զինք շնորհած եւ օրհնած էին, հաւատարիմ մնալու իր ազգային կառոյցներուն ու հիմքերուն կառչածութեան, անսասանութեան եւ ամրակոտութեան:

Ասոնք ըլլալով հանդերձ բացարձակ ճշմարտութիւններ եւ անժխտելի իրականութիւններ, կը մնար զանոնք պահել ու գուրգուրալ անոնց վրայ, որովհետեւ հայութիւնը, փաստօրէ՛ն, չունէր այլ ընտրանք, բացի դառնալու գերիշխողը, գերկրողը ու գերպաշտողը այն բոլոր հրամայականներուն, որոնք զինք կը ներշնչեն, կ'ոգեկոչեն ու կ'արժեւորեն, իր համայնական եւ ազգայնական յատկանիշներով եւ երանգներով:

Հայութիւնը, յետ եղեռնեան եւ, զուգահեռաբար, Հայաստանի Ա. անկախութեան շրջաններէն ետք, ի՞նչ ճակատագիրներով եւ ընթացքներով, փորձեց իր կեանքի երթուղին պահել կենսունակ, բայց, խիստ անփառունակ, աննպաստ եւ անմխիթարական պայմաններով, ուր տարագրեալները ապրեցան աննկարագրելի գոյավիճակներով, իսկ Արեւելահայութիւնը բոլորովին այլ, մինչեւ որ առաջին կողմը, իր կայքը սկսաւ «կենդանացնել», սփիւռքացած երդիքներով, իսկ երկրորդ կողմը, ինքզինք անվտանգուած զգաց, Խորհրդային Միութեան բազմանդամ ընտանիքներուն մաս կազմելով:

Հոս կը վերջանա՞ն, թէ՛ կը լուծուին հայութեան տագնապները եւ օրհասութիւնները, բնական է, ո՛չ մէկը, ո՛չ ալ միւսը, որովհետեւ, ան ուր որ բնակեցաւ ու հաստատուեցաւ, միշտ ալ ՊԱՆԴԻՏԱԿԱՆ ու ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ հոգեբանութիւնը իր մէջ ՎԱՌ մնաց, այսինքն, միշտ այլ հորիզոններ եւ երկնականարներ փնտռելու, որուն համար, միշտ պատրաստ էր՝

ՃԱՄՊՐՈՒԿՆԵՐԸ եւ ԱՆԹԱՑՈՒՊԵՐԸ

շակելու կամ չուելու, դեգերելու կամ թափառելու այլուր, այլ խօսքով՝ եթէ ատիկա ըլլար նոյնիսկ «դժոխք» (իր հասկացողութեամբ ու հաւատալիութեամբ... «դրախտ»ը):



Այստեղ, առանց փակագիծերը փակելու կամ վերցնելու, կայ հսկայ ՓԱԹԵԹ մը, որուն կողքէն կարելի չէ անցնիլ անտարբերութեամբ, ոչ ալ՝ անտեսութեամբ, անշուշտ, այս պարագային, խօսքը կը վերաբերի Հայաստանին, իսկ ատիկա կը բնորոշուի ու կ'արտայայտուի հետեւեալ բանաձեւումով.

ԺԱՄԱՆԱԿԸ ՉԷ՞, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԻՐ ԱՉՔՆ ՈՒ ՈՒՆԿԸ ՀԵՌՈՒ ՊԱՀԷ ՕՏԱՐԱՄՈՒՏՆԵՐԷՆ ՈՒ ԽՌՊՈՏՆԵՐԷՆ, ՈՐՈՆՔ ԶԻՆՔ ՉԵՆ ՊԱՇՏՊԱՆԵՐ, ՉԵՆ ԶՕՐԱԿՑԻՐ ԻՐ ԱՐԵԻԵԼՈՒՄՆԵՐՈՒՆ, ՉԵՆ ԴԱՇՆԱԿՑԻՐ ԱՆՈՐ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ԻՄԿ ԱՄԵՆԷՆ ՎՏԱՆԳԱԻՈՐԸ, ՉԵՆ ՀԱԻՍՏԱՐ ԱՆՈՐ ԳՈՅՈՒԹԵԱՆ:

Եթէ կան որոշ դրական տրամադրութիւններ, անկեղծ յարաբերութիւններ, լուրջ գործակցութիւններ եւ ազնիւ պատրաստակամութիւններ, ատոնք ջախջախիչ մեծամասնութեամբ ցնորքներ եւ գառանցանքներ են, որոնք չունին ո՛չ հիմք, ո՛չ անմիջականութիւն, ո՛չ ալ հետեւողականութիւն, այլ լոկ, բոլորն ալ հիւսուած ու կաղապարուած են թոյլ ու ջրիկ, խախտ ու բեկանելի ճիւղերով:

Շուրջ 33 տարուան անկախութիւնը, իր զանազան դրսեւորումներով, գործարքներով եւ ուղիներով, միթէ՞ չապացուցեց, որ դէպի հոս ու հոն թափառաշրջիլը, աջ ու ձախ յարիլը, արեւմուտք եւ արեւելք շեփորելը գուր եւ անիմաստ մանրութիւններ են, աւելին՝ փտացնող ու բթացնող, խարխուլ եւ անհաստատ, անկայուն եւ անապահով անդունդներու առաջնորդող փորձաքարեր են:

Արդեօք բոլոր նման հովերով շլացողները, երազներով հարբեցողները, բարքերով կարճատեսները, պահ մը չմտածեցի՞ն, չվարանեցա՞ն, չտոսկացի՞ն, թէ այս վարքագիծերով, Հայաստանը կրնա՞յ փրկուիլ, թէ՞ կ'ընկղմի, կը սուրայ, թէ՞ կը խորոտակուի, կը վերականգնի, թէ, կը փլուզուի:

Եթէ գիտակցաբար ըրին (ու կ'ընեն), այն ատեն վա՛յ է եկեր, իսկ եթէ անգիտակցաբար կ'ընեն, հազա՛ր վայ, հայութեան ճակատագիրին եւ ապագային հաշուոյն:

Այնքան փայփայելի ու գուրգուրալի անկախութիւնը, ինչո՞ւ պիտի մատնուի որեւէ արկածախնդրութեան կամ բախտախնդրութեան, զայն նետելով օտարին գիրկը, ենթարկուելով մասնատումներու, հուսկ՝ զան յեղաշրջելով ու գլորելով իր հեղինակութենէն ու վարկանիշէն:

Չէ՞ որ հայրենիքը, իր «յաւերժութեան երթ»ով պայմանաւորուած է եւ այդ սկզբունքով անոր կառչած կը մնայ հայութիւնը, զայն նկատելով այն մնայուն օրրանը, որ իր մէջ պիտի պարփակէ իր բոլոր զաւակները:

Վերջին շրջանին, ո՞վ անձկութեամբ ու մտահոգութեամբ չի հետեւիր, հայրենի խորհրդարանական մարզէն ներս տեղի ունեցող յաջորդական նողկալի զարգացումներուն, որոնք միայն այսօրուան տխրահոշակ պատկերը չեն, այլ՝ երկար ժամանակէ ի վեր, իշխանութիւն-ընդդիմութիւն բախումներու՝ անժողովրդավարական եւ անհանդուրժողական ամբողջ ալիքով մը:

Դուրսէն դիտող մը, դիտորդ մը, ի՞նչպէս կրնայ համակերպիլ ու հաշտուիլ այն տեղաշարժերուն հետ, որոնք տեղի կ'ունենան, նախարարներու ու պատգամաւորներու շարունակուող հրաժարումներու ողբալի շարանով:

Կը նշանակէ թէ՛ «բան մը» կայ, որ նորմալ չէ այլեւս, ոչ ալ՝ ընդունելի, երբ գացող-հրաժարողը, ինչ-ինչ պատճառներով ալ ըլլայ, իր ետին կը ձգէ ԲԱՑ հարցադրումներ, մինչ անդին, անոնց տեղ կը պաշտօնակոչուի նոր մը, կարծես թէ ոչինչ պատահած է եւ եղածը «քմահաճ խաղառճ» մըն է, հետեւաբար, բնական գործընթաց մը, ինչ որ երբեք չի կրնար բացատրելի ըլլալ, ո՛չ օրինականօրէն, ո՛չ կառավարականօրէն եւ ո՛չ ալ ժողովրդավարականօրէն:



Միւս կողմէ, այսօր բացայայտելի եւ արձանագրելի է, որ Հայաստանը ինքզինք կը մղէ ու կը տանի դէպի նոր հանգրուանի մը, երբ ամերիկեան-հայկական ռազմավարական համագործակցութեան համաձայնագիր մը կը ստորագրէ (այլապէս ալ՝ ֆրանսական, եւրոպական եւ այլ կողմերու հետ նմանօրինակ դաշինքներ) առանց որ անոնք որդեգրուին պաշտօնական-օրէնսդրական բովերէն:

Դիտարկելի է, որ ցարդ որեւէ օտարոտի մերձեցումներէն օգտուեցա՞ւ Հայաստանը, բացի խօսքային ու ցուցամոլային «թուլակազմ» շարժերէն, նոր եւ աւելի բարդ ցանցերով մնալով... կախեալ իրավիճակներու մէջ, մութ եւ անշօշափելի ապագայի մը հեռանկարով:

Այլապէս ի՞նչով լուսաբանել եւ արդարացնել, իր ՀԱՊԿ-էն (Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութիւն), ԱՊՀ-էն (Անկախ պետութիւններու համագործակցութիւն) կամ եւրասիական միջկառավարական խորհուրդէն, իր սպառնալիքը կամ տատամտումը քաշելու, խուսափելու, հեռանալու եւ կամ անոնց հետ ԱԺԱՆ ու ԳԾՈՒԾ հաշիւներով շարժիլը կամ գործելը, ձգելով պատահականութեան ու թողլթութեան:

Եթէ ասոնք ինքնազուիս ու միազուիս վերաբերմութիւններու անլուրջ խաղք մըն են, դուրսի ուժերով զօրանալու բարբաջանքներուն հաւատք ընծայելով, ո՞վ ըսաւ թէ ասոնք առողջ, մնայուն եւ յուսատու երաշխիքներ են:

Զարմանալի է, ինչո՞ւ կը մոռցուի պատմական Պեռլինի վեհաժողովը, երբ Խրիմեան Հայրիկ անկէ դուրս եկաւ «թուղթ եւ երկաթ շերեփ»ներու վկայակոչումով, իսկ առ այդ, Զօրավար Անդրանիկ, իր ԽԻԶԱԽ կեցուածքով արդէն հանդէս եկած է, երբ երկուքն ալ օտարներու վրայ (եւրոպական թէ թուրանական) երբեք յոյս չդնելու... պայմանով, քանի ոչ իմաստ ու շահ կան հոն, այլ՝ մահացու ԱԻԱԸՏ մը, ուշ կամ կանուխ, պատահելու հաւանականութեամբ:

Իսկ այսօրուան պատկերը, վաղուան գուշակումներով, արդեօք վախ ու սարսափ չի՞ պատճառեր, որ Հայաստանը կրնայ մատնուիլ անորոշութիւններու, զայթակողութիւններու եւ ուղղութիւններու բարդ եւ անլոյծ հանգոյցներու:

(Պէլրուք)

5/2/2025

ՄԵՐՈՒՆԴ

«Ցանկացած ելեւմտական, տնտեսական քաղաքականութիւն դատապարտուած է ձախողման, երբ երկիրը ծերանում է»:

Միշել Դեբրե

Իւրաքանչիւր երկրի, քաղաքի, գիւղի իրական հմայքը նրա շինութիւնները չեն, այլ բնակիչները, որոնց աճն ու բազմացումը ցանկալի լինելով դառնում է նպատակ՝ հաշուի առնելով տարբեր հիւանդութիւնների, արկածների պատճառով կորուստները: Բնակիչների շրջանում է, որ ծնւում ու զարգանում են զանազան ուղղութեան գաղափարախօսութիւններ ու մտաւոր հոսանքներ: Աւելի քան հարիւր տարի առաջ էր, երբ սկիզբ առին քաղաքական ձախակողմեան գաղափարի թեքումով խմբակներ, որոնք իրենց բնոյթով թէ համոզմունքով տարբեր ու հակադրուած գործիչներ էին, այլ ընկալում ունէին առօրեայ իրականութեան մեծ կամ փոքր իրադարձութիւնների նկատմամբ:

Այլախոհութիւն չէր նպատակը, այլ երեւոյթներին տարբեր գնահատական ու կշիռ տալ եւ զանազան համոզումների հիմունքով՝ փոխել սեփական ապրելակերպը, մտայնութիւնը կենցաղը՝ ներշնչուած ազատ խօսքի իրաւունքի առկայութեամբ :



Բազում եւ բազմազան էին նորաստեղծ խմբերը «մտահոգուելով», ձգտելով հիւլէական ռումբերի ու կայանների արգելմանը, բնապահպանութեան հարցերի վերանայումին, նոյնիսկ կոկորդիլոսներին բարենպաստ պայման ստեղծելու անհրաժեշտութեամբ: Նրանք յայտնի են WOKE (առաջադէմ արթնացում) անուան տակ, որոնցից է նաեւ «No kids» (ոչ երեխայ) հոսանքը, որոնց քարոզին հետեւողների հիմնական ցանկութիւնը, թելադրանքն ու պահանջն է՝ կանանց համոզել, որ մերժեն ծննդաբերումը, զուակ չունենան. աւելի ազատ ժամանակ տրամադրեն վայելքներին, այսինքն՝ դադարել կին լինելուց: Որքան որ տարօրինակ թուայ քարոզը՝ այն լսուեց, տարածուեց եւ ունեցաւ, ի սփիւռս աշխարհի, մեծաթիւ հետեւողներ:

Որոշ երկրների ղեկավար-պատասխանատուների համար երեւոյթը մտահոգող էր՝ բնակչութեան աճի զգալի նուազումի պատճառով: Ֆրանսիայում, ուր բարեկեցիկ կեանքը համեմատաբար ապահով է, չկայ պատերազմ ու համաճարակ, իսկ առողջապահական համակարգը պարկեշտ մակարդակի ու արտագաղթը բացակայ, ծննդաբերութեան անկումը՝ պաշտօնապէս եղել է 150 հազար՝ 2010 եւ 2023-ի միջեւ: Պետութեան տազնապի ազդարարուած կոչերը անդադար յիշեցնում են, որ նշուած անկումը բնակչութեան 0,03% է կազմում եւ պէտք է պայքարել այդ նուաստ երեւոյթի դէմ:

Առակս զի՞նչ ցուցանէ:

Մեր հայրենաբնակ քոյրերն ու դուստրերը եւս, ցաւօք, վարակուել ու տառապում են զուակ չունենալու այդ ախտով եւ սահմանափակուում են ոչ աւելի քան մէկ կամ երկու զուակով (եզ լինելու դէպքում զայն վիժեցնելու պայմանով) բացառութիւնները անշուշտ յարգելի են: Յայտնի փաստ է, որ երկու զուակով բնակիչների աճ չի կարող լինել, քանզի երկու զուակը փոխարինում են ըստ քանակի ծնողներին, իսկ ենթադրել մահացութեան պարագային վստահ թերաճ է լինում:



Երեխայ ունենալու գաղափարը ժխտողները երբեւէ դոյզն հոգս ու կարծիք անգամ չունեն, թէ ինչպէ՛ս եւ ի՛նչ միջոցներով է անհրաժեշտ ապահովել ապագայ սերունդների բարգաւաճումը, քանզի նշուած քայլերը նպատակի հետ համատեղելի չեն, այլ հակասական :

Շատ երկրներ, ծննդաբերութիւնները քաջալերելու նպատակով, տարբեր տեսակի նպաստներ են սահմանել եւ այն յատկացնում նորածիններին, որ ուղղուած են քաջալերել մայրացած կանանց, զուակի հետ կապուած ծախսերին: Միսալ չէր լինի, եթէ դպրոցական դասընթացներին, յղիութեան վիժումի դիպուածը, մատուցուէր պարմանուհիներին, գերագոյն յանցագործութիւն լինելու իմաստով՝ հիմք ունենալով անժխտելի մի հանգամանք, որ սաղմը արդէն կենդանի էակ է եւ անձեռնմխելի, իսկ արարքը՝ ոճիր:

Աներկբայ է, որ մեր երկրի ազգագրական (ethnographie) խնդիրները աւելի բարդ են, սուր եւ խճճուած, մինչեւ իսկ ծայրայեղ անհանգստացնող ու դժուարալուծելի, ուր կանանց վերոնշեալ խնդրի հետ ունենք ստիպողա-կան պատերազմի զոհերը եւ սարսափելի արտագաղթը, որ վերջ-դադար չունի. բնակչութեան նուազումը մինչեւ 30% հասցնելով որ աննախադէպ կակծալի փաստ է:

Անհերքելի է, որ մտայնութեան մեծ յեղափոխութեան կարիք ու պահանջ կայ բնակչութեան որոշ խաւերում եւ այն չի բռնկուի ինքնուրոյն: Պետութիւնը հսկայական անելիքներ ունի այդ ասպարէզում, մինչեւ իսկ տուն դարձի քայլեր ձեռնարկելով, որ բազում խնդիրների հետ է կապուած՝ տնտեսական թէ բարոյական: Մէկ բան ստոյգ է, որ այդ խնդիրը մի անկիւն նետելիք չէ, այլ յատուկ ուշադրութեան արժանի, բարձր մակարդակի ակնկալիքով լուծումներ յայտնաբերելու:

Առեղծուածային մի հարց է ծագում, թէ հազարամեակ ապրելով օսմանցիների, պարսիկների, ռուսների լուծի ներքոյ հայերը մնացին կառչած իրենց հողին ու ընտանի պարագաներին՝ առանց գաղթելու մտադրութեանը գերի դառնալու, բացի հատ ու կենտ դէպքերից, որոնք կապուած էին առ եւ տուրի գործունէութեան, իսկ եղեռնի հետ կապուած ջարդն ու քստորը որեւէ աղերս չունեն մեր կամքի ու ցանկութիւնների հետ եւ որոնց հարկ չկայ անդրադառնալու. այն յայտնի է ամէնքին եւ որեւէ կապ չունեն երկիր լքելու հետ, այլ փախուստ էր կեանք փրկելու բնագոյով:

Արտագաղթի չարիքը հսկայական չափերի հասաւ, երբ ի վերջոյ ունեցանք ազատ եւ անկախ պետութիւն, երկիրը վերակառուցելու հնարաւորութիւն ու պահանջ, որ սերտ կապուած էին անխուսափելի դժուարալոյծ խնդիրներին, եւ երկնային առիթը մեզ էր տրուած, որ ի վերջոյ համայն հայութիւնը համախմբուած, թեւերը քշտելով գործի անցնի, բայց աւաղ, փոխարէնը երկրում ծնունդ առան, զարգացան ու բազմացան բազմաթիւ, բազմաբեւեռ հին ու նոր կուսակցութիւններ, որոնց ոչ կարիքն ունէինք եւ ոչ պահանջը, քանզի փաստերը յայտնի են, որ եղեռնից առաջ եւ յետոյ հայ քաղաքական գործիչները ոչ մէկ դրական արդիւնքի են հասել բազում ատեաններում, ուր հայկական հարց էին քննարկում եւ այդ շարունակում է մինչ օրս:

Մտադիր չեմ որեւէ յանցաւոր ու մեղադրեալ փնտռել, միայն կ՛ուզեմ հասկանալ, թէ երբ պիտի դադարենք միմեանց միս ուտել եւ կոկորդ կրծել:

Այդ չէր հայի երազանքը :

25-1-25

Ռուբէն Յովակիմեան

ՀԱՅՈՒՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ

ԴՈՎՏ. ՀՐԱՅՐ ՃԵՊԷՃԵԱՆ



Աւանդութիւնը սերունդներու ու անոնց միջոցով փոխանցուած ժառանգութիւն է, որ կ'ընդգրկէ անձին, ընտանիքին, հաւաքականութեան եւ ազգին իւրայատուկ միտքը, կեցուածքը, վարուելակերպն ու, տակաւին, ընկերային եւ կրօնական սովորութիւնները: Աւանդութիւնը այս իմաստով կը դառնայ ապրող կեանք՝ ներառելով մարդուն, հաւաքականութեան եւ ազգին ամբողջական մշակոյթի

գիտակցութիւնը:

«Աւանդութիւն» բառին լատիներէն արմատը՝ tradere, կը նշանակէ բաժնեկցիլ, պահել եւ փոխանցել վերեւ յիշուած ժառանգութիւնը՝ ապահովելու համար հաւաքականութեան ինքնութիւնը եւ պատմութիւնը: Այս իմաստով, աւանդութիւնը կը դառնայ կեանք, որուն պէտք է գորգորալ եւ պահել, բայց նոյնքան նաեւ՝ վերակենսաւորել: Արամ Ա. վեհափառ հայրապետը մեզ բոլորս կը հրաւիրէ մեր աւանդութիւններու վերակենսաւորման՝ 2025-ը հռչակելով «Աւանդութիւններու վերակենսաւորման տարի»:

Կան աւանդութիւնը պահելու եւ վերակենսաւորելու հայկական հիմեր, ենթահողերը, անոնց պարտադրանքները եւ այս բոլորին մէջէն զայն վերակենսաւորելու կարելորութիւնը: Իբրեւ հայեր, եթէ սփիւռքը մեծ համեմատութեամբ դասականն էր, բայց վերջին երեսուն տարիներուն անոր վրայ եկաւ աւելնալու հայաստանեանը: Հայուն աւանդութիւնը եւ անոր վերակենսաւորումը վերածուեցաւ «երկսայրի սուր»-ի մը, իսկ հայր՝ իր դասական եւ հայաստանեան շերտերով, սփիւռքեան իրականութեան մէջ պարտի անոր երկու կողմերը պահել սուր:

Տուպայ, Արաբական Միացեալ Էմիրութիւններ, յունուար 2025: Տուպայը օժտուած է օփերայի համար սարքուած շատ գեղեցիկ համերգասրահով մը՝ կառուցուած արդիական ոճով, ինչպէս՝ Տուպայի իւրաքանչիւր ենթակառոյց: Ներկայ պիտի գտնուիմ Հայաստանի սիմֆոնիկ նուագախումբի ելոյթին՝ ղեկավարութեամբ մայեսթրօ Սերգէյ Սմբատեանի, որուն երաժշտական եւ խմբավարի տաղանդին ու կարողութեան ծանօթ եմ:



Տուպայի օփերայի համերգասրահը իւրաքանչիւր ելոյթէ առաջ ունի հանդիսատեսներուն համար սարքուած հիւրասիրութեան բաժին մը: Փոքր սեղանի մը ետին կանգնած՝ կը վայելէի այդ պահը, երբ երիտասարդ գոյգ մը մօտեցաւ ինձի եւ անզլերէն լեզուով խնդրեց, թէ կրնա՞յ բաժնեկցիլ սեղանը ինձի հետ: Սիրով ընդառաջեցի իրենց խնդրանքին, բայց շարունակեցի վայելել իմ հիւրասիրութիւնս՝ առանց խանգարելու զիրենք: Երիտասարդ գոյգը շատ մեղմ ձայնով սկսաւ զրուցել արեւելահայերէնով: Չուշացաւ հարցումս. «Հա՞յ էք»:

Երիտասարդ գոյգը շատ ուրախացաւ: «Մենք կռահեցինք, որ հայ կրնաս ըլլալ եւ անոր համար համարձակեցանք քեզի մօտենալու», ըսին ինձի:

Երկու հայորդիները մասնագիտութեամբ բժիշկներ են՝ վկայուած Երեւանի բժշկական համալսարանէն եւ Տուպայ հաստատուած են աշխատանքի բերումով: «Շատ գեղեցիկ քաղաք է, կը սիրենք հոս ապրիլ», ըսին ինձի:

«Դուք՝ դասական սփիւռքի հայերը, շատ աւելիով կապուած էք հայրենիքին եւ զիտէք՝ ինչպէ՛ս պահել հայուն արժէքները եւ ինքնութեան գիտակցութիւնը», ըսաւ երիտասարդ կինը: «Մենք՝ հայաստանցիներս, երբ դուրս գանք Հայաստանէն եւ հաստատուինք սփիւռք, շատ աւելի արագ կը լուծուինք տեղական պայմաններուն հետ»:

Չզարմացայ երիտասարդ բժշկուհիին նկատողութեան: Բազմաթիւ այցելութիւններուս եւ հանդիպումներուս ընթացքին՝ սփիւռքի տարբեր երկիրներու մէջ, նշմարած եմ այս մէկը: Նոյնքան նաեւ տեսած եմ, թէ հայաստանեան եւ դասական սփիւռքի միջեւ հաղորդակցութեան եւ համակցութեան կապերը որքա՛ն թոյլ են, եւ երբեմն նոյնիսկ չկան: Եթէ դասական սփիւռքը կը մաշի, բայց անոր վրայ կու գայ աւելնալու հայաստանեանը, որ կը լուծուի:

Այս վիճակներուն մէջ հայուն համար եղած է, կայ ու պիտի շարունակէ մնալ հիմնական մեծ ազգային առաքելութիւն մը՝ պահել ազգային ինքնութիւնը, լեզուն, մշակոյթն ու արանդութիւնը, որ՝ «Վճռական դեր ունի անոր ինքնութեան երաշխաւորման, ամբողջականութեան պաշտպանման, գոյութեան ամրացման ու շարունակականութեան պահպանման մէջ» (Արամ Ա. վեհափառ հայրապետ, 2025):

Հայկական սփիւռքը, գէթ՝ դասականը, մեծ համեմատութեամբ հետեւանք է Ցեղասպանութեան: Սփիւռքի տարածքին շինեցինք «պզտիկ Հայաստաններ», որովհետեւ



ուզեցինք ապրիլ մեր ինքնութեամբ եւ ասանդութիւններով՝ առանց անտեսելու տեղականն ու տեղացին:

Հաւաքականութիւններ կ'ապրին իրենց ասանդութիւններով եւ անոր բաղադրիչ՝ մշակութային եւ ինքնութեան արժէքներով: Այս կը դառնայ իւրայատուկ իւրաքանչիւրին համար: Վեհափառ հայրապետը կը հիմնաւորէ իր թեզը, երբ կը շեշտէ, որ ասանդութիւնը՝ «Ժողովուրդին գոյութիւնը կ'ամրապնդէ», եւ գոյութիւնը պահելով՝ «Արժէքները, տեսլականները, հաւատքը ու ոգին կը պահէ»:

Ասանդութիւնները, զանոնք պահելն ու փոխանցելը պետք չէ դիտել միայն ներազգային տեսանկիւնէն, բայց նոյնքան նաեւ՝ համամարդկային եւ համազգային տեսանկիւնէն: Համաշխարհային քաղաքակրթութիւնն ալ կը հարստանայ այս բազմամշակութային արժէքներով եւ իւրաքանչիւր ազգային ասանդութիւններով: Հայը, որ կը տքնի պահելու ու փոխանցելու իր ասանդութիւնները սերունդէ սերունդ, իր նպաստը կը բերէ համամարդկային քաղաքակրթութեան զարգացման՝ բաժնեկցելով իր ասանդութիւնները:

Ներկայ օրերու աշխարհի յառաջխաղացքին մեջ մարդիկ կրնան ասանդութիւնները ժամանակավրէպ նկատել: Վեհափառ հայրապետը կը շեշտէ, որ սխալ է այս ըմբռնումը, թէ՛ «Ասանդութիւնը անցեալ է, հնամաշ, անհրապոյր, անիմաստ եւ ներկայ ժամանակներու անյարիր»: Այս մտածողութիւնը ճիշդ չէ: Ժողովուրդ մը կ'ապրի իր ասանդութիւններով: Ասանդութիւններով ապրիլը չի նշանակեր, թէ պիտի ապրինք կեթոյական դրուածքով: Կարելի չէ համամարդկային կեանքի ու անոր հաղորդակցութեան մեջ մտնել, ընդունիլ, յարգել եւ գնահատել ուրիշը, երբ մենք մեր ինքնութիւնը չենք գիտեր:

Աստուածաշունչի դաստիարակութիւնը այս իմաստով շատ դիպուկ է. «Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս» (Մատթէոս 22:39):

Եթէ քու անձդ չսիրես, այսինքն ինքնութիւնդ, մշակոյթդ, լեզուդ, հաւատքդ, այսինքն՝ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԵՐ, պիտի չկարենաս տեսնել ուրիշը՝ «ընկերդ», իր լեզուամշակութային եւ ազգային ասանդութիւններով: Ազգային ասանդութիւնը պահելը, կերտելն ու վերակենսաւորելը պիտի առաջնորդեն համազգային արժէքներու զիտակցութեան: Եթէ հայը այսօր հարկադրուած է բացուելու աշխարհին, այս պիտի նշանակէ, որ շատ աւելիով պիտի ամրապնդէ իր ասանդութիւններն ու վերակենսաւորէ զայն աւելի ուժեղ եւ օգտաշատ ձեւով հաղորդակցելու բազմակրօն եւ բազմամշակութային ասանդութիւններով լեցուն համակարգերու հետ:



Աշխարհ այսօր խառնիճադանճ մթնոլորտի մէջ է: Մարդը կը փնտռէ ու կը փորձէ ստեղծել նոր համակարգեր, նոր արժէքներ, նոր չափանիշներ ու երեւի տակաւին՝ նոր «աստուածներ»: Հայը պէտք չունի այս խառնիճադանճ մթնոլորտներուն ստեղծած ու սարքած «նոր»-երը կիրարկելու: Հայը ունի իր ազգային արժանատիքները: Ինչպէս վեհափառ հայրապետը կը յորդորէ, պէտք է՝ «Հաւատարիմ մնալ մեր արժանատիքներուն նկատմամբ»: Արժանատիքները «անփոփոխելի ու անհպելի երեւոյթ չէ» (Արամ Ա. վեհափառ հայրապետ 2025): Եթէ պիտի բարեփոխենք եւ պատշաճեցնենք մեր արժանատիքները ներկայ օրերու աշխարհի պայմաններին հետ, եւ պէ՛տք է որ ընենք, պարտինք փոխել «կեղերը», բայց՝ պահել «միջուկը» (Արամ Ա. վեհափառ հայրապետ, 2025):

Իսկ միջո՞ւկը:

Հայն է: Հայուն ինքնութիւնը, մշակոյթը, լեզուն, հաւատքը, արժանատիքները: Հայուն արժանատիքները հայը ապրեցնողն է: Հայուն արժանատիքները հայուն «ընդհանրական ու գերագոյն արժէքներն ու իտեալները, իրաւունքները եւ պահանջները արծարծ պահող կենդանի յուշարարներն է» (Արամ Ա. վեհափառ հայրապետ, 2025):

Հայը իր արժանատիքեամբ է, որ կը դառնայ ազգային: Հայը իր արժանատիքեան մէջէն ու անոր միջոցով է, որ լաւապէս կրնայ մտնել համազգային ու համամարդկային իրավիճակներուն մէջ:

Պիտի պահենք ազգայինը: Ազգայինը պահելով՝ կրնանք կերտել նաեւ համազգայինը եւ մտնել համաշխարհային քաղաքակրթութեան մէջ:

Ազգայինը-համազգայինի կամրջող օղակը: Հայուն արժանատիքն է:

Հայը պիտի պահէ իր արժանատիքները: Բայց անպայմանօրէն պիտի վերակենսաւորէ զայն:

Քուէթ

Յունուար 2025

ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՅԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՍԸ



Հայաստանի մէջ 2023-2026 թուականներուն փուլային եղանակով կը կիրառուի հասարակ քաղաքացիներուն եկամուտներուն համընդհանուր յայտարարագրման համակարգը:

Այս օրէնքը, իր յառաջացուցած ադմուկով հանդերձ, արդար պիտի ըլլայ խոստովանիլ, որ իր տեսակին մէջ եզակի չէ արեւմտեան շատ մը երկիրներու հետ համեմատած, սակայն նաեւ արդար է բարձրաձայնել, որ նշեալ կարգադրութիւնը անըմբռնելի է, եւ ինչու չէ՝ նաեւ դաժան, ֆինանսական գրագիտութեան մէջ, ընդհանրապէս ոչ այնքան յառաջադէմ հաւաքականութեան մը մէջ ինչպիսին է մեր Հայրենիքի բնակչութիւնը:

Մինչ մեր երկիրը կը դիմագրաւէ զարմանազան խնդիրներ եւ նոյնիսկ գոյութենական մարտահրաւերներ, սոյն անժամանակ պարտադրուած օրէնքը իսկապէս ալ մղձաւանջ է քաղաքացիներուն համար, որոնց մեծամասնութիւնը առանց այս ալ կը տուայտի թշուառութեան մէջ, առաւել եւս, մեծ վստահութիւն չունի իր իշխանութեան վրայ:

Պետական մարմիններուն կողմէ անդադար կ'արդարացուի այս օրէնքին որդեգրումը առաջ քշուելով այն միտքը, որ այս բանը իբր թէ պետութեան կողմէ փտածութեան (corruption) դէմ պայքարի շրջագիծէն ներս է:

Անշուշտ քաղաքացիէն կը թաքցուի այն հաւանական պարագան, որ 12 միլիառ տոլարի արտաքին պարտքի մէջ խեղդուող եւ պետական պիտճէին մէջ ահագին ճեղքեր ունեցող իշխանութեան մը համար եկամուտ պետք է, նախ պահելու համար իր իշխանութիւնը, ապա գումարներ հայթայթելու այն հսկայական մսխումին համար, որ կ'ապահովէ համակարգի իշխանիկներուն բարօրութիւնը: Նաեւ անշուշտ կը թաքցուի դարձեալ այն դառն իրականութիւնը, որ նման օրէնքը կրնայ պարտադրուած ըլլալ համաշխարհային նաեւ արեւմտեան ֆինանսական համակարգին՝ ինչպէս Արժոյթի Միջազգային Հիմնադրամ (IMF) կամ World Bank, եւ այլ կազմակերպութիւններու կողմէ, հսկայական պարտքերու



տակ թաղուած Հայաստանին նոր պարտքեր կամ վարկեր տրամադրելու կամ անոնց տոկոսներուն սպասարկման որպէս երաշխիք:

Այս բոլորով հանդերձ կայ նաեւ նման օրէնքներով քաղաքացիին գրպանին մէջ բնակելու նկրտում ճիշդ այն իշխանութեան կողմէ, որուն իշխանութեան գալու կեղծիք/խոստումներուն հիմնասիւնը կը հանդիսանար անոր ղեկավարին այն յայտարարութիւնը, որ «Քաղաքացիին հարկուելու առարկայ» չէ...:

Հարկային այս օրէնքի տաղտուկը նաեւ հոգեբանական ճնշումի միջոց է, որ հաւանաբար կը կիրարկուի իշխանութեան կողմէ, քաղաքացիին շեղելու համար երկրին սպառնացող խնդիրները վերլուծելէ, ինչպէս նաեւ թէական օրինախախտի կարգավիճակին մէջ պահելու համար խեղճ քաղաքացիին, որ իր սեփական եկամուտին յայտարարութեան մէջ կրնայ ակամայ սխալներ գործել կամ բացթողումներ թող տալ, որոնք ենթակայ են տուգանման կամ դատական հետապնդման:

Եւ ահա այսպէս, հարիւր հազարաւոր քաղաքացիներ սեւ օրը ինկած են, որոնցմէ շատ շատերը շուտով օրինախախտութեան ազդարարագրեր կրնան ստանալ պատկան մարմիններուն կողմէ, իրենց չհասկցած օրէնքը լաւապէս կիրառած չըլլալու «մեղքով»:

Երեկոյեան երբ նստած կը մտածէի այս անելին մասին, որ խուճապ, վախ եւ նմանօրինակ խառն զգացումներ յառաջացուցած է հանրութեան մօտ, յիշեցի տարիներ առաջ կարդացած մէկ գիրքս՝ «Երազներու Դղեակը» (The Palace of Dreams), որուն հեղինակն է ալպանացի գրող՝ Իսմայէլ Քատարէն: Այս խիզախ մտաւորականը, իր գլուխ գործոցը հանդիսացող գիրքը գրած ու հրատարակած է Ալպանիոյ մէջ 1981-ին կոմունիստական կարգերու օրերուն: Գիրքը այլակերպական բնոյթով բովանդակութիւն մը ունի, որ խորքին մէջ քննադատութիւն է Սովետական Միութեան կամ անոր արբանեակ արեւելեան եւրոպայի երկիրներուն բռնատիրական կարգերուն, սակայն գրողը այլակերպական ոճով մը քօղարկած է զայն, ներկայացնելով իբր Օսմանեան կայսրութեան օրերուն կատարուած իրադարձութիւն, որ ամէն պարագային ալ նոյնքան եւ անելի բռնատիրական էր սուլթանական մենատիրական իշխանութեան ներքոյ: Նշեմ, որ այսօրուան Ալպանիոյ աշխարհագրական տարածութիւնը, մինչեւ իր անկախացումը՝ 1912-ին, մաս կը կազմէր Օսմանեան կայսրութեան:

Գեղարուեստական երեսակայական ժանրի պատկանող այս այլակերպական նիւթով դասական վէպը, ինչպէս վերը նշեցի, գրուած է Ալպանիոյ իշխանութեան կոմունիստական օրերուն եւ որուն նիւթը ներկայացուած է իբրեւ 19-րդ դարի վերջին՝ Օսմանեան կայսրութեան տիրապետութիւնը ներկայացնող օրերը: Վէպին մէջ տուեալ շրջանին քաղաքացիները հարկադրուած էին ամէն առաւօտ ներկայանալ «Դապիր Սերայ» կոչուած պետական դղեակը, այնտեղ գրանցելու համար նախորդ գիշերուան իրենց տեսած երազը...: Գիրքին գլխաւոր հերոսը՝ նշեալ դղեակին ղեկավարը, Մարք-Ալեմ անունով պաշտօնեայ մըն է, որ ալպանացի ըլլալով հանդերձ մօտ էր օսմանեան իշխանութիւններուն ու այդ պաշտօնին հասած էր կամակատարն ու գործակալը ըլլալով թուրքերուն...:



Քաղաքացիներուն տեսած երազները կը գրանցուէին սոյն գործակալին վերահսկողութեամբ, մինչ դղեակին աշխատողները պէտք է վերլուծէին եւ հետեւութիւններ ընէին երազներէն, եզրակացնելու համար թէ ի՞նչ կը սպառնայ Սուլթանին եւ թէ ինչպէ՞ս պիտի ըլլայ կայսրութեան ապագան: Արդիւնքը՝ երազներու մեկնաբանութեան հետ մէկտեղ կը փոխանցուէր Ստամպուլ՝ բռնատէր Սուլթանին ուշադրութեան...:

Պատկերացուցէք քաղաքացիներուն երազները գրանցելու՝ յայտարարագրելու անհեթեթութիւնը, միեւնոյն ժամանակ այն տաղտուկն ու հոգեկան ճնշումն ու տառապանքը խեղճ քաղաքացիներուն, նման բռնատիրական կարգի մը ներքոյ...:

Իր օրերուն, գրաքննութեան իբրեւ արդիւնք՝ արգիլուած այս գիրքը, բաւականին ժողովրդականութիւն ունեցած է եւ աւելի ուշ, արժանացած է շատ մը վերահրատարակութիւններու:

Աւարտելու համար այսօր սովորականէն աւելի երկարած սիւնակս, պիտի առաջարկեմ, որ այս տողերը ընթերցողը, ինքն ալ կարդայ նշեալ գիրքը, եւ եթէ մեր Հայրենիքին ներկայ անհաւատալի ու ցաւալի իրավիճակին հետ զուգահեռներ ինքն ալ գտնէ անոր մէջ, ապա մեղաւորը ես չեմ...:

ՄԵԻԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ
Լիբանանի ԶԱՐԹՕՆՔ օրաթերթի
Գլխաւոր խմբագիր

ԱՆՆԵՐԵԼԻ ԵՒ ՆՈՅՆՔԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ԿԸ ԳՏՆԵՍ ԳՈՐԾՈՂ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՀԱՐՈՆ ՇԻՐՏԸՄԵԱՆ



Հայ ժողովուրդի խորհրդանիշները կասկածի տակ առնելու, ազգային եւ պետական գաղափարախօսութեան հանդէպ հեզնանքը նոր թափ ստացաւ երբ Հայաստանի հանրապետութեան վարչապետը քանի մը յայտարարութիւններով նոր ցնցումներ փորձեց յառաջացնել Սփիւռքի եւ Հայաստանի մէջ:

Լուրջ հարցական է, թէ որո՞ւն կը ծառայեն եւ ի՞նչ կը հետապնդեն Արցախի, հայ ժողովուրդի յիշողութեան, Հայոց ցեղասպանութեան, հայ եկեղեցւոյ դերակատարութեան, Հայաստանի անվտանգութեան վերաբերեալ իշխանութիւններուն կեցուածքները: Դատափետած «Իրական Հայաստան»-ի մը երա՞զը արդեօք...:

Միայն դաւաճանութիւնն ընդունիք, Զուիցերիոյ հայ համայնքի ներկայացուցիչներուն առջեւ Հայոց ցեղասպանութեան հանդէպ վարչապետին ժխտողական յայտարարութիւնները, թէ՛ ազգը



պառակտելու նոր սեպ: Իր պատճառով ստեղծուած Սփիւռք- հայրենիք խրամատը տակաւ խորացնելու նոր «ռազմավարութիւն»:

Ըստ վարչապետին՝ «քննարկումներու առարկայ»ի անհրաժեշտ է վերածել Հայոց Ցեղասպանութիւնը:

Միջազգային ընտանիքը յստակ գնահատական տուած է մեր վարչապետին ամօթալի, ստորնացուցիչ հարցականներուն: Տասնեակ պետութիւններ, միջազգային կառոյցներ ճանչցած են քսաներորդ դարու Առաջին ցեղասպանութիւնը: « Պէտք է գիտնալ թէ ինչ՞ տեղի ունեցած է, ինչո՞ւ տեղի ունեցած է, որո՞ւ միջոցով եւ ինչպէ՞ս ընկալած ենք Հայոց ցեղասպանութիւնը եւ ինչո՞ւ Հայաստանի օրակարգին մէջ յայտնուած Հայոց ցեղասպանութիւնը»: Վարչապետը դժգոհութիւն ալ յայտնած է. «Մա պէ՞տք է հասկնանք, թէ՞ չպէտք է հասկնանք»: Անգրագիտութիւն պարզապէս: «Իրողութիւն»ը ուսումնասիրելու վարչապետին «տեսութիւն»ը լիովին կը համապատասխանէ Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը «խմբագրելու» Թուրքիոյ պահանջին:

Պատահականութիւն էր վարչապետին յայտարարութիւնը Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացող օրէնք քուէարկած պետութեան մը սրտին մէջ...:

Արդե՞օք հող կը պատրաստուի հայ ժողովուրդին դիմաց թուրք մարդասպանները արդարացնելու...

Երկրագունդին վրայ ամենատգէտ մարդն անգամ գիտէ եւ լսած է Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը: Վարչապետը , առաւօտները հեծանիւ վարելու, հաւկիթ տապկելու, անզլերէն դասընթացքներու հետեւելու փոխարէն, նախընտրելի պիտի ըլլար, որ որեւէ գրավաճառի հանդիպէր, ազգային ակադեմիա կամ ազգային գրադարան յաճախէր, օտար հեղինակներու, պատմաբաններու գործերուն ծանօթանար Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ...:

Վարչապետը եթէ այսօր կը փափաքի հասկնալ, թէ ի՞նչ պատահած է 1915-ին, զարմանալիօրէն ճիշդ չորս տարի առաջ ունէր այդ հարցումին պատասխանը:

Խօսքը վարչապետինն է (2021)՝. «Հայոց ցեղասպանութեան մեղաւորներն ու պատասխանատուները միանշանակ օսմանեան կայսրութեան երիտթուրքական կառավարութիւնն էր իր փանթօրքիզմի գաղափարախօսութեամբ, որուն նպատակն էր մոնօթէնիկ միացել եւ ծաւալապաշտական Թուրքիայի ստեղծումը, որ իր հերթին ծնած էր հայատեացութիւն եւ ազգային ու կրօնական փոքրամասնութիւններէն ազատելու գաղափարը»: Ինչո՞ւ այս մոռացութիւնը...

Այստեղ չաւարտեցան վարչապետին շարքավերջի յայտնագործութիւնները:

Հանրային հեռուստատեսութեան տուած հարցազրոյցին ընթացքին, ան յայտարարեց, թէ միջազգային ընտանիքը զէնք պիտի չվաճառէ Հայաստանին, այնքան ժամանակ, որ չենք հրաժարիք Արարատէն...:

Հայրենական, միջազգային մամուլին քիչ թէ շատ հետեւող մը ըլլալով, մինչեւ օրս նման պայման մը չեմ լսած Արեւմուտքի եւ Արեւելքի պետութիւններէն, բացի եթէ վարչապետը մտադրած է Թուրքիայէն կամ Ազրպէյճանէն գնել զէնք...:

Վարչապետը կասկածի տակ կը դնէ հայ ժողովուրդի նկարագրին կարեւորագոյն բնորոշումները՝ Արարատ լեռնէն մինչեւ Հայոց ցեղասպանութիւնը:

Ցանկացած հայու համար Արարատը մեր կորսնցուցած հայրենիքին խորհրդանիշն է: Արարատ լեռը կը խորհրդանշէ մեր ժողովուրդի ազգային ինքնութիւնը: Ճնշում կը բանեցուի ժողովուրդին վրայ, հրաժարելու Արարատը իբրեւ Հայաստանի վերածնունդի խորհրդանիշ ընկալելէ:

Արարատէն հրաժարելու այս պայմանը թուրք-ազերիական զինակցութեան հիմնական պայմաններէն մէկը կը մնայ առ այսօր:



Ալիւ եւ կը բարձրաձայնէ զինաթափել եւ կրճատել հայկական բանակը, փոփոխութեան ենթարկել Հայաստանի սահմանադրութիւնը, զինանշանը, ազերիներ բնակեցնել Հայաստանի տարածութեան մէջ, Զանգեզուրի միջանցքը անկաշկանդ օգտագործելու անուան տակ՝ փաստացի բռնագրաւել Սիւնիքը:

Այս բոլոր ճակատագրական սպառնալիքներուն դէմ, վարչապետը իր իշխանութիւնը պահպանելու համար զաւելտական, աժանագին տեսագրութիւններով, ծիծաղելի եւ զգուելի ցուցադրութիւններով, «խաղաղութեան խաչմերուկ»ի ձախողած թեզով կը փորձէ սքօղել Հայաստանի մտահոգիչ իրականութիւնը: Ազգայինը կը մկրտուի համապետական, Հայոց պատմութիւնը կը մաղուի՝ Հայաստանի պատմութեան:

Դէպի ու ը պիտի հասնինք այս հեղհեղուկ անհեռանկար ռազմավարութեամբ: Թուրք-ազերիական յարձակումի մը Դամոկլեան սուրը աւելի բացայայտ սկսած է դառնալ: Մենք որո՞ւ կ'ապաւինինք, օր ըստ օրէ դաշնակից ու բարեկամ կը կոսնցնենք աջ ու ահեակ:

Տողերս գրողը կը պատկանի թրքական բռնատիրութեան դէմ, Արեւմտահայաստանի ազատագրութեան, Հայաստանի անկախութեան եւ բարգաւաճումին համար բազմահազար նահատակներ տուած հայ քաղաքական Մայր կուսակցութեան: Հնչակեան կուսակցութեան: Պատանութեան տարիքէս սորված եմ «Արարատի փէշերուն պիտի զարնենք մեր վրանները», դաստիարակուած եմ ժիրայրներու, Մուրատներու, Ադասիներու եւ Փարամազներու, Սապահ Գիւլեաններու եւ Պանդուխտներու հայրենասիրական ոգիով, աններելի եւ նոյնքան ցաւալի կը գտնեմ գործող վարչապետին անպատասխանատու յայտարարութիւնները:

Մեր մեծ հայրերը, մեծ մայրերը Հայոց ցեղասպանութեան հետեւանքով տեղահանուած են իրենց ծննդավայրերէն՝ Արեւմտահայաստանէն եւ Արցախէն: Օտարութեան մէջ կ'ապրինք այ՛՛ն, բայց կ'ապրինք մեր պատմական հայրենիքին վերատիրանալու կամքով: Կ'ապրինք մեր հայրենիքը հզօրացնելու, անոր նուաճումներով հպարտանալու բերկրանքով: Կ'ապրինք պատմական արդարութիւնը վերականգնելու, պահանջատիրական պայքարը հետապնդելու վճռակամութեամբ: Այլեւս կարելի չէ ազգակործան պատուհասներու ապիկար ճակատագրին լքել Հայաստանի հանրապետութեան եւ հայրենի մեր քոյրերուն, եղբայրներուն ճակատագիրը: Ժողովրդավար պետութիւն մը անմիջապէս ատեանի առջեւ պիտի հրաւիրէր նման դաւաճանական յայտարարութիւն կատարող իր վարչապետը...

Տողերս գրողը կը հաւատայ Սփիւռք-հայրենիք սերտ ու անկեղծ համագործակցութեան: Ժողովրդավար, ընկերային արդարութեան վրայ յենած պետականութեան մը գոյառման: Պետականութիւն եւ հզօր բանակ, տէր կենալու մեր ազգային խորհրդանիշներուն, արժէքներուն, հաւատարիմ մեր համագային իրաւունքներուն պաշտպանութեան: Պետականութիւն, յանձնառու պատմական արդարութիւնը վերականգնելու հրամայականին:

30/1/2025

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԱՂՕԹՔԻ ՊԷՍ

Ես սիրեցի առաւօտեան երկինքը ջինջ ու կապուտակ,
Ինչպէս մանկան գուլալ աչքեր անապական, անմեղունակ
Ե՛լ ցօղն վճիտ որ կը ցաթէ որպէս երկնի արցունք լուսէ,
Կ'իջնէ յուշիկ տերեւներուն, թերթիկներուն ծաղկանց գունեղ,
Նոր մաքրութեամբ մը կը լուայ հոգին անոնց նուրբ ու անտես,
Որ չխամրին, ցնծան զուարթ ու գովերգէն լոյսը անմեռ...
Եւ ցօղին պէս կաթ-կաթ կու գան նոր-նոր միտքեր ու յոյզեր բորբ,
Կը համբուրեն ճակատս բաց, սիրտս շոյեն զգուանքով լոյս,
Որ նորոգուիմ առտուան պէս, ժանգ չնստի սրտիս, հոգւոյս,
Լուսերգութեամբ զիս կ'ողողեն, կ'օծեն զիս նոր տեսիլքներով:

3/11/2018

.....

ԲԱՌԵՐ ԻՋԱՆ



Բառեր իջան անհուն երկնէն,
Իջան մեղմիւ ու քնքշօրէն,
Փաթի՛լ-փաթի՛լ սպիտակ ձեան պէս,
Փարուեցան ինձ, գրչիս համեստ...

Բառեր իջան ամպրոպներէն,
Մրրիկներէն, փոթորիկէն,
Զայրոյթի պէս գոռ, խելայեղ,
Շառաչեցին մտրակի պէս...

Բառեր իջան հեզի՛կ-մեզի՛կ,
Զերթ երկնի ցօղ, անձրեւի շիթ,
Օրհնութեան պէս լուռ ծփացին,
Աղօթքի պէս մրմնջացին...

Բառեր իջան ինչպէս շողեր,
Բորբ արեւի ճառագայթներ,
Լոյսեր բերին, արեգակներ,
Բացին շքեղ արշալոյսներ...

Բառեր ալ կան տեղացին շանթ,
Կայծակ, որոտ, հրեղէն լեզուակ,
Տեղատարափ անձրեւացին,
Զերթ արտասուքը երկնքի...

Բառե՛ր, բառե՛ր, ձեզմով, ձեր հետ



Հիւսեցի ես տողեր վսեմ,

Բայց ի՛նչ տողեր, դուք տիեզե՛րք էք,

Չէք պարփակուիք տողերուս մէջ...

Դուք թռիչք կ'առնէք ամէն անգամ

Որ ձեզ բռնեմ իմ գրչիս տակ,

Կ'երթաք հեռո՛ւ, դէպի անհա՛ս

Հորիզոններն անհունաւաց...

21/3/2022

.....

ԳԻՐՍ

Գիրս թրթիռն է իմ սրտին,

Գիրս խոյանքն է հոգիիս,

Ճենճերումը մտքիս, խղճիս,

Խոստովանանք՝ իմ խորանին:

Երկնատուր մի ճակատագիր

Ինձի տրուած զերթ արեան գոյն,

Որ չի ջնջուիր քանի կ'ապրիմ,

Քանի կը զգամ սրտիս տրոփիւնն:

Ան չունի վարձք ու հատուցում,

Ան չունի փառք, ծնծղայ կամ դիրք,

Ինքն իրմով լոկ կը սնանի,

Սրտիս այրումն է իր աւիւնն:



Ու թէ մարդիկ թեթեւ ձեռքով
Զայն շարտեն ցեխին մէջ գորշ,
Ճաճանչ մը լոյս պիտ' ճառագէ
Անոր անեղծ էութենէն:

Ան պիտ' ցոլայ մթութեան մէջ,
Վառ աստղերէն լոյս հաւաքէ,
Եւ ո՞վ կրնայ լոյսը թաղել,
Ստուերին մէջ զայն թաքցընել:

6/6/2024

.....

ՔԱՈՍ Է

Քաոս է, Տէ՛ր, համատարած, լո՛յս կաթեցուր սիրտերուն վառ,
Խիղճը մարդուն քուն է մտած, արթնցո՛ւր զայն, Տէ՛ր բարերար...

Դաժանացած է դարը այս, Տէ՛ր իմ, ցաթէ՛ լոյս գթութեան:
Վայրենացած են կիրքերը, հաստատէ՛, Տէ՛ր, օրէնքն արդար...

Նիւթն է ամէն տեղ տիրակալ, ցոլացո՛ւր, Տէ՛ր, լոյս հոգեկան:
Ստրկութեան նոր դար է, Տէ՛ր, հուրդ սփռէ՛ ազատութեան...

Ոսկի հորթըն է ամէն տեղ, խարազանդ շաչեցո՛ւր, Տէ՛ր:
Մամոնային խուլ աղմուկն է, աղօթաձայն դողանջէ՛, Տէ՛ր...

Թմբիւրի մէջ են սիրտերը, թմբիւրի մէջ են միտքերը,
Զանգակներըդ հնչեցուր, Տէ՛ր, զգաստանայ մարդ էակը...



Հոգիներուն ուղեւորը, Տէ՛ր, ներշնչէ՛ յոյս, սէր, կորով,

Քու պատկերիդ արարչական վերադառնա՛ն ապաշաւով...

10/1/2018

.....

ԻՄ ՄԷՋ Կ'ԱՊՐԻՆ

Իմ մէջ կ'ապրին հիւլէները

Հայկեան ոգւոյն ազատաբաղձ,

Որ թռիչք առաւ ու խոյացաւ

Երկնեց հայոց պատմութիւնը:

Աչքերուս մէջ բո՛յլ մը նայուածք

Դեռ կը ցոլայ Անանիայէն

Ու սրտիս մէջ կը խորզամ

Զա՛րկ մը խղճի մեր մեծ Մուրբէն:

Խորին խորհո՛ւրդ մը կ'առկայծի

Մտքիս խորունկ ծալքերուն մէջ

Դաւիթ Անյաղթ Մտածողէն,

Անոր մտքի ճենճերումէն:

Հոգւոյս երկնին մէջ պլպլայ

Շո՛ղ մ'աստեղաց մեր Մեծերէն,

Որոնք մութին մէջ ճաճանչէն,

Դառնան փարոս մը լուսարծարծ:



Մրտիս փոքրիկ բաժակին մէջ,

Թրթիռը կայ սիրտերուն Մեծ

Դուրեանին ու Մեծարենցին,

Որոնք միշտ սէր շնջացին:

Ներաշխարհիս մէջ կ'ապրի դեռ

Խորաթափանց Թէքէեանը,

Որուն դրոշմած մէն մի տողը

Դարձաւ յորդո՛ր, լոյսի պատուէ՛ր:

Անդրանիկին քաջ ոգիէն

Հրեղէն բո՛ց մը դեռ բոցկլտայ

Երակիս մէջ իմ հնամեայ,

Պայքարի կա՛նչ է անվեհեր...

Չյանձնուիլ երբե՛ք, երբե՛ք

Ու զէնքերը վար չդնել,

Քանզի սահմանն իրաւ քաջաց

Ոգին է բորբ ու աննահանջ:

3/2/2024

ԱՐՈՒԵՍՏԸ ԱՂԵՏԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Մարուշ Երամեան



Ի՞նչ է արուեստին դերը, մանաւանդ հիմա, որ արուեստն ալ դարձեր է շուկայական իր, առուտուր, մեծ շահերու միջոց: Փաստ տակաւին վերջերս չեմ գիտեր քանի միլիոնի ծախուած է «պատին փակցուած պանան»-ը:

Այս օրերուն, երբ պատերազմները կը շրջապատեն մեզ, իսկ բնութեան աղէտները կարծես ցոյց կու տան մեր ապիկարութիւնը բնութեան հետ վարուելու, ինչպէ՞ս կարելի է խօսիլ արուեստի մասին:

Նոյն այս օրերուն, երբ թուայնացումի բազմաթիւ միջոցները հաճոյք եւ զբաղում կը հայթայթեն մարդոց, ո՞վ կը մտածէ արուեստի մասին: Եւ անշուշտ պէ՛տք է տարբերել արուեստ կիրարկելն ու արուեստի գործեր վաշելը, որոնք ամբողջովին երկու տարբեր վարժանքներ են:

Եթէ նկատի առնենք, որ վաղ մշակոյթներէն մեզի մնացած են աւելի շատ արուեստ, քան գրականութիւն, կրնանք եզրակացնել, թէ արուեստները աւելի կարեւոր տեղ գրուած են մարդկային կեանքէն ներս:

Թէ ինչո՞ւ այրաբնակ մեր նախնիները ուզած են անպայմա՛ն իրենց կեանքը նկարագրող ժայռապատկերներ ձգել. իրենց գոյութի՞ւնը հաստատելու, թէ՞ արուեստի կարեւորութեան գիտակցութեան շատ նախնական զգայարանքով: Այս առումով քիչ գրուած է Հայաստանի Ուղտասարի եւ Ջերմաջուրի ժայռապատկերներուն մասին, որոնք ոչ միայն շատ հետաքրքրական են, մեր վաղ գոյութիւնը կը հաստատեն, այլ նաեւ ՇԱՏ գեղեցիկ են:

Ռեպերա Ռուբօ գրած է.

«Արուեստը խաղ չէ, այլ՝ անհրաժեշտութիւն, իսկ անոր էութիւնը՝ ձեւը, տեքորաթիւ յարմարեցում չէ, այլ գաւաթ մը, որուն մէջ կարելի է կեանքը լեցնել եւ համտեսել»:

Իսկ նոպալեան մրցանակակիր Թոնի Մորիսըն կ'ըսէ՝ «Արուեստը յիշեցում է, թէ մեր տեղը հո՞ւ, երկրի վրայ է»:

Հետաքրքրական դիտարկումներ են ասոնք:

Բայց երբ կ'ապրինք ժամանակի մը մէջ, ուր պատերազմները, քաղաքացիական կռիւներն ու բնութեան աղէտները «սովորական» դարձեր են, իսկ մարդիկ իրենց առօրեան ապրելու _ դեռ չենք ըսեր՝ արժանապատիւ կերպով ապրելու _ պարտադրանքին տակ են, արուեստը, անոր դերն ու տեղը ոչ միայն հարցական կը դառնան, այլ նաեւ կիրարկուելու միջոց չեն ունենար:

Կեանքը սակայն այլ բան կը հաստատէ. համաշխարհային երկու պատերազմներուն միջեւ ծաղկած արուեստն ու գրականութիւնը այլ բան կ'ըսեն. Սովետական բռնատիրութեան տակ բուն կերպով ծաղկած գրականութիւնը այլ իրողութիւն կը հաստատէ:

Գրագիտուիի մը, որ նաեւ զաւակներու մայր է, կը պատմեր իր առօրեայ փորձառութեան մասին եւ կ'ըսէր.

«Երկու զաւակներս ամբողջ ժամերս կը խլէին: Օր մըն ալ անդրադարձայ, որ մեծցեր են՝ վեց եւ երեք տարեկան եղեր են, բայց ես ոչինչ կը յիշեմ այդ տարիներէն: Սկսայ ամէն օրուան



վերջաւորութեան, օրը յատկանշող փոքրիկ հատուած մը գրել: Այդ գրութիւններուն ամբողջութիւնն էր որ աւելի ուշ զիրքի վերածուեցաւ»:

Ի՞նչ միջոցներ կարելի է օգտագործել արտայայտելու համար մեր անկարողութիւնը դէպքերու առջեւ, որոնք մեր հասողութենէն վեր են, զորս փոխելու ո՛չ ձեւը ունինք, ո՛չ միջոցը, եւ որոնք ծայրայեղօրէն կ'ազդեն մեր վրայ, փոխելով մեր կեանքին հունը, հովին տալով ոչ միայն մեր առօրեան, այլ յաճախ նաեւ մեր համոզումները:

Ի՞նչ միջոց նման ծանր կացութիւն դիմագրաւելու եւ կեանքի փոթորիկներուն մէջ հաւասարակշռութիւն պահելու, եթէ ոչ արուեստն ու գրականութիւնը:

Նման օրինակներ են պատերազմներու մասնակցած զինուորներու օրագրութիւնները, որուն ամէնէն վերջին օրինակները եկան Արցախի պատերազմէն (Շանթ Նաւոյեան, «Զիմացողը չգիտի, իմացողը չի ասում»):

Կարդալով նման գրութիւններ, որոնց անկեղծ եւ խիտ ապրումը զիրենք կը բարձրացնէ արուեստի, մենք այլ, ծանր պայմաններու մէջ ապրողներս, կը սկսինք հաւատալ, թէ որպէս մարդ կարելի՛ է շրջանցել ծանր փորձութիւնները, պահել մարդկայնութիւնը, եւ ապրիլ: Այլ խօսքով՝ յուսալ, բան մը որ կրնայ շատ դժուար ըլլալ արտահերթ պայմաններու մէջ:

Արուեստը պատերազմի եւ քաղաքացիական փոթորիկներու մէջ նաեւ զաղափարներ փոխանցելու միջոց է. այդ չէ՞ պատճառը, որ կը ճնշուի, կամ կը չեզոքացուի, որովհետեւ վախ կը պատճառէ բռնակալներուն:

Շատ մեծ է արուեստին ազդեցութիւնը ստեղծողին եւ զայն վայելողին վրայ հաւասարապէս: Ստեղծողին համար ան միջոցն է իր ներքին փոթորիկները արտահանելու, իսկ ակնդիրին կամ ընթերցողին համար մխիթարութիւն է իր ապրումները գեղեցկօրէն արտայայտուած տեսնել:

Իսկ ազգի մը համար, իր արուեստին հնագոյն նմոյշները կը պահեն պատմութիւնը եւ ամէնէն հաճելի միջոցներով կը փոխանցեն զայն այսօրուան մարդուն: Նման գեղեցիկ օրինակներ են Հայաստանի Ուղտասարի եւ Ջերմաջուրի ժայռապատկերները:

Հետաքրքրական է իմանալ, որ արուեստին ազդեցութիւնը մարդկային ուղեղին վրայ շատ աւելին է, քան ... հաճոյքը:

Կեանքը, մանաւանդ անոր փորձառութիւնը, շօշափելի դառնալ կը պահանջեն. տառապանքը ցաւ է, ցաւը վերացական է, մինչ ցաւը պատկերող նկարը շօշափելի է, կ'օգնէ որ դիտողը զգայ, թէ արուեստագետը ի՛ր ապրումն է որ նկարի վերածեր է, հետեւաբար ինք մինակ չէ իր ցաւին մէջ ... Արուեստը մարդէ մարդ գացող այդ կապն է, որ խորապէս էական է կեանքին համար:

<http://www.kantsasar.com/news/53786-2/>

ՏԻԳՐԱՆԻՆ ԱՌԻՆՔՆՈՂ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Վաստակատր կրթական մշակ, ներքուն մտաւորական ԱԶԱՏՈՒՇԻ ԳԱԼԱՅՃԵԱՆ ՄԻՍՈՆԵԱՆԻ նամակը իր որդւոյն, անոր մահուան չորրորդ տարելիցին առթիւ: Ա.Խ.)

Միրելի Տիգրան, պատերազմական Լիբանանին բերած չարիքները պատճառ հանդիսացան, որ քեզ կրկին փնտոենք եւ տխրութեամբ համակուովինք: Քաջասրտութիւնդ քու շուրջիններդ կը համակեր վստահութեամբ եւ անվախութեամբ: Քու կեցուածքովդ, խօսքերովդ եւ արարքներովդ մեզի կը ներշնչէիր քաջութիւն եւ համարձակութիւն:

6 Յունիս 2006 թուականին գիւղէն՝ Ֆարայայէն եկար հայրդ ու զիս փոխադրելու համար, հակառակ ոմբակոծումներուն: Հայրդ մեծապէս ցնցուած էր պատերազմի արհաւիրքէն, որ միշտ կը յիշեցնէր իրեն իր հօր սպանութիւնը ռումբի հարուածէն 1958 թուին: Այդ

պատճառաւ ալ ան իր ամբողջ կեանքի ընթացքին խորշեցաւ պատերազմէն եւ արինահեղութենէն: 2006-ին մէկ ամիս տեւող այդ պատերազմը շատ մեծ քանդումներ պատճառեց եւ զոհեր արձանագրեց: Սակայն 2024-ի պատերազմին կործանիչները շատ աւելի հեռահաս ըլլալով եւ կատարելագործուած, շէնքեր ամբողջ գետնին կը հաւասարեցնէին ու մինչեւ ստորգետնեայ պատասպարանները կը թիրախաւորէին: Սպանող շատ աւելի մեծ էր եւ ողբերգութիւնը աներեւակայելի:



Այս պատերազմական օրերուն քեզ փնտռեցին ամէնէն աւելի քու զաւակներդ՝ Արեգը եւ Սարիկը, եւ տիկինդ՝ Սիլվին, որոնք վարժ էին քու պաշտպանութեանդ բերած ապահովութեան: Անոնք դպրոցական իրենց ամէնօրեայ երթեւեկութիւնը ունէին, որ շատ մտահոգիչ էր: Դուն պիտի որոշէիր անոնց

երթուղարձը, տունէն կամ առցանց մասնակցութիւնը դասաւանդութեան: Դուն ներկայ ես անոնց յարկէն ներս քու հոգեկան տիրապետող ներկայութեամբ: Երբ կը հարցնէի Արեգին եւ Սարիկին՝ ինչպէ՞ս դիմակայեցիք այդ սաստիկ հրթիռարձակումները, անոնք ըսին՝ մեր պապան մեզի հետ էր եւ մեզի ուժ կու տար: Առանց ա՛յդ հոգեկան ներգործող ուժին դժուար է ըմբռնել մեր կեանքի թաւալքը յետ Տիգրանի մեկնումին:

Տօնական օրեր են կրկին, կը փնտռենք քեզ Տիգրան: Բոլորովին կ'այլափոխուէիր դուն այս տօնական օրերուն, երոպական Ծնունդէն սկսեալ մինչեւ նոր տարին եւ հայկական Ծնունդը: Կը կազմակերպէիր ամէն մէկ տօնակատարութեան հետ կապուած վայրը եւ ժամանակը, հիւրասիրութեան ձեւը: Նոր տարին կ'ուզէիր անցընել ձեր տան մէջ, երիտասարդ զարմիկներով եւ բարեկամներով ու անոնց ընտանիքներով: Ծնողներս ալ կ'ընդգրկուէինք եւ կը տեսնէինք Տիգրանին ոգեւորութիւնը, կատակներն ու խնդրքը, անձամբ հիւրասիրելու փափաքը: Կաղանդ Պապայի այցելութիւնը կէս զիշերին, նուէրներու բաշխումը մեծերուն եւ փոքրերուն: Ժամը 12:00-ին Տէրունական աղօթքը արտասանուած բոլոր ներկաներուն կողմէ:

Տուպայ եւս երկու նոր տարի տօնեցինք Ռազմիկի եւ Հերայի հիւրամեծարութեամբ, ծնողներու եւ զարմիկներու ներկայութեան: Մեծ ցնծութիւն պատճառեցին այդ տօնակատարութիւնները բոլորիս եւ քեզի մասնաւորաբար, սիրելի Տիգրան:

Չորս տարի անցած է քու անդարձ մեկնումէդ ի վեր, կարօտալի Տիգրան: Քեզի հաղորդելիք լաւ լուրեր ունիմ: Արեգը աւարտեց IC երկրորդական բաժինը 2024-ի Յուլիս ամսուն եւ



համապատասխան վկայականը ստացաւ բարձր պատուոյ յիշատակութեամբ (Distinction): Միեւնոյն ատեն մաթեմատիկի (Mathematics) շրջանաւարտ դասարանի բարձրագոյն միջինը ստանալով մրցանակ կը շահէր: Ռազմիկը ներկայ եղաւ հանդիսութեան քեզ ներկայացնելով եւ հպարտութեամբ լեցուելով: Արեզը AUB մուտք գործեց Computer Science engineering մասնագիտութեան մէջ: Գրեթէ բոլոր դասաւանդութիւնները առցանց էին, սակայն ան ունեցաւ կեդրոնացումը շատ լաւ պատրաստուելու բոլոր դասերուն եւ ամավերջի քննութիւններուն: Ան աւարտեց գերազանց նիշերով՝ արժանանալով պատուոյ ցանկին եւ անոր կապուած կրթաթոշակին: Սարիկը IC Այն Աար միջնակարգի 9-րդ դասարանը բարձր պատուոյ յիշատակութեամբ

աւարտելով եկաւ Ռաս Պէրոյթ 10-րդ դասարան ըլլալու համար: Ան աւելի յաճախ անձնապէս գնաց դպրոց քան Արեզը: Շատ լաւ պատուոյ ցանկի նիշերով աւարտեց առաջին կիսամեակը:

Հրակ-Պէպօն՝ Ռազմիկին եւ Հերային մանչը, 9-րդ տարեդարձը տօնեց: Ան Ռիատի Ամերիկեան դպրոցը կը յաճախէ: Մեծ կարողութիւն ցոյց կու տայ մաթեմատիկի եւ անգլերէնի ու գիտութեան մէջ: Շատ լաւ ֆուլթայուլիստ է եւ ծանօթ ֆուլթայուլի բոլոր մեծ աստղերուն, մանաւանդ Հենրիկ Միսիթարեանին: Հրակը մեծ սէր ունի իր հօրեղբոր Տիգրանին հանդէպ եւ յաճախ կը յիշէ եւ կու լայ: Կարօտցած է, կ'ուզէ զինք անգամ մը տեսնել եւ կարօտը առնել:

Արեզին համար դուն կը մնաս իր մենթորը, հայրը եւ ընկերը, միշտ կը խորհրդակցի քեզի հետ իր առնելիք քայլերուն համար: Քեզ կը տեսնէ իր երագներուն մէջ եւ կ'ապրի քեզի հետ: Դուն ամէնօրեայ ներկայութիւն ես իր կեանքին մէջ: Իր ամէն մէկ քայլը նպատակ ունի՝ քեզ ուրախացնել եւ հպարտութեամբ լեցնել: Նոյնպէս Սարիկը անհուն կարօտով կը յիշէ քեզ եւ արցունքով կ'արտայայտէ իր սէրը: Ան կը փնտոէ այն գիրկընդիսառնումները, որ կ'ունենար քեզի հետ: Զգացական կապը քեզի հետ այնքան մեծ է, որ օրական դրութեամբ զինուելով քեզի հետ կը շարունակէ իր առօրեան յաղթահարել: Անոր նպատակն է նաեւ իր ձեռք ձգած ուսումնական յաջողութիւններով քեզի հպարտութիւն պատճառել:

Չորրորդ տարեկիցը տօնելու համար պիտի մեկտեղուինք Սուրբ Յարութիւն եկեղեցոյ մէջ, ուր ծառայեցիր տասնեակ մը տարիներ: Անմիջական հարազատներդ ու եկեղեցոյ կազմը՝ քահանայով, երգչախումբով, տիկնանցով ու թաղականութեամբ պիտի բաժնեն մեզի հետ մեր ցաւը եւ յարգեն քու յիշատակդ: Գիտենք թէ դուն ներկայ պիտի ըլլաս մեր մէջ քու անուշ ժպիտովդ եւ քաջալերական կեցուածքովդ:



Թող անմեռ մնայ քու յիշատակդ, սիրելի Տիգրան, եւ յաւիտենականութեան մէջ հանգչի քու հոգիդ:

Քեզ անհունօրէն սիրող մայրդ՝

Ազատուհի

18/1/2025

ՄՐՏԻ ԽՕՍՔ

(«ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ» ժողովածուի Շնորհանդէսին՝ հեղինակին արտասանած խօսքը կը ներկայացնենք ամբողջութեամբ)



Այս երեկոյ, ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ գիրքիս Շնորհանդէսին ընդմէջէն, մենք կը ՏՕՆԵՆՔ ու ԿՐ ՓԱՌԱԲԱՆԵՆՔ ըստ էութեան հայ գիրն ու հայ գիրքը, ուր կը ցոլան դարէ դար ազգային մեր էութիւնն ու ոգին: Հայ հոգին ու անոր շունչը: Հոգեչափ շնորհակալ եմ բոլորիդ, որ ձեր ներկայութեամբ կը ստեղծէք այս ոգեղէն եւ լուսեղէն մթնոլորտը, որուն ծարաւի է՝ հայրենիքէն հեռու ապրող հայ տարագիր գրողը մասնաւորապէս: Շնորհակալութեան յատուկ զգացումներս կը յայտնեմ ձեռնարկը հովանաւորող Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեանին, զայն նախագահող Պետական Ներկ. Տէր եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեանին: Երախտապարտ եմ Պրն. Եղիա Գայայեանին՝ իր բովանդակալից խօսքին համար, Յայտագրին մաս առնող ասմունքողներուն՝ Տիկիններ՝ Նայիրի Մուրատեանին, Մարալ Ատուրեանին, Լորա Մկրտիչեանին, ինչպէս նաեւ Երեկոյին յաւելեալ փայլ պարգեւող Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ Երգչախումբի պատանիներուն, որոնք՝



խմբավարութեամբ Տիկ. Վիքի Գոյումճեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Ալիսիա Ոսկանեանի, մեզի համար երգեցին հայրենասիրական ոգեշունչ եւ ոգեշնչող երգեր: Սրտիս խորագգած երախտիքը կ'երթայ ընտանիքիս բոլոր անդամներուն անուն առ անուն ... Եւ վերջապէս ու գերազանցօրէն շնորհակալ եմ Բարձրեալին որ կեանք պարգեւեց ինձի եւ արարման կայծը վառեց հողեղէն անօթիս մէջ, որպէսզի կարենամ խոհ-ապրումներս, գաղափար-յոյգերս վերածել բառ ու տողի եւ զանոնք մատուցել ձեզի, միշտ հաւատարիմ մնալով Մեսրոպեան շունչին, ոգիին եւ ինքնութեան:

Ոյժի գերիշխանութեան, նիւթապաշտութեան, արիւնսահեղ պատերազմներու մեր դարուն, երբ շահի եւ իշխանութեան համար, կեանքեր կը խորտակեն, երկիրներ կը կործանեն...Ո՞՞՞՞ ԿԸ ՄՆԱՆ ԳԻՐՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԸՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ, հարց պիտի տրուէր իրաւացիօրէն: Եթէ մէկ խօսքով պատասխանեմ, խոնարհաբար պիտի ըսէի որ պատերազմը եւ անոր ածանցեալ չարիքը ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ մեծագոյն ԱՍՕԹՆ Է, ԱՆՈՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆՆ Է ԲԻՐՏ ՈՅԺԻՆ: Մինչդէռ լաւ գիրքը, գրականութիւնն ու բանաստեղծութիւնը քաղաքակրթութեան յաղթանակն է, բարիին, ճշմարիտին, գեղեցիկին պանծացումն է ամէն տեսակ չարիքին դէմ: Մարդ էակին ՄԱՐԴ մնալու գերագոյն առաքելութեան ուղին է: Եթէ պատերազմը մարդուն մէջ ապրող վայրենիին յաղթանակն է, գրականութիւնը, պոեզիան մասնատրապէս, միեւնոյն մարդուն մէջ ապրող Աստուծոյ յաղթանակն է ու փառքը: Ի գուր չէ ըսուած Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ ԵՒ ԲԱՆՆ ԷՐ ԱՍՏՈՒԱԾ...

ԾԱՆԻՐ ԶՔԵԶ, պիտի ըսէր մեծ փիլիսոփան, Սոկրատեսը, դարեր առաջ: Իսկ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ համար, էական են խօսքը, գիրքը, գրականութիւնը, բանաստեղծութիւնը, որոնց բուն նիւթը մարդն է ու մարդկութիւնը, մարդկային ներաշխարհը, հոգին, բնութիւնն ու տիեզերքը...

Գրականութիւնը ընդհանրապէս եւ բանաստեղծութիւնը յատկապէս՝ մարդ էակը կ'ազատագրէ նիւթապաշտութեան, շահամոլութեան գորշ ճահիճէն եւ անոր կը փոխանցէ այն հոգեւոր, բարոյական արժէքները, որոնք բուն իմաստն են մարդկային կեանքին...: Մարդը, արդարեւ, միայն ֆիզիքական գոյութիւն չէ, ռոպոթ կամ արհեստական բանականութիւն չէ, այլ մանաւանդ ՀՈԳԻ Է, ԽԻՂՃ Է, ՍԻՐՏ Է, որոնց արտայայտութիւն կու տայ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, պեղելով մարդկային ներաշխարհը, անոր իդէերն ու երազանքները, յոյգերն ու ապրումները, սերերն ու կարօտները, խռովքներն ու ցաւերը, տագնապներն ու տուայտանքները...: Բանաստեղծութիւնը, յատկապէս, ամէնէն անկեղծ գրոյցն է մարդկային ՀՈԳԻՆ հետ: Ան ԱՂՕԹՔ Է, բառիս ամենալայն իմաստով:

Որքան ճշմարիտ է ըսուած. «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ»...իսկ եթէ անտեսուի մարդ էակին հոգեւոր սնունդը, անոր հոգեւոր պահանջները, յայնժամ խոր անձկութիւն, խոր տագնապ կը տիրէ անոր ներքին աշխարհին մէջ: Այս մասին է, արդարեւ, Աւետիք Իսահակեանի հետեւեալ տողերը. «Ես ձեզ ասում եմ կը գայ ոգու սով ու դուք կը քաղցէք ճոխ սեղանի մօտ, կ'ելլէք մուրալու յափրած որկորով՝ հրեղէն խօսքի, վեհ խօսքի կարօտ»:



Այդ ոգեշունչ կամ հրեղէն խօսքի սերն ու կարօտն էր գուցէ որ զիս մղեց գրելու, գրուցելու ՀՈԳԻԻՍ հետ, փնտռելու ճշմարիտն ու ազնիւր, գեղեցիկն ու բարին եւ լեզու տալ անոնց...

Խոնարհաբար պիտի ըսէի որ Գրելը ինձի համար իմ ներքին կանչիս ու մղումիս արձագանգն է...: Մերթ՝ պոռթկում է ան ամեն տեսակ չարեաց դէմ, մերթ՝ ալ պանծացումն ու փնտռուքն է բարիին, գեղեցիկին որ կայ բնութեան ու տիեզերքին մէջ, մարդկային հոգիին մէջ...Սրտաբաց գրոյց է ան իմ կողքի մարդուն հետ, իմ հայրենակիցին ու ընթերցողին հետ, անկեղծ խոստովանանքի պէս: Եւ դեռ՝ Մեծասքանչին հետ ամենպահեայ ժամադրութի՛նն է, անոր ոսկեղենիկ բառերուն արբեցումն է, հոգեմտաւոր խրախճանքի ապրո՛ւմ է անփոխարինելի...եւ կաթիլով մը գոնէ՝ հայապահպանման սուրբ գործին իմ ամէնէն խոնարհ լումաս ներդնելու անսահման երջանկութիւն...:

Իմ գործիքս, ինչպէս բոլոր գրողներու գործիքը ԲԱՌՆ է, իմ պարագայիս Մետրոպաշունչ եւ Մեծասքանչ բառը, որ զիս կը դիպէր մանուկ հասակէս մինչեւ հիմա ու ընդմիշտ: Այդ ոսկեղենիկ բառերով ես հիւսեցի չափածոյ թէ արձակ գրութիւններս՝ բանաստեղծութիւն, յուշագրութիւն թէ հրապարակագրութիւն:

ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ գիրքիս առաջին բաժինը՝ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆը ոգիի ճանապարհորդութիւն մըն է դէպի իմ մանկապատանեկան կամ վաղ երիտասարդութեան լուսաւոր ավերը, ուր դեռ կ'առկայձին՝ հօրենական օճախիս անսակարկ ու անկաշառ սերն ու բարութիւնը, դպրոցական կեանքիս լուսատու փարոսները, Եղեռնի դժոխքէն անցած մարդոց պայքարի ոգին, արժանապատիւ ապրելու անսպառ շունչը: Ճանապարհորդութիւն մըն է ան՝ նաեւ դէպի Կիպրեայ չքնաղ կղզիին հինաւուրց օրերը՝ իր լուսոյ տաճար Մելգոնեանով, որ փոքրիկ Հայաստան մը դարձաւ հայրենատենչ սրտիս, իր հանդիսութիւններով ու ձեռնարկներով, հայեցի մթնոլորտով, ապագային հայոդ հայ մատղաշ հոգիներով...: Այնտեղ կը շնչէ Կողին՝ մեր բռնագրաւեալ Մակարայ վանքով, 1974-ի սեւ օրերով... իր վերքերով ու երգերով...Եւ միշտ ու միշտ կը թրթռայ կարօտը Մայր հայրենիքին, որպէս հողեղէն ու ոգեղէն իրականութիւն, տարագիր մարդու հայրենաբաղձ ապրումներով սիրահեւ...:

ԾԻՐԱՆԻ ԼՈՅՍ ժողովածուիս երկրորդ եւ երրորդ բաժինները՝ ԽՕՍՔԵՐ եւ ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ, ազգային ինքնաճանաչման, ազգային սթափութեան կոչ ու հրաւեր են լայն առումով: Այնտեղ տեղ գտած յօդուածներուս վերնագիրները պերճախօս են, ինչպէս օրինակ՝ «Հայրենիքը կը սկսի ընտանիքէն», «Գիտակից երիտասարդութիւնը՝ երաշխիք յուսալի ապագայի», «Արտագաղթը համազգային ողբերգութիւն է», «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ», «Մշակոյթը մեր ներքին ամրոցն է», «Մենք հայերէնով ենք հայ», «Մերունդնէ՛ր, դուք ձեզ ճանաչէք Սարդարապատից», «Թուրքին լարած թակարդին մէջ չիյնանք», «Հայկական բանակը մեր Երկաթէ շերտփն է» եւ այլ: ԽՕՍՔԵՐու եւ ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ այս ընտրանին յոյսով եմ որ դառնան ընթերցողին համար նոր միտքերու գրգիռ, նոր գաղափարներու ծնունդ եւ ինչու չէ՝ նոր ոգեզինում յանուն ազգի ու հայրենիքի լինելութեան ու յառաջդիմութեան:



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ քաժինին միտք բանին թերեւս լաւագոյնս կ'արտայայտէ հետեւեալ քերթուածս.-

Ես բառերդ հաւաքեցի

Ոսկեհատիկ ցորենի պէս

Հայոց գիրի անդ ու դաշտէն,

Որ հաց թխեմ՝ նօթի սրտին:

Ես բառերդ հաւաքեցի

Որպէս գանձեր անկշռելի

Մագաղաթեայ մատեաններէդ,

Որ այսօրդ գեղազարդեմ:

Ես բառերդ հաւաքեցի

Հայոց հնամեայ այգիներէն,

Որ կարենամ թասդ լեցնել

Նոր գինիով՝ պապակ շուրթին:

Ես բառերդ հաւաքեցի

Կա՛թ-կա՛թ ծորոդ քու բորբ սիրտէդ,

Որ հայ մնամ օտար ափին

Եւ հայ հոգին բարեբանեմ:

Կը հաւատամ, սիրելիներ, բառի հրաշքին, անոր զօրութեան եւ անոր աստուածային առաքելութեան: Բանաստեղծական բառը, բանաստեղծական տողը, եթէ իսկապէս անկեղծ է ան, կ'ազատագրէ ընթերցողը իր մենութեան վախէն, գոյութենական սարսափներէն, սփոփարար եւ բուժիչ դեղ ու դարման կը դառնայ անոր ցաւերուն, կ'ազնուացնէ իր սիրտը, հաղորդակից կը դարձնէ զայն իր հոգւոյն ու խղճին հետ, բնութեան ու տիեզերքին հետ, Աստուծոյ հետ, իր կողքի մարդուն հետ:

Կրնամ ըսել անվարան որ մայրամուտիս հորիզոնին փռուած ծիրանի լո՛յսս է զուարթ, ինչպէս պիտի ըսէր հանճարեղ պատանի բանաստեղծ Միսաք Մեծարենց: Դեռ կը մնամ



արբշիռ կեանքի, բնութեան խորին խորհուրդով, կը մնամ խուզարկու ճշմարտութեան լոյսին, հետապինդ՝ արդարութեան յամառ պայքարին, արդարութի՛նն ոչ միայն մեր բիրատոր նահատակներուն, այլեւ մենք մեզի հանդէպ՝ համահայկական ոգիով եւ տեսլականով գօտեպինդ... Եւ հակառակ ամէն տեսակ չարիքի, մասնաւորաբար ժողովուրդիս բաժին ինկած Ցեղասպանութեան եւ Հայրենագրկումի արհաւիրքին, որ կը շարունակուի մինչեւ այսօր Արցախի հայաթափումով, դեռ կը հաւատամ որ, վաղ թէ ուշ, Արդարութիւնը պիտի յաղթանակէ եւ Բարութեան արշալոյսը պիտի ծագի, ինչպէս լուսաբացը՝ մութ գիշերէն ետք: Սա հեքիաթ չէ երբե՛ք, այլ տիեզերական ճշմարտութեան օրինաչափութիւնը: Այդ հաւատքը կ'արտացոլայ հետեւեալ տողերուս մէջ, ձօնուած Մայր Հայաստանին.-

Եւ հիմա դարձեալ,

Դարուն այս դժնէ եւ շահախնդիր,

Ուր ոգին է վեհ լուռ ստրկացեր

Նիւթին ու շահին, Ոսկեղէն հորթին,

Դուն պիտ' ցոլացնես փառքդ լուսեղէ՛ն

Գորշ ամպերէն վեր, Աստուծոյ մօտիկ,

Պիտի հրավառիս վառքով ոգեղէ՛ն,

Նոր Վահագններու պիտի տաս ծնունդ,

Որպէս նորօրեայ նորոգ արշալոյս:

Պիտի չընկրկիս ոստիւն վայրագ,

Գըլուխ չծռես կեղծ բարեկամին,

Պիտ' պրկես ամուր քու նետդ Հայկեա՛ն,

Պիտ' զայն արձակես չարանենգ Բելին:

Եւ գիտեմ հաստատ որ պիտի յաղթես,

Քանզի մարտիկն ես սուրբ ազատութեան,

Որ միշտ կը սլանայ գերութենէն վեր

Եւ գիտէ ճամբան արեգակնավա՛ռ:



Եւ այժմ, հարց կու տամ ես ինձի.- «Ի՞նչ մնաց. Կեանքէն ինձի ի՞նչ մնաց», բանաստեղծ Թէքէեանի անմահ բառերով: Եւ անմիջապէս կը պատասխանեմ ճիշդ իրեն պէս եւ խոնարհաբար.- «Ի՛նչ որ տուի ուրիշին, տարօրինակ՝, ա՛յն միայն».- Իսկ ես տուածովս երջանկացայ, ճախրեցի անհուն երկինքն ի վեր, շնչելու օդը անապական, ըմպելու արեւալոյսը անյագօրէն եւ սիրովարար եւ միշտ տենչացի այդ երջանկութենէն, այդ բերկրանքէն ձեզի բաժին հանել տո՛ղ առ տո՛ղ, բա՛ն առ բա՛ն, որպէս հոգեհաց ու մանանա...

Եւ, վերջապէս, սիրելիներ, երազանքս, բաղձանքս եւ աղօթքս է որ ՀԱՅ ԳԻՐՆ ու ՀԱՅ ԳԻՐՔԸ մշտապէս շարունակեն իրենց Մեսրոպաւանդ առաքելութիւնը, յոյս ու լոյս, հաւատք ու սէր ճառագեն մեր սիրտերէն ներս, մեր տուներուն մէջ, նորահաս սերունդին մօտ յատկապէս: Անոնք մեր գոյապայքարի, մեր հայ մնալու գլխաւոր զէնքերն են: Միշտ պիտի յիշենք որ նոյնիսկ երբ թուղթն ու գրիչը պակսեցան Յեղասպանութեան դժոխքին մէջ, հայ մայրը հայոց ԱՅԲՈՒԲԵՆԸ դրոշմեց Տէր Զօրի շէկ աւագներուն վրայ որպէս հայուն փրկութեան լաստ, որպէս հայուն լինելութեան եւ ոգեզինման երաշխիք:

Փա՛նք ու պատի՛ւ մեր ՄԵԾԱՍՔԱՆՉԻՆ:

Փա՛նք ու պատի՛ւ ՀԱՅ ԳԻՐ ՈՒ ԳԻՐՔԻՆ:

Փա՛նք ու պատի՛ւ զանոնք սնուցանող ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒԴԴԻՆ, ձեզի՛ բոլորիդ, սիրելիներ: ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ:

Երան Գույումճեան

Նիկոսիա, Փետրուար 2025

ԵՐԿՈՒ ԱՐՁԱՆԻԿՆԵՐՈՒ ՏՈՒՆԴԱՐՁ

Ռուբէն Ճանպազեան



Ամէն անգամ որ Թորոնթօ վերադառնամ, ընտանեկան ու ընկերական կապերը նոր իմաստ կը ստանան. ամէն հանդիպում, իւրաքանչիւր պահ՝ ձեռով մը թանկագին կը դառնան:

Այդ օրը, ճաշարանի մը հանդարտ մէկ անկիւնը նստած էինք մօրս երկու քրոջ-նման-մօտիկ ընկերուհիներուն՝ Նայիրի եւ Օսիկ թանթիկներուս հետ: Միշտ

առատաձեռն ու հիւրընկալ Նայիրի թանթիկը հրաւիրած էր մեզ: Շրջապատուած սպասքներու մեղմ շաչիւններով եւ ջերմ զրոյցներով, չէինք կրնար երեւակայել թէ այդ հանդիպումը պիտի վերածուէր այնքան յատուկ պահի մը:

Ճաշի աւարտին էր, երբ Նայիրի թանթիկը, իր բնորոշ նրբանկատութեամբ, մեզի յանձնեց երկու արձանիկներ՝ Սահակ Պարթեւ եւ Մեսրոպ Մաշտոց Մուրբերուն: Գեղեցկօրէն պատրաստուած փոքր կոթողներուն մասին սկսաւ պատմել. անոր ձայնին մէջ կար այն



յուզումը, որ միայն կու գար սերունդէ սերունդ փոխանցուող սրբութիւններու մասին խօսելու պահուն:

Արձանիկները 1963-ին Եգիպտոսէն Գանատա ճամբորդած էին, բերուած իր մեծ մօր՝ թորոնթոհայ համայնքին սիւներէն, Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ շաբաթօրեայ վարժարանի երկարամեայ տնօրէն եւ ՀՕՄ-ի ամառնային վարժարանի հիմնադիրներէն տիկին Տիգրանուհի Արթինեանի կողմէ, որ զանոնք պահպանած էր իբրեւ սրբազան մասունքներ: Տասնամեակներ ետք, անոնք փոխանցուեցան իր դստեր՝ Արմենուհի Գոլովեանին (մեր բոլորին սիրելի Արմենուհի նէնէին), որ եւս համայնքին տիտաններէն էր: Ան բժախնդրօրէն պահած էր զանոնք մինչեւ իր մահը, որ պատահեցաւ քանի մը ամիսներ առաջ:

Արձանիկներուն հետ, Նայիրի թանթիկը մեզի յանձնեց նաեւ իր մեծ մօր գիրքը՝ «Հայ մօր յուշեր»-ը: Ըսաւ, որ «Երկու արձանիկները» վերնագրուած պատմուածքին մէջ պիտի գտնէինք ընկերուհի Տիգրանուհիին սեփական խօսքերը այս սրբազան յիշատակներուն մասին:

Այդ օրը, երբ տուն վերադարձանք եւ տիկին Տիգրանուհիին գիրքին էջերը սկսայ թերթատել, անոր խօսքերը սկսան նոր իմաստ ստանալ: Իր պատմուածքին մէջ ան կը նկարագրէր արձանիկները իբրեւ հայկական հոգիին պահապաններ, որոնք լուռ վկաներն էին սերունդէ սերունդ փոխանցուող ժառանգութեան: Ան կը պատմէր, թէ ինչպէ՛ս Գանատա հասնելէն անմիջապէս ետք, զանոնք զգուշութեամբ դրաւ իր հայերէն գիրքերուն մէջ, որպէս թէ անոնք ըլլային մեր մշակոյթի անթեղները՝ օտար ավերուի վրայ:

«... անձկութեամբ կը քակեմ շղարշանման թուղթին ծալքերը, ըլլայ թէ կոտրած ըլլան, բուրգերու երկրէն ի վեր որքա՛ն երկար ճամբայ կտրեցին անոնք, թափառական հայերու, թափառական Սուրբեր»:

Հինգերորդ դարուն, երբ Մեսրոպ Մաշտոց, կաթողիկոս Սահակ Պարթեւի աջակցութեամբ, ստեղծեց հայոց այբուբենը, անոնք մեզի պարգեւեցին մեր հաւաքական յիշողութեան բանալին: Թորոնթոյի մէջ մեծնալով, այս պատմութիւնը կը թուէր հեռաւոր եւ վերացական: Մենք կը սորվէինք մեր լեզուն, կը յաճախէինք հայկական դպրոց եւ եկեղեցի, կը մասնակցէինք համայնքային ձեռնարկներու, բայց միշտ կար այն զգացումը, որ կը փորձէինք բռնել անբռնելին, պահել անպահելին: Ինչպէս ընկերուհի Տիգրանուհին իր արձանիկները դրած էր գիրքերուն մէջ, մենք ալ կը փորձէինք ստեղծել հայկական կեանքի փոքրիկ օազիսներ «օտար» հողին վրայ:

Հայաստան գալը մեզի համար պարզապէս տեղափոխութիւն մը ըլլալէն անդին՝ մեր փնտռտուքին վերջնական հանգրուանն էր. այն վայրը ուր հայ ըլլալը կը դադրի ճիգ մը ըլլալէ եւ կը դառնայ պարզապէս ապրուած իրականութիւն: Այս արձանիկները այժմ կը հանգչին մեր գրադարանին մէջ՝ շրջապատուած հայերէն գիրքերով եւ մեր առօրեայ կեանքի անթիւ մանրութիւններով: Անոնք աւելի են քան զարդեր կամ յիշատակներ. անոնք կը մարմնաւորեն ճամբորդութիւն մը, որ սկսած է Եգիպտոսի մէջ, անցած է Գանատայէն եւ վերջապէս հասած է իր վերջնական հանգրուանին՝ Հայաստան: Ամէն անգամ որ անոնց կը նայիմ, կը տեսնեմ տիկին Տիգրանուհիին ձեռքերը, որոնք զանոնք զգուշութեամբ փաթեցին ճամբորդութեան համար, Արմենուհի նէնէին սերը, որ զանոնք փայփայեց տասնամեակներ շարունակ եւ Նայիրի թանթիկին իմաստութիւնը, որ հասկցաւ որ անոնց տեղը հոս է՝ հայրենիքին մէջ:

Մեր բնակարանին մէջ, այս արձանիկները կը վկայեն թէ «տունը» կրնայ ըլլալ այնտեղ՝ ուր սիրտդ կը տանի քեզ: Մեզի եւ այս արձանիկներուն համար այդ վայրը եղաւ Հայաստանը:

Ու այժմ, տիկին Տիգրանուհին եւ Արմենուհի նէնէին կրնան քիչ մը աւելի հանգիստ հանգչիլ, գիտնալով որ իրենց այնքան փայփայած արձանիկները վերջապէս հասած են իրենց վերջնական հանգրուանին՝ հայերէն գիրքերով լեցուն գրադարանի մը մէջ, ազատ հայրենիքի սրտին մէջ:



Իրաքանչիւր առաւօտ, երբ արեւը կը ծագի Երեւանի երկինքին մէջ եւ իր առաջին ճառագայթները կը փայլին այս արձանիկներուն վրայ, կը մտածեմ թէ ինչքան երջանիկ պիտի ըլլային անոնք՝ տեսնելով, որ իրենց սուրբ աւանդը այլեւս տուն հասած է: ☺

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Ներքին ազատութիւնը թերեւս մեծագոյն պարզեւն է, որ շնորհուած է մարդ էակին...այսինքն՝ ազատ ու անկախ մտածելու կարողութիւնը: Երանի՛ այն մարդուն, որ կրնայ չենթարկուիլ՝ իր հոգիին ու մտքին վրայ բռնացող ճնշումներուն եւ մնալ ազատ, չդաւաճանել իր մարդկային խոր էութեան:

.....

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ հասարակարգերը նկատի կ'ունենան բնակչութեան թիւը, ժողովուրդին քանակը, անտեսելով որակը, որ այնքա՛ն տարբերութիւն կը ստեղծէ մէկ անհատին եւ միւսին միջեւ...Բայց ո՞վ պիտի կարենայ սահմանել որակը, ո՞վ պիտի կարենայ չափորոշիչներ գտնել արժեւորելու համար զայն...Քանակն է որ վճռորոշ է իշխանութեանց ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ պարագային եւ ուրիշ շատ ու շատ ոլորտներէն ներս...Մինչդեռ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԱԿԸ այնքան կարեւոր ու էական է հասարակական կեանքի բոլոր ոլորտներէն ներս ալ: Ժողովրդավարութիւնը կրնայ այլապէս դիրքաւ դառնալ ամբոյսավարութիւն:

.....

ԵՐԿԻՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԻՄՔԵՐՈՒ ՀԻՄՔԸ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ Է...Սա քանիցս ըսուած խօսք է, որուն ճշմարտացիութեան աւելի ու աւելի կը համոզուիմ տակաւ: Լեզուն միայն հաղորդակցութեան միջոց չէ, ան մեր ազգային հոգեբանութիւնն ու մտածողութիւնն է, մեր



ինքնուրոյն աշխարհընկալումը, աշխարհայեացքը, նկարագիրն ու ինքնութիւնը...Հետեւաբար, անոր նկատմամբ մեր վերաբերմունքը ազգային-պետական քաղաքականութիւն ըլլալու է, քանզի առանց մեր լեզուին, առանց մեր ինքնութեան վկայականին, մենք կը դառնանք համանման այլ երկիրներու, այլ ժողովուրդներու, կը կորսնցնենք ՄԵՐ ՏԵՍԱԿԸ, որով պայմանաւոր է ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

.....

Աղօթքի պէս կը հնչեն Վահան Թեքեանի խորիմաստ տողերը. «Թող սասանին ու փշրին բարձր բերդերն անառիկ Ու իյնան վար պատնէշները զրահապատ ետութեանց»...Իսկապէս ալ, եթէ այդ ետութեանց պատնէշները իյնան, մենք՝ ազգովին կրնանք սիրտով, հոգիով, միտքով ու կամքով քով-քովի գալ եւ դառնալ անպարտելի, հզօր, անխորտակելի ՄԵՆՔ...Իսկ հայ կեանքին մէջ ի մասնաւորի, այդ «ետութիւնները» անչափ շատ են, շատ անգամ անյաղթահարելի...եւ դար ու դարեր արգելակեր են հզօր ՄԵՆՔ-ի մը կերտումը:

.....

Անկեղծութիւնը ինքնին բարոյական հզօր ոյժ ունի...Ան մթնոլորտ կը ստեղծէ...Անկեղծ մարդուն անկեղծ խօսքին ու վարուելակերպին դիմաց, կեղծիքն ու սուտը կարծէք կը նահանջեն, կը պարտուին ժամ առ ժամ, դիմակները վար կ'առնուին, մարդը կը դառնայ թափանցիկ՝ իր խոհերով եւ ապրումներով, քանզի անկեղծութիւնը իր վարակիչ ոյժով կը փոխանցուի մարդէ-մարդ, սիրտէ-սիրտ...Իսկ կա՞յ աւելի թանկ բան, քան երբ համայնքին, ազգին ու երկրին հոգեբարոյական մթնոլորտը կը շնչէ անկեղծութեամբ, մաքրութեամբ, սուտի, կեղծիքի աղտերէն ու ախտերէն ձերբազատ:

.....

Ամէն մարդ աշխարհն ու կեանքը կը դիտէ իր պրիսմակէն, իր տեսանկիւնէն, յաճախ իր բաղձանքը որպէս իրականութիւն ընկալելով...Շատ քիչեր կրնան յաղթահարել իրենց նեղ ԵՍ-ը, իդէերն ու պատրանքները եւ լայնահորիզոն տեսադաշտ ու մտածողութիւն մշակել: Դաստիարակութիւնը գուցէ ուղղուած պէտք է ըլլայ այս լայնախոհութիւնը մշակելու կարելոր նպատակին մասնաւորապէս...

.....

Անհատն ու ազգային հաւաքականութիւնը մշտապէս ինքնանորոգուելու կենսական կարիքն ունին, որ չլճանան, չճահճանան, նոյնանման սխալներու ոլորապտոյտին մէջ չխեղդուին...ինքնամաքրուելու համար, նոր հորիզոններուն բացուելու համար, նորոգ ուժով խթանուելու համար...Իսկ ինքնանորոգումը սեփական սխալներու ինքնախոստովանանք եւ ապաշխարանք է առաջին հերթին, որմէ ետք միայն կարելի կ'ըլլայ վերածնութեան մը յոյսը փայփայել...

.....



Ամենէն տխուր մարդն է գուցէ որ ուրախ, ուրախացնող, յոյս ու լոյս ներշնչող տողեր կը գրէ... քանզի ան միայն գիտէ՝ սփռփելով սփռփուելու, ուրախացնելով ուրախանալու, յուսադրելով յուսադրուելու խորհուրդը խորին...Իսկ շատեր նմանները կրնան անզգամ կարծել, մինչդէռ անոնք ամենէն զգայուն հոգիներն են...Վաղամեռիկ պատանի մեծ բանաստեղծ ՄԵԾԱՐԵՆՅԸ պիտի ըսէր. «Շողա՛, շողա՛ բարի արեւ, հիւանդ եմ...»

.....

Երբ Հայոց Պատմութեան էջերը կը կարդաս, ողջ էութեամբ կը սարսռաս՝ Արտագաղթի տխուր երեւոյթին դէմ յանդիման, որ շարունակ կրկնուեր է տարբեր ժամանակներուն, տարբեր պատճառաբանութիւններով...Կը մտաբերեմ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ խորիմաստ պատգամը ուղղուած իր թոռնիկին. «Քեզ հողին հետ պիտի պսակեմ...»: Հայը ընդհանրապէս չէ կրցած իր հողին հետ պսակուիլ, իր հողին հետ միաձուլուիլ, նոյնանալ, եւ իր բախտը՝ շատ անգամ, մինչեւ հիմա, որոնք է եւ դեռ կ'որոնէ օտար երկինքներու տակ: ՕՏԱՐ ՀՈՂԸ ԵՐԲԵՔ ՀԱՅՐԵՆԻՔ ՉԻ ԴԱՌՆԱԸ, նոյնիսկ եթէ դրախտանման կեանք կարելի ըլլայ կերտել այդտեղ:

.....

Չանգուածային «մշակոյթ»ը, իր զանգուածային ապրելակերպով, զանգուածային չարժեքներով, զանգուածային սպառման ապրանքներով, զանգուածային ճաշակով, զանգուածային մտայնութեամբ մարդ էակը հոգեզրկելու կը ծառայէ, զայն համահարթեցնելով եւ լոկ թիւի մը վերածելով...Մինչդէռ հոգին եզակի է եւ ինքնուրոյն:

.....

ՉԵԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ կը թուի թէ դարձեր է մեր ժամանակներու ապրելաոճը: Մարդիկ կը ձեւացնեն թէ կը սիրեն զիրար, կը ձեւացնեն թէ կարելոր գործ մը կ'ընեն, թէ հայրենասէր են, դպրոցասէր, ազգասէր, բարեկամասէր...: Եթէ հայեացքդ ուղղես մակերեսէն դէպի խորքը, անմիջապէս կը յայտնուի բուն ճշմարտութիւնը: Որքա՛ն հագուագիւտ են արդարեւ անոնք որոնք իսկապէս, ճշմարտօրէն եւ էութեամբ կը սիրեն հայրենիքը, ազգը, մարդ-անհատը... իրենց գործը կ'ընեն համակ նուիրումով, պատասխանատուութեամբ, անսակարկ ու անկաշառ: Աշխարհ որոշապէս շատ տարբեր պիտի ըլլար, եթէ ձեւականութիւնը դառնար խորքին հետ ներդաշնակ, եթէ ձեւն ու խորքը լրացնէին զիրար առնուազն, եթէ խորքը նոյնիսկ տիրապետէր ձեւին եւ ոչ՝ հակառակը:

Երան Գույումճեան

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Մենք միաբան չեղանք բռնաւ,
Կտո՛ր-կտո՛ր մասնատուեցանք,
Միաւորուած ուժը ազգի
Հօր է քան հրրետանի:

.....

Ես չգիտցայ գաղտնիքը խոր
Հրաշք ծնունդին իմ տողերուս,
Որ մերթ ծնան շատ ինքնաբուխ,
Մերթ՝ երկունքով մը տանջակոծ...

.....

Պահեր կան սուրբ, արարչական,
Երբ երկինքէն լոյս կը տեղայ՝
Բեղուն մտքի, վառ յոյզերու,
Աշխարհ մը նոր կ'առնէ ծնունդ:

.....

Մի դներ յոյսդ այլոց օգնութեան,
Ապաւինէ լոկ ոյժիդ սեփական,
Յայնժամ միայն դուն կը զօրանաս
Եւ կրնաս կանգնիլ ոտքերուդ վրայ:

.....

Կեանքիդ ամէն ակնթարթը
Արժեւորէ, ան ետ չի գար



Համակ կեանք մը գետի նման
Կ'անցնի, կ'երթայ արագընթաց...

.....

Թէ կարենաս մաքրել հոգիդ
Աղտ ու տիղմէն այնտեղ նստած,
Կը դառնաս ազգ անպարտելի,
Կամքով հօր ու անասան:

.....

Կոտրէ՛ գրիչդ եւ հեռացի՛ր,
Թէ սրտիդ մէջ չունիս հաւատք,
Գիրը միայն Արարիչին
Ընծայում մ'է հոգեպարար:

.....

Այրումներէդ թող լոյս ծագի,
Հրաշէկ փարի այրած սրտին,
Միրտը սիրտով բալասանուի,
Միրտը սիրտով լուսաւորուի...

.....

Հայուն չափն է չափազանցը,
Գագաթ-անդունդ է իր հողը,
Հայը չունի միջին ճամբայ,
Մեւ կամ սպիտակ է ամէն բան:

.....

Ճիշդ խօսիլը իր գինն ունէր
Ես գայն լման վճարեցի,
Ազատութեան շունչն էր վսեմ
Մաքուր խղճիս հետ միասին...

.....

Դրամն է չաստուածը նոր դարի,
Չափանիշը լաւի, վատի,
Տընօրինէ վարքն ու բարքը,
Կենսակերպն ու արժէքները:

.....

Այս դարուն մէջ, լաւը մոմով պիտի փնտռես,
Ու երբ գտնես, պիտ' փայփայես որ չկորի.
Անապատին մէջ ծաղ'կին պէս պիտ' խընամես,
Որ մէկն դառնայ տասը, հազար, բիրապատիկ...

Երան Գույումճեան